| | Ընդամենը | | | | 900 | 6,627 |

*«Դիակոնիա» բարեգործական հիմնադրամի փոխտնօրեն՝* *Հ. Ղազարյան*

## Բեռի բաշխման ցանկ

ինվոյս 05727 30.01.2014

| N N | Ապրանքի անվանումը | Չափի միավոր | Քանակը | Շահառուները ըստ մարզերի | Շահառուների քանակը | Արժեքը ըստ փաթեթների (ԱՄՆ-ի դոլար) |
|---|---|---|---|---|---|---|
| 11 | Տիկնիկ | հատ | 800 | Գեղարքունիքի մարզ | Գետիկ 18 | 143 |
| | | | | | Այգուտ 35 | 278 |
| | | | | | Մարտունի 15 | 119 |
| | | | | | Դպրաբակ 12 | 95 |
| | | | | | Վահան 44 | 349 |
| | | | | | Կալավան 7 | 56 |
| | | | | | Բարեպատ 1 | 8 |
| | | | | | Ջորավանք 7 | 56 |
| | | | | | Անտառամեջ 2 | 16 |
| | | | | | Գավառ 14 | 111 |
| | | | | | Թթուջուր 16 | 127 |
| | | | | Արմավիրի մարզ | Արտաշար 9 | 71 |
| | | | | Արարատի մարզ | Վեդի 3 | 24 |
| | | | | | Արտաշատ 2 | 16 |
| | | | | | Գետազատ 2 | 16 |
| | | | | | Մրգանուշ 1 | 8 |
| | | | | Կոտայքի մարզ | Չարենցավան 1 | 8 |
| | | | | | Սևաբերդ 3 | 24 |
| | | | | | Զորաղբյուր 3 | 24 |
| | | | | | Աբովյան 5 | 40 |
| | | | | Լոռու մարզ | Վանաձոր 10 | 79 |
| | | | | Տավուշի մարզ | Իջևան 5 | 40 |
| | | | | Երևան | 585 | 4,643 |
| | Ընդամենը | | | | 800 | 6,350 |

*«Դիակոնիա» բարեգործական հիմնադրամի փոխտնօրեն՝* *Հ. Ղազարյան*

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**

**14 մարտի 2014 թվականի N Մ-162-Ա**
**քաղ. Երևան**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2013 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 15-Ի N Մ-078-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ՄԱՍԻՆ N 1**
**(Գիտության և առաջատար տեխնոլոգիաների ազգային հիմնադրամ)**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2014 թվականի մարտի 5-ի N 3/3.8-2/3303-14 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2014 թվականի մարտի 3-ի N ՎՄ/3-4/2303-14 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Սահմանել, որ Գիտության և առաջատար տեխնոլոգիաների ազգային հիմնադրամի կողմից ձեռք բերված փայտի փորագրման հաստոցը և պլյումինե թիթեղը (մեկ տեղ, 36.3 կգ ընդհանուր քաշով, 1,418.21 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ արժողությամբ, փոխադրման ծախսերը կազմել են 563.68 ԱՄՆ-ի դոլար, «ՄՓ և ՍԱՓԱՄ» ՄՏ) ներմուծվում են Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2013 թվականի փետրվարի 15-ի «Գիտության և առաջատար տեխնոլոգիաների ազգային հիմնադրամի կողմից իրականացվող «2013-2014 թվականների ընթացքում Հայաստանի Հանրապետության գիտական ենթակառույցի պահպանման և հետագա զարգացման աջակցություն» ծրագրի մասին» N Մ-078-Ա որոշմամբ հաստատված (2013 թվականի հուլիսի 19-ի N Մ-647-Ա որոշման խմբագրությամբ) ծրագրի շրջանակներում և անհատույց հանձնվելու է «Երևանի պետական համալսարան» ՊՈԱԿ-ին:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

**14 մարտի 2014 թվականի N Մ-163-Ա**
**քաղ. Երևան**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱ-ԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2013 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 15-Ի N Մ-078-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱ-ՆԱԿՆԵՐՈՒՄ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ՄԱՍԻՆ N 2

**(Գիտության և առաջատար տեխնոլոգիաների ազգային հիմնադրամ)**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2014 թվականի մարտի 6-ի N 3/3.8-2/3276-14 և Հայաստանի Հանրապետության կառավարության առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2014 թվականի մարտի 3-ի N ՎԱ/3-4/2304-14 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Սահմանել, որ Գիտության և առաջատար տեխնոլոգիաների ազգային հիմնադրամի կողմից ձեռք բերված լաբորատոր ախտորոշիչ նյութերը (մեկ տեղ, 2.5 կգ ընդհանուր քաշով, 2,516 եվրոյին համարժեք դրամ արժողությամբ, փոխադրման ծախսերը կազմել են 58 եվրո, «ՄՓ և ՍԱՓԱՄ» ՄՏ) ներմուծվում են Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2013 թվականի փետրվարի 15-ի «Գիտության և առաջատար տեխնոլոգիաների ազգային հիմնադրամի կողմից իրականացվող «2013-2014 թվականների ընթացքում Հայաստանի Հանրապետության գիտական ենթակառույցի պահպանման և հետագա զարգացման աջակցություն» ծրագրի մասին» N Մ-078-Ա որոշմամբ հաստատված (2013 թվականի հուլիսի 19-ի N Մ-647-Ա որոշման խմբագրությամբ) ծրագրի շրջանակներում և անհատույց հանձնվելու են Հայաստանի Հանրապետության գիտությունների ազգային ակադեմիայի «Մոլեկուլյար կենսաբանության ինստիտուտ» ՊՈԱԿ-ին:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**14 մարտի 2014 թվականի N Մ-164-Ա**
**քաղ. Երևան**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2013 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 20-Ի N Մ-1222-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԲԵՌՆԵՐԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ՄԱՍԻՆ

**(«Սիմոնյան» կրթական հիմնադրամ)**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2014 թվականի մարտի 7-ի N 3/3.8-2/3432-14 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2014 թվականի մարտի 5-ի N ՎՄ/3-4/2447-14 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Սահմանել, որ «Սիմոնյան» կրթական հիմնադրամի կողմից ձեռք բերված՝ ստորև նշված ապրանքները ներմուծվում են Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2013 թվականի դեկտեմբերի 20-ի «Սիմոնյան» կրթական հիմնադրամի կողմից իրականացվող «Ստեղծարար տեխնոլոգիաների կենտրոն» ծրագրի մասին» N Մ-1222-Ա որոշմամբ հաստատված ծրագրի շրջանակներում՝

1) «Apple MacBook Air A1466» դյուրակիր համակարգիչ, մալուխներ, կոնտակտային տարրեր և ամրակային դետալներ՝ մեկ տեղ, 14 կգ ընդհանուր քաշով, 1,679.18 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ արժողությամբ, փոխադրման և այլ ծասերը կազմել են 199.42 ԱՄՆ-ի դոլար, «Ջվարթնոց» ՄՏ.

2) «Nikon D3200» թվային ֆոտոխցիկ՝ 3 տեղ (15 հատ), 44 կգ ընդհանուր քաշով, 9,240 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ արժողությամբ, փոխադրման ծախսերը կազմել են 60 ԱՄՆ-ի դոլար, «Ջվարթնոց» ՄՏ.

3) համակարգչային երաժշտական ստեղնաշար՝ 3 տեղ (6 հատ), 27.12 կգ ընդհանուր քաշով, 3,234 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ ընդհանուր արժողությամբ՝ ներառյալ փոխադրման ծախսերը, «ՄՓ և ՍԱՓԱՄ» ՄՏ:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

**14 մարտի 2014 թվականի N Մ-165-Ա**
**քաղ. Երևան**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՄԱՐԴԱՍԻՐԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2001 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 10-Ի N Մ-328 ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻՆ ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔԻ ՄԱՍԻՆ
**(«Դիակոնիա» բարեգործական հիմնադրամ)**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2014 թվականի մարտի 6-ի N 3/3.8-2/3359-14 և Հայաստանի Հանրապետության կառավարության աշխատակազմի 2014 թվականի մարտի 5-ի N ՎՄ/3-4/2442-14 եզրակացությունները,* ***ո ր ո շ ո ւ մ  է.***

1. Սահմանել, որ «Դիակոնիա» բարեգործական հիմնադրամի կողմից (քաղ. Երևան, Աշտարակի խճուղի, «Հույսի ավան» թաղամաս, ՀՎՀՀ՝ 00068196) կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքն անմիջականորեն կապված է Հայաստանի Հանրապետության կառավարության մարդասիրական օգնության կենտրոնական հանձնաժողովի 2001 թվականի հոկտեմբերի 10-ի «Դիակոնիա» բարեգործական հիմնադրամի «Հույսի ավան» ծրագրի մասին» N Մ-328 որոշմամբ (Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2008 թվականի հունիսի 8-ի N Մ-056-Ա որոշման խմբագրությամբ) հաստատված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

«Այ Թի էս Մաքս» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 01401885) 2014 թվականի փետրվարի 26-ին կնքված՝ N ITS/DKN 14-01 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է սարքավորումների ձեռքբերման և տեղադրման աշխատանքների իրականացում՝ 651,600 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

2. Սույն որոշման ուժի մեջ Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարության աշխատակազմի կողմին:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**

**14 մարտի 2014 թվականի N Մ-166-Ա**
**քաղ. Երևան**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2011 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 18-Ի N Մ-042-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻՆ ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔԻ ՄԱՍԻՆ**
**(«ԱՌԴԱ» առողջապահական և աջակցման կենտրոն»բարեգործական հիմնադրամ)**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2014 թվականի փետրվարի 28-ի N 3/3.8-2/2967-14 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2014 թվականի փետրվարի 25-ի N ՎՄ/3-4/2101-14 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ  է.***

1. Սահմանել, որ «ԱՌԴԱ» առողջապահական և աջակցման կենտրոն» բարեգործական հիմնադրամի կողմից (ՀՀ, քաղ. Գյումրի, Մովսես Խորենացու 19, ՀՎՀՀ՝ 05531591) կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքն անմիջականորեն կապված է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2011 թվականի փետրվարի 18-ի «ԱՌԴԱ» առողջապահական և աջակցման կենտրոն» բարեգործական հիմնադրամի կողմից իրականացվող «Շիրակ» բժշկական ծառայություններ» ծրագրի մասին» N Մ-042-Ա (2013 թվականի փետրվարի 15-ի N Մ-101-Ա որոշման խմբագրությամբ) որոշմամբ հաստատված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

«Պրոգրես-աուդիտ» ՓԲԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 01012831) 2013 թվականի փետրվարի 5-ին կնքված՝ N 02-05/01 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է հիմնադրամի 2013 թվականի գործունեության տարեկան ֆինանսական հաշվետվությունների աուդիտ ուսումնասիրության և հաշվեքննության աշխատանքների իրականացում՝ 500,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**

**14 մարտի 2014 թվականի N Մ-167-Ա**
**քաղ. Երևան**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱ-ԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2011 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 18-Ի N Մ-043-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻՆ ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔԻ ՄԱՍԻՆ**
**(«ԱՌԴԱ» բարեգործական հիմնադրամ)**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգ-ման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարու-թյան 2014 թվականի փետրվարի 28-ի N 3/3.8-2/2957-14 և Հայաստանի Հանրապետության կառա-վարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2014 թվականի փետրվարի 25-ի N ՎՄ/3-4/2100-14 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Սահմանել, որ «ԱՌԴԱ» բարեգործական հիմնադրամի կողմից (ՀՀ, քաղ. Երևան, Պարույր Սևակի 9, ՀՎՀՀ՝ 00057312) կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքն անմիջականորեն կապված է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2011 թվականի փետրվարի 18-ի «ԱՌԴԱ» բարեգործական հիմնադրամի կողմից իրականացվող «Գյումրի -ԱՌԴԱ» ծրագրի մասին» N Մ-043-Ա (2012 թվականի մարտի 23-ի N Մ-188-Ա որոշման խմբագրությամբ) որոշմամբ հաստատված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակու-թյուն՝

«Պրոգրես-աուդիտ» ՓԲԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 01012831) 2013 թվականի փետրվարի 13-ին կնքված՝ N 02-13/05 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է հիմնադրամի 2013 թվականի գործունեության տարեկան ֆինանսական հաշվետվությունների աուդիտ ուսումնասիրության և հաշվեքննության աշխատանքների իրականացում՝ 583,333 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարա-րություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**14 մարտի 2014 թվականի N Մ-168-Ա**
**քաղ. Երևան**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2011 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՍԻ 22-Ի N Մ-565-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻՆ ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔԻ ՄԱՍԻՆ

**(«Սիմոնյան» կրթական հիմնադրամ)**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2014 թվականի փետրվարի 28-ի N 3/3.8-2/2956-14 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2014 թվականի փետրվարի 25-ի N ՎՄ/3-4/2084-14 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ   է.***

1. Սահմանել, որ «Սիմոնյան» կրթական հիմնադրամի կողմից (ՀՎՀՀ՝ 01245672) կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքն անմիջականորեն կապված է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2011 թվականի հուլիսի 22-ի «Սիմոնյան» կրթական հիմնադրամի կողմից իրականացվող «Հովհաննես Թումանյանի անվան գրասայգու վերանորոգման, վերակառուցման և պահպանման» ծրագրի մասին» N Մ-565-Ա որոշմամբ (2012 թվականի հունիսի 8-ի N Մ-407-Ա որոշման խմբագրությամբ) հաստատված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

«Գեղարվեստի կոմբինատ» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 00875335) 2014 թվականի փետրվարի 11-ին կնքված պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է մետաղական դռան և շերտափեղկի պատրաստման ու տեղադրման աշխատանքների իրականացում՝ 180,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ**
**ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

**14 մարտի 2014 թվականի N Մ-169-Ա**
**քաղ. Երևան**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2013 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 20-Ի N Մ-1222-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻՆ ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔԻ ՄԱՍԻՆ

**(«Սիմոնյան» կրթական հիմնադրամ)**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2014 թվականի փետրվարի 28-ի N 3/3.8-2/2958-14 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2014 թվականի փետրվարի 25-ի N ՎՄ/3-4/2098-14 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ   է.***

1. Սահմանել, որ «Սիմոնյան» կրթական հիմնադրամի կողմից (ՀՎՀՀ՝ 01245672) կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքն անմիջականորեն կապված է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2013 թվականի դեկտեմբերի 20-ի «Սիմոնյան» կրթական հիմնադրամի կողմից իրականացվող «Ստեղծարար տեխնոլոգիաների կենտրոն» ծրագրի մասին» N Մ-1222-Ա որոշմամբ հաստատված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

«Սոֆթ թայմ» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 02608299) 2014 թվականի փետրվարի 12-ին կնքված պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է 20 հատ iPad-ի ընթացիկ սպասարկման ծառայությունների մատուցում՝ 188,200 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ                                                  Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

# Ո Ր Ո Շ Ու Մ

**14 մարտի 2014 թվականի N Մ-170-Ա**
**քաղ. Երևան**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2013 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 20-Ի N Մ-1222-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻՆ ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔԻ ՄԱՍԻՆ N 1

**(«Սիմոնյան» կրթական հիմնադրամ)**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2014 թվականի մարտի 5-ի N 3/3.8-2/3261-14 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2014 թվականի մարտի 3-ի N ՎՄ/3-4/2315-14 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ  է.***

1. Սահմանել, որ «Սիմոնյան» կրթական հիմնադրամի կողմից (ՀՎՀՀ՝ 01245672) կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքն անմիջականորեն կապված է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2013 թվականի դեկտեմբերի 20-ի «Սիմոնյան» կրթական հիմնադրամի կողմից իրականացվող «Ստեղծարար տեխնոլոգիաների կենտրոն» ծրագրի մասին» N Մ-1222-Ա որոշմամբ հաստատված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

«Ինֆորմատիկ սոլուշն» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 00061961) 2014 թվականի փետրվարի 17-ին կնքված պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է սարքավորման տեխնիկական սպասարկման և նույն սարքավորման պահեստամասերի տրամադրման ծառայությունների մատուցում՝ 297,500 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ                                        Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**14 մարտի 2014 թվականի N Մ-171-Ա**
**քաղ. Երևան**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2013 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 4-Ի N Մ-867-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻՆ ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔԻ ՄԱՍԻՆ

**(«Էյ Թի Փի» բարեգործական հիմնադրամ)**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2014 թվականի փետրվարի 28-ի N 3/3.8-2/2959-14 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2014 թվականի փետրվարի 25-ի N ՎՄ/3-4/2099-14 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Սահմանել, որ «Էյ Թի Փի» բարեգործական հիմնադրամի կողմից (ՀՎՀՀ՝ 02554563) կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքն անմիջականորեն կապված է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2013 թվականի հոկտեմբերի 4-ի «Էյ Թի Փի» բարեգործական հիմնադրամի կողմից իրականացվող «Հայաստանի և Լեռնային Ղարաբաղի Հանրապետություններում ծառատնկի իրականացում» ծրագրի մասին» N Մ-867-Ա որոշմամբ հաստատված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

«Էյ-Ի-Ջի-սերվիս» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 00930884) 2014 թվականի փետրվարի 2-ին կնքված՝ N Ե-427 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է գազապառման համակարգի տեխնիկական սպասարկման և կարգաբերման աշխատանքների իրականացում՝ 79,402 դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ | Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**14 մարտի 2014 թվականի N Մ-172-Ա**
**քաղ. Երևան**

### ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2013 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՍԻ 19-Ի N Մ-648-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՈՒ ԿԻՑ ԾՐԱԳՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԵՎ ՆՈՒՅՆ ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻՆ ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

**(«Յանգ լայֆ» ոչ առևտրային կազմակերպության հայաստանյան մասնաճյուղ)**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2014 թվականի մարտի 5-ի N 3/3.8-2/3211-14 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2014 թվականի փետրվարի 28-ի N ՎՄ/3-4/2255-14 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ  է.***

1. Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2013 թվականի հուլիսի 19-ի «Յանգ լայֆ» ոչ առևտրային կազմակերպության հայաստանյան մասնաճյուղի կողմից իրականացվող «Փյունիկ» ամառային ճամբար» ծրագրի մասին» N Մ-648-Ա որոշման մեջ և կից ծրագրում կատարել հետևյալ փոփոխությունները՝

1) որոշման 1-ին և կից ծրագրի 6-րդ կետերում «1,999,890,000 դրամ» բառերը փոխարինել «2,030,460,400 դրամ» բառերով.

2) որոշմանը կից ծրագրի 9-րդ կետում «1,006,950,000 դրամ» բառերը փոխարինել «1,037,520,400 դրամ» բառերով.

3) որոշմանը կից ծրագրի 10-րդ կետի 1-ին փուլի 2-րդ ենթակետում «62,250,000 դրամ» բառերը փոխարինել «92,820,400 դրամ» բառերով:

2. Սահմանել, որ «Յանգ լայֆ» ոչ առևտրային կազմակերպության հայաստանյան մասնաճյուղի կողմից (ՀՎՀՀ՝ 01255848) կնքված՝ ստորև նշված պայմանագրերով նախատեսված գործարքներն անմիջականորեն կապված են սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունեն զգալի նշանակություն՝



1) «Ճաննախագիծ» ինստիտուտ» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 00813453) 2014 թվականի փետրվարի 13-ին կնքված՝ N ԿԱ-Ճ-ՀՀ-1/2014 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է շինարարության հեղինակային հսկողության աշխատանքների իրականացում՝ 378,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի.

2) «Հալդի քոնսալթ» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 08417251) 2014 թվականի փետրվարի 14-ին կնքված՝ N ԿԱ-Ճ-ՏՀ-1/2014 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է շինարարության տեխնիկական հսկողության աշխատանքների իրականացում՝ 780,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի.

3) «Հիդրոիզալիացիա-Տ.Վ.» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 03011107) 2014 թվականի փետրվարի 15-ին կնքված՝ N 14-01 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է կամրջի կառուցման շինարարական աշխատանքների իրականացում՝ 81,462,400 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

3. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ — Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

N: 15/15.6/3511-14
14.03.2014 թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**

**14 մարտի 2014 թվականի N Մ-173-Ա**
**քաղ. Երևան**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2014 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 14-Ի N Մ-055-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**
(ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտե)

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2014 թվականի մարտի 3-ի N 3/3.8-2/3064-14 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2014 թվականի փետրվարի 28-ի N ՎԱ/3-4/2252-14 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2014 թվականի փետրվարի 14-ի «Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2013 թվականի փետրվարի 15-ի N Մ-093-Ա որոշմամբ հաստատված ծրագրի շրջանակներում բեռի ներմուծման մասին (ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտե)» N Մ-055-Ա որոշման 1-ին կետում «282,772.35 նորվեգական կրոնին համարժեք դրամ» բառերը փոխարինել «299,005.47 նորվեգական կրոնին համարժեք դրամ» բառերով:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտե և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ | Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

**14 մարտի 2014 թվականի N Մ-174-Ա**
**քաղ. Երևան**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2012 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 7-Ի N Մ-170-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԵՎ ՆՈՒՅՆ ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

**(«ԱՌԴԱ» բարեգործական հիմնադրամ)**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2014 թվականի մարտի 5-ի N 3/3.8-2/3264-14 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2014 թվականի փետրվարի 28-ի N ՎՄ/3-4/2250-14 եզրակացությունները, ինչպես նաև «ԱՌԴԱ» բարեգործական հիմնադրամի 2014 թվականի փետրվարի 11-ի N Կ-11/02 գրությունը,* ***ո ր ո շ ու մ  է.***

1. Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2012 թվականի մարտի 7-ի «ԱՌԴԱ» բարեգործական հիմնադրամի կողմից իրականացվող «Բարեկեցիկ մանկություն և ծերություն 3» ծրագրի մասին» N Մ-170-Ա որոշման մեջ և կից ծրագրում կատարել հետևյալ փոփոխությունները՝

1) որոշման 1-ին կետում «370500000 դրամ» բառերը փոխարինել «750,500,000 դրամ» բառերով.

2) ծրագրի 6-րդ կետում «370,500,000 դրամ» բառերը փոխարինել «750,500,000 դրամ» բառերով.

3) ծրագրի 9-րդ կետում «346,000,000 դրամ» բառերը փոխարինել «726,000,000 դրամ» բառերով.

4) ծրագրի 10-րդ կետում «316,000,000 դրամ» բառերը փոխարինել «696,000,000 դրամ» բառերով:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ　　　　　　　　　　Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**14 մարտի 2014 թվականի N Մ-175-Ա**
**քաղ. Երևան**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2012 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 30-Ի N Մ-946-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ Մ Ա Ս Ի Ն

**(«Հրայր և Աննա Հովնանյան ֆաունդեյշն» կորպորացիայի մասնաճյուղ)**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2014 թվականի փետրվարի 28-ի N 3/3.8-2/2960-14 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2014 թվականի փետրվարի 25-ի N ՎՄ/3-4/2104-14 եզրակացությունները, ինչպես նաև հաշվի առնելով «Հրայր և Աննա Հովնանյան ֆաունդեյշն» կորպորացիայի մասնաճյուղի 2014 թվականի փետրվարի 12-ի գրությունը,* ***ո ր ո շ ու մ   է.***

1. Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2012 թվականի նոյեմբերի 30-ի «Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2010 թվականի մարտի 19-ի N Մ-176-Ա որոշմամբ հաստատված ծրագրում փոփոխություններ կատարելու և նույն ծրագրին հարակից գործարքների մասին» N Մ-946-Ա որոշման (2013 թվականի հունվարի 25-ի N Մ-049-Ա, մարտի 15-ի N Մ-148-Ա, հունիսի 7-ի N Մ-402-Ա, օգոստոսի 9-ի N Մ-680-Ա, սեպտեմբերի 13-ի N Մ-768-Ա և հոկտեմբերի 4-ի N Մ-861-Ա որոշումների խմբագրությամբ) 2-րդ կետի 5-րդ ենթակետում «172,697,293 դրամի չափով» բառերը փոխարինել «198,614,573 դրամի չափով» բառերով:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ                                        Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

**14 մարտի 2014 թվականի N Մ-176-Ա**
**քաղ. Երևան**

## «ԱՌԴԱ» ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ ԾՐԱԳՐԵՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ՄԱՍԻՆ

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2014 թվականի մարտի 5-ի N 3/3.8-2/3304-14, Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության 2014 թվականի մարտի 3-ի N ՖԲ/ԱնՄ-4/1287-14, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության 2014 թվականի փետրվարի 27-ի N ԴԴ/22/1756-14 ու Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2014 թվականի փետրվարի 27-ի N ՎՄ/3-4/2247-14 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ  է.***

1. Սահմանել, որ «ԱՌԴԱ» բարեգործական հիմնադրամի հասցեով ԱՄՆ-ի Միացյալ հայկական հիմնադրամի միջոցով ուղարկված բեռը (23 տեղ, 18,655.8 կգ ընդհանուր քաշով, 110,000 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ արժեքով, փոխադրման ծախսերը կազմել են 7,109 ԱՄՆ-ի դոլար, «Արարատյան» ՏՄ) ներմուծվում է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2010 թվականի ապրիլի 19-ի NN Մ-177-Ա (2011 թվականի հոկտեմբերի 31-ի N Մ-915-Ա որոշման խմբագրությամբ) և Մ-182-Ա (2012 թվականի նոյեմբերի 9-ի N Մ-896-Ա որոշման խմբագրությամբ), 2011 թվականի փետրվարի 18-ի NN Մ-042-Ա, Մ-044-Ա, Մ-045-Ա (2014 թվականի մարտի 14-ի N Մ-181-Ա որոշման խմբագրությամբ), Մ-047-Ա, Մ-049-Ա և Մ-050-Ա, ապրիլի 1-ի N Մ-228-Ա ու 2012 թվականի ապրիլի 7-ի N Մ-170-Ա (2014 թվականի մարտի 14-ի N Մ-174-Ա որոշման խմբագրությամբ) որոշումներով հաստատված ծրագրերի շրջանակներում (բեռի և բաշխման ցանկը կցվում է):

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե, Երևանի, Գյումրի և Վանաձորի քաղաքապետերին:

ՆԱԽԱԳԱՀ — Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

**HLXU 434763 - 8 բեռնարկղի բեռի և բաշխման ցանկ**

Տեղերի քանակը՝23, ընդհանուր քաշը՝18655.8 կգ, բեռի արժեքը կազմում է 110000 ԱՄՆ-ի դոլար, տրանսպորտային ծախսերը 7109 ԱՄՆ-ի դոլար

| Ապրանքի անվանումը | Քանակը ըստ չափման միավորի / պալետ / | Ընդհ. քաշը /կգ/ | Արժեքը $ | ՀՀ ԿԲԾՀՀ որոշումները և շահառուները Ա 3/2.3 |
|---|---|---|---|---|
| | | | | **Մ-170-Ա առ 07.03.2012թ.** |
| Չորացրած միրգ | 16 | 700 | 3961.7 | «Յալեպ» հայրենակցական բարեսիրական ՀԿ |
| | | 1000 | 5659.0 | «Ղարաբաղյան պատերազմի վետերանների միություն» ՀԿ |
| | | 690 | 3905.0 | Շիրակի մարզի ավետարանական-մկրտ. եկեղեցի |
| | | 110 | 622.6 | Երևանի թիվ 30 մանկապարտեզ ՀՈԱԿ |
| | | 3935 | 22270.9 | Կարիքավոր քաղաքացիներ |
| | | 1100 | 6226.0 | Վանաձորի «ԱՌԴԱ» թաղամասի ընտանիքներ |
| | | 200 | 1132.0 | Վանաձորի թիվ 5 մանկապարտեզ |
| | | 1200 | 6791.6 | Արագածոտնի մարզի Լուսագյուղի համայնք |
| | | 200 | 1132.0 | Վանաձորի թիվ 30 մանկապարտեզ |
| | | 200 | 1132.0 | Վանաձորի թիվ 8 մանկապարտեզ |
| | | 200 | 1132.0 | Վանաձորի թիվ 2 մանկապատեզ |
| | | 200 | 1132.0 | Գյումրու «Երեխաների տուն» ՊՈԱԿ |
| | | 110 | 622.6 | Արմավիրի մարզի Գեղանիստի «Մանուշակ» մ/գ |
| | | 110 | 622.6 | Երևանի թիվ 46 մանկապարտեզ ՀՈԱԿ |
| | | 110 | 622.6 | Երևանի թիվ 78 մանկապարտեզ ՀՈԱԿ |
| | | 110 | 622.6 | Երևանի թիվ 139 մանկապարտեզ ՀՈԱԿ |
| | | 110 | 622.6 | Երևանի 149 մանկապարտեզ ՀՈԱԿ |
| | | 60 | 339.6 | Շիրակի մարզի Պեմզաշենի երաժշտական դպրոց |
| | | 110 | 622.6 | «Սահակ-Մեսրոպ» բարեգործական ՀԿ |
| | | 110 | 622.6 | Վանաձորի Տ. Չուխաջյանի անվան արվեստի դպրոց |
| | | 110 | 622.6 | Ապարանի թիվ 1 մանկապարտեզ |
| Չոր ապուր | 6 | 1200 | 6724.6 | ՀՀ աշխատանքի և սոցապ նախարարություն |
| | | 400 | 2241.5 | Երևանի թիվ 2 հատուկ /օժանդակ/ դպրոց ՊՈԱԿ |
| | | 200 | 1120.8 | «Ավագների ակումբ» ՀԿ |
| | | 200 | 1120.8 | «Լայթհաուս-Փարոս» բարեգործական հիմնադրամ |
| | | 383 | 2146.5 | Կարիքավոր քաղաքացիներ |
| | | 200 | 1120.8 | Վանաձորի «ԱՌԴԱ» թաղամասի ընտանիքներ |
| Մուլտիվիտամին | 1 | 30 | 756.3 | Գյումրու «Երեխաների տուն» ՀՈԱԿ |
| | | 20 | 504.2 | Ապարանի թիվ 1 մանկապարտեզ |
| | | 70 | 1764.7 | Կարիքավոր քաղաքացիներ |
| Չորացրած միրգ | | 300 | 1698.0 | **Մ-042-Ա առ18.02.2011 թ.** |
| Չոր ապուր | | 400 | 2241.5 | Գյումրու «ԱՌԴԱ» ԱԱԿ ԲՀ |
| Մուլտիվիտամին | | 38 | 958.0 | |
| Չորացրած միրգ | | 110 | 622.6 | **Մ-045-Ա առ 18.02.2011 թ.** |
| Չոր ապուր | | 100 | 560.3 | Գյումրու թիվ 10 մանկապարտեզ |
| Մուլտիվիտամին | | 10 | 252.1 | |
| Չորացրած միրգ | | 2390 | 13526.6 | **Մ-177-Ա առ 19.03.2010 թ.** |
| Չոր ապուր | | 1000 | 5603.8 | Գյումրու թիվ 6 նախակրթարան |
| Մուլտիվիտամին | | 50 | 1260.5 | |
| Չորացրած միրգ | | 110 | 622.6 | **Մ-044-Ա առ 18.02.2011 թ.** |
| | | | | Գյումրու «Անի Պարտեզ» նախակրթարան |
| Չորացրած միրգ | | 110 | 622.6 | **Մ-047-Ա առ 18.02.201 թ.** |
| | | | | Երևանի թիվ 99 մանկապարտեզ ՀՈԱԿ |

| | | | | |
|---|---|---|---|---|
| Չորացրած միրգ | | 110 | 622.6 | **Մ-049-Ա առ 18.02.2011 թ.**<br>Երևանի թիվ 104 մանկապարտեզ ՅՈԱԿ |
| Չորացրած միրգ | | 110 | 622.6 | **Մ-228-Ա առ 01.04.2011 թ.**<br>Երևանի թիվ 154 մանկապարտեզ ՅՈԱԿ |
| Չորցրած միրգ | | 110 | 622.6 | **Մ-050-Ա առ 18.02.2011 թ.**<br>Երևանի թիվ 156 մանկապարտեզ ՅՈԱԿ |
| Չորացրած միրգ<br>Չոր ապուր<br>Մուլտիվիտամին | | 110<br>199.8<br>20 | 622.6<br>1119.4<br>504.2 | **Մ-182-Ա առ 19.03.2010 թ.**<br>«Ջեյթուն» ուսումնական կենտրոն |
| ԸՆԴԱՄԵՆԸ | 23 | 18655.8 | 110000 | |

Տրանսպորտային ծախսեր 7109

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**14 մարտի 2014 թվականի N Մ-177-Ա**
**քաղ. Երևան**

## «ԱՌԴԱ» ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ ԾՐԱԳՐԵՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ՄԱՍԻՆ (N 1)

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2014 թվականի մարտի 11-ի N 3/3.8-2/3607-14, Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության 2014 թվականի մարտի 12-ի N ՖԲ/ԱնՄ-4/1482-14 ու Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2014 թվականի մարտի 10-ի N ՎՄ/3-4/2639-14 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ  է.***

1. Սահմանել, որ «ԱՌԴԱ» բարեգործական հիմնադրամի հասցեով ԱՄՆ-ի Միացյալ հայկական հիմնադրամի միջոցով ուղարկված բեռը (695 տեղ, 9,595 կգ ընդհանուր քաշով, 225,051 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ արժեքով, փոխադրման ծախսերը կազմել են 9,476 ԱՄՆ-ի դոլար, «Արարատյան» ՏՄ) ներմուծվում է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2010 թվականի ապրիլի 19-ի NN Մ-177-Ա (2011 թվականի հոկտեմբերի 31-ի N Մ-915-Ա որոշման խմբագրությամբ) և Մ-182-Ա (2012 թվականի նոյեմբերի 9-ի N Մ-896-Ա որոշման խմբագրությամբ), 2011 թվականի փետրվարի 18-ի NN Մ-042-Ա և Մ-050-Ա, ապրիլի 1-ի N Մ-228-Ա ու 2012 թվականի ապրիլի 7-ի N Մ-170-Ա (2014 թվականի մարտի 14-ի N Մ-174-Ա որոշման խմբագրությամբ) որոշումներով հաստատված ծրագրերի շրջանակներում (բեռի և բաշխման ցանկը կցվում է)։

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե, Երևանի, Գյումրու և Վանաձորի քաղաքապետերին:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

## MSKU 9873900 բեռնարկղի բեռի և բաշխման ցանկ

Տեղերի քանակը՝695, ընդհանուր քաշը՝9595 կգ, բեռի արժեքը կազմում է 225051.0 ԱՄՆ-ի դոլար, տրանսպորտային ծախսերը 9476 ԱՄՆ-ի դոլար

| Ապրանքի անվանումը | Քանակը ըստ չափման միավորի /արկղ/ | Ընդհ. քաշը /կգ/ | Նետտո քաշը /կգ/ | Արժեքը $ | ՀՀ ԿԲԾՀՀ որոշումները և շահառուները |
|---|---|---|---|---|---|
| | | | | | **Մ-170-Ա առ 07.03.2012թ.** |
| Ծածկոց | 25 | 300 | 291 | 5156.2 | «Հալեպ» հայրենակցական բարեսիրական ՀԿ |
| | 10 | 120 | 116 | 2062.4 | «Ղարաբաղյան պատերազմի վետերանների միութ.» ՀԿ |
| | 110 | 1320 | 1278 | 22687 | Հայաստանի մանկապատանեկան հիմնադրամ |
| | 10 | 120 | 116 | 2062.4 | Ապարանի թիվ 1 մանկապարտեզ |
| | 71 | 852.7 | 825 | 14643 | Կարիքավոր քաղաքացիներ |
| Կոշիկ | 4 | 64.4 | 60 | 2769.5 | Հայաստանի մանկապատանեկան հիմնադրամ |
| | 2 | 32.2 | 30 | 1384.5 | Կարիքավոր քաղաքացիներ |
| Խաղալիք | 11 | 95 | 83 | 3132 | Հայաստանի մանկապատանեկան հիմնադրամ |
| Պայուսակ | 3 | 34.4 | 32 | 648 | Հայաստանի մանկապատանեկան հիմնադրամ |
| Խոհանոցային պարագաներ | 10 | 119 | 109 | 1426 | Հայաստանի մանկապատանեկան հիմնադրամ |
| | 21 | 250.8 | 229 | 2995 | Կարիքավոր քաղաքացիներ |
| Գրենական պիտույքներ | 17 | 316 | 306 | 3667 | Հայաստանի մանկապատանեկան հիմնադրամ |
| Գորգ | 5 | 21 | 18.5 | 270 | Կարիքավոր քաղաքացիներ |
| | 3 | 12.8 | 11.5 | 162 | Երևանի թիվ 30 մանկապարտեզ ՀՈԱԿ |
| Հիգիենիկ պարագաներ | 3 | 26.7 | 23.7 | 570 | Հայաստանի մանկապատանեկան հիմնադրամ |
| Սրբիչ | 2 | 25 | 23 | 680 | Հայաստանի մանկապատանեկան հիմնադրամ |
| Տաղավար | 1 | 19 | 17.5 | 60 | Հայաստանի մանկապատանեկան հիմնադրամ |
| Հագուստ | 44 | 745 | 704 | 30113 | Հայաստանի մանկապատանեկան հիմնադրամ |
| | 22 | 372 | 352 | 15056 | Վանաձորի «ԱՌԴԱ» թաղամասի ընտանիքներ |
| | 30 | 508 | 480 | 20532 | «Հալեպ» հայրենակցական բարեսիրական ՀԿ |
| | 71 | 1202 | 1137 | 48591 | Կարիքավոր քաղաքացիներ |
| | 4 | 68 | 64 | 2738 | Վանաձորի թիվ 5 մանկապարտեզ |
| | 10 | 169 | 160 | 6844 | Գյումրու «Երեխաների տուն» ՊՈԱԿ |
| Հաշմանդամի սայլակ | 11հատ | 280 | 269 | 1650 | **Մ-042-Ա առ18.02.2011 թ.** |
| Քայլակ | 1հատ | 7 | 6 | 240 | Գյումրու «ԱՌԴԱ» ԱԱԿ ԲՀ |
| Ձեռնափայտ | 8հատ | 3.1 | 2.8 | 80 | |
| Հագուստ | 15 | 254 | 240 | 10266 | |
| Պայուսակ | 2 | 23 | 21.4 | 431 | **Մ-177-Ա առ 19.03.2010 թ.** |
| Գրենական պիտույքներ | 4 | 74.5 | 72 | 863 | Գյումրու թիվ 6 նախակրթարան |
| Խաղալիք | 2 | 16.9 | 15 | 570 | **Մ-228-Ա առ 01.04.2011 թ.** |
| Գրենական պիտույքներ | 7 | 130 | 126 | 1510 | Երևանի թիվ 154 մանկապարտեզ ՀՈԱԿ |
| Պայուսակ | 1 | 11.4 | 10.6 | 216 | **Մ-050-Ա առ 18.02.2011 թ.** |
| | | | | | Երևանի թիվ 156 մանկապարտեզ ՀՈԱԿ |
| Կտորեղեն | 40 | 464.5 | 424 | 5145 | **Մ-182-Ա առ 19.03.2010 թ.** |
| Կար ու ձևի պարագաներ | 2 | 46 | 44 | 415 | «Զեյթուն» ուսումնական կենտրոն |
| Գործելու թել | 29 | 139 | 121 | 3337 | |
| Արդուկի սեղան | 1հատ | 2 | 1.8 | 45 | |
| Գործիքներ | 1 | 4 | 3.5 | 80 | |
| Սեղան | 10հատ | 240.5 | 235 | 1350 | |
| Սեղանի ոտքեր | 4 | 14.1 | 11 | 340 | |
| Աթոռ | 34հատ | 147.9 | 136 | 1280 | |
| Պահարան | 4հատ | 171.9 | 167 | 446 | |
| Մահճակալ | 9հատ | 134 | 126 | 1160 | |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| Մահճակալի սնար | 1հատ | 6.5 | 6 | 45 | Ս-182-Ա առ 19.03.2010 թ. |
| Ներքնակ | 6հատ | 119.5 | 114 | 415 | «Ջեյթուն» ուսումնական կենտրոն |
| Բազմոց | 3հատ | 145 | 142 | 440 | |
| Անկողնային պարագաներ | 10 | 127.4 | 116 | 2480 | |
| Զուգարանակոնք և աքսեսուար | 1 | 27 | 26.2 | 415 | |
| Կախիչներ | 1 | 7.5 | 6.5 | 120 | |
| Խոհանոցային պարագաներ | 10 | 119 | 109 | 1426 | |
| Վարագույր | 4 | 57.4 | 54 | 1250 | |
| Գորգ | 2 | 8 | 7 | 108 | |
| Շերտավարագույր | 3 | 8.9 | 6 | 340 | |
| Սրբիչ | 1 | 12 | 11 | 340 | |
| ԸՆԴԱՄԵՆԸ | | 9596 | 9096 | 225051 | |

Տրանսպորտային ծախսեր 9476

Հր. 3/2.4

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

**14 մարտի 2014 թվականի N Մ-178-Ա**
**քաղ. Երևան**

## «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՖՈՒՏԲՈԼԻ ՖԵԴԵՐԱՑԻԱ» ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ՄԻՈՒԹՅԱՆ ՀԱՍՑԵՈՎ ՍՏԱՑՎԱԾ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ԾՐԱԳՐԻ Մ Ա Ս Ի Ն (N 1)

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2014 թվականի մարտի 12-ի N 3/3.8-2/3673-14, Հայաստանի Հանրապետության սպորտի և երիտասարդության հարցերի նախարարության 2014 թվականի մարտի 13-ի N 4/06/253-14 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2014 թվականի մարտի 14-ի N ՎՄ/3-4/2855-14 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ  է.***

1. Բարեգործական որակել եվրոպայի ֆուտբոլի ասոցիացիաների միության (UEFA) կողմից որպես օժանդակություն Հայաստանի ֆուտբոլի ազգային հավաքականների համար «Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիա» իրավաբանական անձանց միության հասցեով ուղարկված մարզահագուստի և մարզագույքի (276 տեղ, 2,040.1 կգ ընդհանուր քաշով, 44.968.69 եվրոյին համարժեք դրամ ընդհանուր արժողությամբ՝ ներառյալ փոխադրման ծախսերը, «Զվարթնոց» ՄՏ) ներմուծման ծրագիրը:

2. «Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիա» իրավաբանական անձանց միությանը՝ նշված բեռի համապատասխան ձևակերպումներն ավարտելուց հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկատվություն:

3. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության սպորտի և երիտասարդության հարցերի նախարարություն ու Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ                                        Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**18 մարտի 2014 թվականի N Մ-179-Ա**
**(Որոշումն ընդունվել է 2014 թվականի մարտի 14-ին)**
**քաղ. Երևան**

## «ՀԱՅԱՍՏԱՆԻ ԾԱՆՐԱՄԱՐՏԻ ՖԵԴԵՐԱՑԻԱ» ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՀԱՅՑԵՈՎ ՍՏԱՑՎԱԾ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2013 թվականի մարտի 13-ի N 3/3.8-2/3710-13, Հայաստանի Հանրապետության սպորտի և երիտասարդության հարցերի նախարարության 2013 թվականի մարտի 13-ի N 4/06/251-13 ու Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2013 թվականի մարտի 18-ի N ՎՄ/3-4/3060-13 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ   է.***

1. Բարեգործական որակել Ծանրամարտի միջազգային ֆեդերացիայի կողմից որպես օժանդակություն «Հայաստանի ծանրամարտի ֆեդերացիա» հասարակական կազմակերպության հասցեով ուղարկված 10 լրակազմ ծանրաձողերի (90 տեղ, 1,980 կգ ընդհանուր քաշով, 500 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ արժողությամբ, փոխադրման ծախսերը կազմել են 625,000 դրամ, «Արարատյան» ՄՏ) ներմուծման ծրագիրը:

2. «Հայաստանի ծանրամարտի ֆեդերացիա» հասարակական կազմակերպությանը՝ նշված բեռի համապատասխան ձևակերպումներն ավարտելուց հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկատվություն:

3. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության սպորտի և երիտասարդության հարցերի նախարարություն ու Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ                                        Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ**
**ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**

**14 մարտի 2014 թվականի N Մ-180-Ա**
**քաղ. Երևան**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2012 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 3-Ի N Մ-078-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԵՎ ՆՈՒՅՆ ԾՐԱԳՐԻՆ ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔԻ**
**Մ Ա Ս Ի Ն**
**(Գիտության և առաջատար տեխնոլոգիաների ազգային հիմնադրամ)**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2014 թվականի մարտի 10-ի N 3/3.8-2/3470-14 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2014 թվականի մարտի 5-ի N ՎՄ/3-4/2455-14 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2012 թվականի փետրվարի 3-ի «Աջակցություն Ա. Ի. Ալիխանյանի անվան Ազգային գիտական լաբորատորիա» հիմնադրամի տիեզերական ճառագայթների բաժանմունքի գործունեությանը» ծրագրի մասին» N Մ-078-Ա որոշմամբ հաստատված (2013 թվականի դեկտեմբերի 6-ի N Մ-1139-Ա որոշման խմբագրությամբ) ծրագրի 6-րդ կետի երկրորդ պարբերության չորրորդ ենթակետը շարադրել նոր խմբագրությամբ՝ հետևյալ բովանդակությամբ.

«- հրատարակչական ծախսեր և բաժանորդագրություններ – 3600000 (երեք միլիոն վեց հարյուր հազար) դրամ, այդ թվում՝ 763000 (յոթ հարյուր վաթսուներեք հազար) դրամ – 2012թ. փետրվարի 1-ից մինչև 2012թ. դեկտեմբերի 31-ը, 600000 (վեց հարյուր հազար) դրամ – 2013թ. ընթացքում, և 2237000 (երկու միլիոն երկու հարյուր երեսունյոթ հազար) դրամ – 2014թ. ընթացքում.»:

2. Սահմանել, որ Գիտության և առաջատար տեխնոլոգիաների ազգային հիմնադրամի կողմից (քաղ. Երևան, Ազատության 26, ՀՎՀՀ՝ 00040233) կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքն անմիջականորեն կապված է սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝



«Տիգրան Մեծ» հրատարակչություն» ՓԲԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 02505322) 2014 թվականի փետրվարի 26-ին կնքված՝ N 02-02 NFSAT եռակողմ պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է հրատարակչական նյութերի տպագրության աշխատանքների իրականացում՝ 2,000,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**14 մարտի 2014 թվականի N Մ-181-Ա**
**քաղ. Երևան**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2011 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 18-Ի N Մ-045-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԵՎ ՆՈՒՅՆ ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

**(«ԱՌԴԱ» բարեգործական հիմնադրամ)**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2014 թվականի մարտի 5-ի N 3/3.8-2/3304-14 եզրակացությունը և հաշվի առնելով «ԱՌԴԱ» բարեգործական հիմնադրամի 2014 թվականի մարտի 10-ի N Կ-10/03 գրությունը,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2011 թվականի փետրվարի 18-ի «ԱՌԴԱ» բարեգործական հիմնադրամի կողմից իրականացվող «Գյումրի - 10» ծրագրի մասին» N Մ-045-Ա որոշման մեջ և կից ծրագրում կատարել հետևյալ փոփոխությունները՝

1) որոշման 1-ին կետում «12.5 մլն դրամ» բառերը փոխարինել «24.5 մլն դրամ» բառերով.

2) որոշմանը կից ծրագիրը շարադրել նոր խմբագրությամբ (կցվում է):

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետին և Գյումրու քաղաքապետին:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է
«ԱՌԴԱ» բարեգործական հիմնադրամի կողմից
2014 թվականի մարտի 10-ին

Գործադիր տնօրեն Հ. Ստեփանյան

Մ-3/Կ.1

## ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳԻՐ
## «ԳՅՈՒՄՐԻ-10»

| | |
|---|---|
| 1. Ծրագրի նպատակը | Գյումրու թիվ 10 նախակրթարանի 80 սաների և 24 աշխատակիցների կենցաղային պայմանների բարելավում: |
| 2. Ծրագրի բարեգործական ոլորտը | Հարկային և մաքսային արտոնությունների տրամադրում: Բարեգործին խրախուսում: |
| 3. Բարեգործը | Ամերիկյան «Հայ ավետարանի առաքելություն» ոչառևտրային կազմակերպություն, ԱՄՆ, ք. Փասադենա: |
| 4. Ծրագիրը կատարողը | «ԱՌԴԱ» բարեգործական հիմնադրամ, Երևան, Պարույր Սևակի փող. 9, ՀՎՀՀ՝ 00057312: |
| 5. Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը | ՀՀ, Շիրակի մարզ, ք. Գյումրի: Սոցիալ-կրթական ոլորտ: |
| 6. Ծրագրի բյուջեն | 24,5 մլն դրամ: |
| 7. Բարեգործություն ստացողը | Գյումրու քաղաքապետարան: |
| 8. Ծրագրի իրականացման տևողությունը | Ծրագիրը շարունակական է: Այն իրականացվում է սկսած 2001 թվականից: Ծրագրի այս հատվածն իրականացվում է 01. 01. 2011 թ.- 31. 12. 2015 թ. ժամանակահատվածում: |
| 9. Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը | - կաքնամբերքի և այլ բարեգործական օգնության տրամադրում՝ 24,5 մլն դրամ՝ առանց ԱԱՀ-ի - 01. 01. 2011 թվական – 31. 12. 2015 թվական: |
| 10. Զերծ բերվող (ներմուծվող) ապրանքների և ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները, նախատեսվող գինը | -կաքնամբերքի տրամադրում՝ 3,5 մլն դրամ՝ առանց ԱԱՀ-ի, յուրաքանչյուր տարի 0,7 մլն դրամ.<br>- բարեգործական օգնության ներմուծում /հագուստ, սնունդ, կոշիկ, կահույք, խաղալիքներ, հիգիենիկ և այլ պարագաներ/ - 21 ,0 մլն դրամ՝ առանց ԱԱՀ-ի: |
| 11. Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպչական ծախսեր | Ծրագրի համար լրացուցիչ կազմակերպչական ծախսեր չեն նախատեսվում, ծրագիրն իրականացվում է հիմնադրամի ընդհանուր կազմակերպչական ծախսերի սահմաններում: |
| 12. Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների հետ | ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով, Գյումրու քաղաքապետարան: |
| 13. Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը | ՀՀ ԿԲԾՀՀ ներկայացվող հաշվետվությունների և «ԱՌԴԱ» բ/հ հոգաբարձուների խորհրդի անդամների պարբերական այցելությունների միջոցով: |

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**

**14 մարտի 2014 թվականի N Մ-182-Ա**
**քաղ. Երևան**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2012 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 21-Ի N Մ-1032-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**
**(«Հրայր և Աննա Հովնանյան ֆաունդեյշն» կորպորացիայի մասնաճյուղ)**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2014 թվականի մարտի 10-ի N 3/3.8-2/3540-14 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2014 թվականի մարտի 7-ի N ՎՄ/3-4/2542-14 եզրակացությունները, ինչպես նաև հաշվի առնելով «Հրայր և Աննա Հովնանյան ֆաունդեյշն» կորպորացիայի մասնաճյուղի 2014 թվականի մարտի 4-ի գրությունը,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2012 թվականի դեկտեմբերի 21-ի «Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2010 թվականի մարտի 19-ի N Մ-176-Ա որոշմամբ հաստատված ծրագրին հարակից գործարքների մասին» N Մ-1032-Ա որոշման 1-ին կետի 2-րդ ենթակետում (2013 թվականի հունիսի 7-ի N Մ-399-Ա որոշման խմբագրությամբ) «17,077,305 դրամի չափով» բառերը փոխարինել «21,749,135 դրամի չափով» բառերով:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ　　　　　　　　　　Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

**14 մարտի 2014 թվականի N Մ-183-Ա**
**քաղ. Երևան**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2013 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 15-Ի N Մ-1049-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

**(«Էյ Թի Փի» բարեգործական հիմնադրամ)**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2014 թվականի մարտի 11-ի N 3/3.8-2/3584-14 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2014 թվականի մարտի 7-ի N ՎՄ/3-4/2541-14 եզրակացությունները, ինչպես նաև հաշվի առնելով «Էյ Թի Փի» բարեգործական հիմնադրամի 2014 թվականի մարտի 4-ի N 117 գրությունը,* ***ո ր ո շ ու մ  է.***

1. Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2013 թվականի նոյեմբերի 15-ի «Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2013 թվականի հոկտեմբերի 4-ի N Մ-867-Ա որոշմամբ հաստատված ծրագրին հարակից գործարքների մասին» N Մ-1049-Ա որոշման 1-ին կետի 6-րդ ենթակետում «420,000 դրամի չափով» բառերից առաջ լրացնել «ամսեկան» բառը:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ                                                  Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**14 մարտի 2014 թվականի N Մ-184-Ա**
**քաղ. Երևան**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ «ՀԻՎԱՆԴՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԵՐԱՀՍԿՄԱՆ ԵՎ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՀԱՍՑԵՈՎ ՍՏԱՑՎԱԾ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2014 թվականի փետրվարի 25-ի N 3/3.8-2/2784-14, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության 2014 թվականի փետրվարի 26-ի N ՄՔ/22/1708-14 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2014 թվականի փետրվարի 24-ի N ՎՄ/3-4/2005-14 եզրակացությունները,* ***որոշում է.***

1. Բարեգործական որակել Առողջապահության համաշխարհային կազմակերպության (WHO) կողմից Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության «Հիվանդությունների վերահսկման և կանխարգելման կենտրոն» փակ բաժնետիրական ընկերության հասցեով Ազգային իմունականխարգելման ծրագրի շրջանակներում ստացված լաբորատոր սարքավորումների (2 տեղ, 771 կգ ընդհանուր քաշով, 18,048 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ արժեքով, փոխադրման ծախսերը կազմել են 3,000 ԱՄՆ-ի դոլար, «Արարատյան» ՍՄ) ներմուծման ծրագիրը:

2. Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության «Հիվանդությունների վերահսկման և կանխարգելման կենտրոն» փակ բաժնետիրական ընկերությանը՝ նշված բեռի համապատասխան ձևակերպումներն ավարտելուց հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկատվություն:

3. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

**ՆԱԽԱԳԱՀ** **Ս.ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

**14 մարտի 2014 թվականի N Մ-185-Ա**
**քաղ. Երևան**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ «ՀԻՎԱՆԴՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԵՐԱՀՍԿՄԱՆ ԵՎ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՀԱՍՑԵՈՎ ՍՏԱՑՎԱԾ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ (N1)

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2014 թվականի փետրվարի 26-ի N 3/3.8-2/2851-14, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության 2014 թվականի փետրվարի 26-ի N ԱՔ/22/1705-14 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2014 թվականի փետրվարի 25-ի N ՎՄ/3-4/2103-14 եզրակացությունները,* ***որոշում է.***

1. Բարեգործական որակել Առողջապահության համաշխարհային կազմակերպության (WHO) միջոցով Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության «Հիվանդությունների վերահսկման և կանխարգելման կենտրոն» փակ բաժնետիրական ընկերության հասցեով Ազգային իմունականխարգելման ծրագրի շրջանակներում ստացված բեռի (ավտոկլավ TOMY ES315, ավտոկլավի մասեր, 2 տեղ, 109 կգ ընդհանուր քաշով, 571,150 ճապոնական յենին համարժեք դրամ արժեքով, փոխադրման ծախսերը կազմել են 6,877.7 ճապոնական յեն, «Ջվարթնոց» ՄՏ) ներմուծման ծրագիրը:

2. Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության «Հիվանդությունների վերահսկման և կանխարգելման կենտրոն» փակ բաժնետիրական ընկերությանը՝ նշված բեռի համապատասխան ձևակերպումներն ավարտելուց հետո մեկամյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկատվություն:

3. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

**ՆԱԽԱԳԱՀ** **Ս.ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**14 մարտի 2014 թվականի N Մ-186-Ա**
**քաղ. Երևան**

## «ՄՈՐ ԵՎ ՄԱՆԿԱՆ ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ ՊԱՀՊԱՆՄԱՆ ԳԻՏԱՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՀԱՍՑԵՈՎ ՍՏԱՑՎԱԾ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2014 թվականի մարտի 5-ի N 3/3.8-2/3302-14, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության 2014 թվականի մարտի 3-ի N ԴԴ/22/1854-14 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2014 թվականի մարտի 3-ի N ՎՄ/3-4/2302-14 եզրակացությունները,* ***որոշում է.***

1. Բարեգործական որակել Նոր Զելանդիայից՝ անհատ բարերար Ստանիսլավ Տատկովի կողմից աջակցության նպատակով «Մոր և մանկան առողջության պահպանման գիտահետազոտական կենտրոն» փակ բաժնետիրական ընկերության հասցեով ստացված բեռի (թթվածնաբուժության սարքավորումներ իր լրակազմով, 5 տեղ, 102.9 կգ ընդհանուր քաշով, 4,657 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ արժեքով՝ ներառյալ փոխադրման ծախսերը, «Զվարթնոց» ՄՏ) ներմուծման ծրագիրը:
2. «Մոր և մանկան առողջության պահպանման գիտահետազոտական կենտրոն» փակ բաժնետիրական ընկերությանը՝ նշված բեռի համապատասխան ձևակերպումներն ավարտելուց հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկատվություն:
3. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն, Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

**ՆԱԽԱԳԱՀ** **Ս.ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ**
**ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**14 մարտի 2014 թվականի N Մ-187- Ա**
**քաղ. Երևան**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2013 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 28-Ի N Մ-132-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻՆ ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔԻ ՄԱՍԻՆ

**(Բաց հասարակության ինստիտուտի օժանդակության հիմնադրամի հայկական մասնաճյուղ)**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2014 թվականի մարտի 6-ի N 3/3.8-2/3334-14 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2014 թվականի մարտի 3-ի N ԿՄ/3-4/2379-14 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Սահմանել, որ Բաց հասարակության ինստիտուտի օժանդակության հիմնադրամի հայկական մասնաճյուղի (ՀՎՀՀ՝ 02535097) կողմից կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքն անմիջականորեն կապված է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2013 թվականի փետրվարի 28-ի «Բաց հասարակության ինստիտուտի օժանդակության հիմնադրամի հայկական մասնաճյուղի (ԲՀԻՕՀՀՄ) կողմից 2013-2014 թվականներին իրականացվող ծրագրի մասին» N Մ-132-Ա որոշմամբ (2013 թվականի հուլիսի 19-ի N Մ-644-Ա որոշման խմբագրությամբ) հաստատված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

«Քեյ-Փի-Էմ-Ջի» ՓԲԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 02529689) 2014 թվականի փետրվարի 24-ին կնքված՝ N A/007/2014 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է Բաց հասարակության ինստիտուտի օժանդակության հիմնադրամի հայկական մասնաճյուղի 2013 թվականի ֆինանսական հաշվետվությունների և Բաց հասարակության հիմնադրամի հաշվապահական հաշվառման քաղաքականության համաձայն պատրաստված ֆինանսական հաշվետվական փաթեթի աուդիտի իրականացում՝ 25,000 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

**ՆԱԽԱԳԱՀ** **Ս.ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ**
**ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

**14 մարտի 2014 թվականի N Մ-188- Ա**
**քաղ. Երևան**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2013 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 28-Ի N Մ-132-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻՆ ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

**(Բաց հասարակության ինստիտուտի օժանդակության հիմնադրամի հայկական մասնաճյուղ)**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2014 թվականի մարտի 12-ի N 3/3.8-2/3671-14 և Հայաստանի Հանրապետության կառավարության առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2014 թվականի մարտի 10-ի N ՎՄ/3-4/2638-14 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Սահմանել, որ Բաց հասարակության ինստիտուտի օժանդակության հիմնադրամի հայկական մասնաճյուղի (ՀՎՀՀ՝ 02535097) կողմից կնքված՝ ստորև նշված պայմանագրերով նախատեսված գործարքներն անմիջականորեն կապված են Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2013 թվականի փետրվարի 28-ի «Բաց հասարակության ինստիտուտի օժանդակության հիմնադրամի հայկական մասնաճյուղի (ԲՀԻՕՀՀՄ) կողմից 2013-2014 թվականներին իրականացվող ծրագրի մասին» N Մ-132-Ա որոշմամբ (2013 թվականի հուլիսի 19-ի N Մ-644-Ա որոշման խմբագրությամբ) հաստատված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունեն զգալի նշանակություն՝

1) «ԱրմենՏել» ՓԲԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 02500052) 2014 թվականի փետրվարի 5-ին կնքված՝ N 112756936 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է 2014 թվականի ապրիլի 1-ից մինչև 2014 թվականի դեկտեմբերի 31-ն ընկած ժամանակահատվածում հեռախոսակապի ծառայությունների մատուցում՝ 820,000 դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի.

2) «Օրանժ Արմենիա» ՓԲԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 00098599) 2014 թվականի մարտի 5-ին կնքված՝ N 1610132 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է 2014 թվականի ապրիլի 1-ից մինչև 2014 թվականի դեկտեմբերի 31-ն ընկած ժամանակահատվածում շարժական հեռախոսակապի ծառայությունների մատուցում՝ 615,000 դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

**ՆԱԽԱԳԱՀ** **Ս.ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

### Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

**14 մարտի 2014 թվականի N Մ-189-Ա**
**քաղ. Երևան**

### ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ «ԷՋՄԻԱԾՆԱՊԱՏԿԱՆ ՎԱՆՔԵՐԻ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԻ ԲԱՐԵԼԱՎՈՒՄ» ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2014 թվականի փետրվարի 18-ի N 3/3.8-2/2349-14, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության 2014 թվականի փետրվարի 20-ի N 02/1022-14 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2014 թվականի փետրվարի 18-ի N ՎՄ/3-4/1828-14, եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ  է.***

1. Բարեգործական որակել Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի կողմից իրականացվող՝ 60,400,000 դրամ արժողությամբ «Էջմիածնապատկան վանքերի տնտեսական պայմանների բարելավում» ծրագիրը (կցվում է):

2. Սահմանել, որ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի կողմից (ՀՎՀՀ՝ 04703401) կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքն անմիջականորեն կապված է սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

«Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 01520882) 2013 թվականի սեպտեմբերի 10-ին կնքված N ԿՊ0054 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է էլեկտրական էներգիայի մատակարարում՝ 60,400,000 դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի:

3. Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնին՝

1) սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի իրականացման շրջանակներում մատակարար (կապալառու) կազմակերպությունների հետ կնքվելիք պայմանագրերի պատճենները ներկայացնել Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով՝ «Ավելացված արժեքի հարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի դրույթների համաձայն ավելացված արժեքի հարկից ազատվող ապրանքների ու ծառայությունների շրջանակը որոշելու համար.

2) մինչև յուրաքանչյուր եռամսյակին հաջորդող ամսվա 25-ը՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել տեղեկատվություն տվյալ եռամսյակի ընթացքում նշված ծրագրի շրջանակներում կազմակերպության կողմից, ինչպես նաև կազմակերպությանը մատակարարված ապրանքների ու մատուցված ծառայությունների, իսկ ծրագրի ավարտից հետո մեկամսյա ժամկետում՝ ամփոփ տեղեկություններ ծրագրի կատարման մասին:

4. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարություն, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե և Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետին:

ՆԱԽԱԳԱՀ                                    Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է

ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ

ՎԱՐՉԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԲԱԺՆԻ ՏՆՕՐԵՆ

ՄՈՒՇԵՂ ԵՊԻՍԿՈՊՈՍ ԲԱԲԱՅԱՆԻ ԿՈՂՄԻՑ

«12» [handwritten month] 2014 թ.

Էջմիածնապատկան վանքերի տնտեսական պայմանների բարելավման

ԾՐԱԳԻՐ

| | | |
|---|---|---|
| 1 | Ծրագրի նպատակը | Ծրագրի նպատակն է Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնին պատկանող Սուրբ Գայանե, Սուրբ Հռիփսիմե, Սուրբ Շողակաթ, Սուրբ Խոր Վիրապ վանքերի, Սուրբ Գեղարդավանքի և Սուրբ Գրիգոր Լուսավորիչ եկեղեցու տնտեսական պայմանների բարելավումը |
| 2 | Ծրագրի բարեգործական որակման նպատակները | Նախատեսվում է ծրագրի շրջանակներում, օրենքով սահմանված կարգով օգտվել ավելացված արժեքի հարկի (ԱԱՀ) վճարումից ազատվելու արտոնությունից: |
| 3. | Բարեգործը (բարեգործները) | Հայկական Բարեգործական Ընդհանուր Միություն |
| 4. | Ծրագրի կատարողը | Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին, ՀՎՀՀ 04703401 |
| 5. | Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը | ՀՀ, Արմավիրի մարզ, ք. Էջմիածին (Սուրբ Գայանե, Սուրբ Հռիփսիմե, Սուրբ Շողակաթ), ՀՀ, Կոտայքի մարզ, Սուրբ Գեղարդավանք, ՀՀ, Արարատի մարզ, գ. Լուսառատ (Սուրբ Խոր Վիրապ վանքային համալիր), ք.Երևան, Սբ.Գրիգոր Լուսավորիչ եկեղեցի |
| 6. | Ծրագրի բյուջեն | Ընդամենը 60 400 000 ՀՀ դրամ, որից՝<br>2014թ. 30.200.000 դրամ,<br>2015թ. 30.200.000 դրամ: |
| .7. | Բարեգործություն ստացողը | Հավատացյալ ժողովուրդը |
| 8. | Ծրագրի իրականացման տևողությունը | 01 հունվարի 2014թ. – 31 դեկտեմբերի 2015թ.: |
| 9. | Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը | Ծրագրի իրականացման ընթացքում նախատեսվում է էջմիածնապատկան Սուրբ Գայանե, Սուրբ Հռիփսիմե, Սուրբ Շողակաթ, Սուրբ Խոր Վիրապ վանքերը, Գեղարդավանքը և Սուրբ Գրիգոր Լուսավորիչ եկեղեցին ապահովել էլեկտրաէներգիայով՝ 60 400 000 ՀՀ դրամով՝ առանց ԱԱՀ-ի, 01 հունվարի 2014թ. – 31 դեկտեմբերի 2015թ.:<br><br>*Սուրբ Գայանե վանք*<br>- նախատեսվում է էլեկտրաէներգիայի մատակարարում 2014թ. 1.500.000 և 2015թ. 1.500.000 ՀՀ դրամ արժեքով, ընդամենը 3.000.000 ՀՀ դրամ առանց ԱԱՀ, 01 հունվարի 2014թ. – 31 դեկտեմբերի 2015թ., «Հայաստանի էլեկտրական ցանցեր»(ՀՎՀՀ 01520882) ՓԲԸ-ի հետ 10.09.2013թ. կնքված թիվ ԿՊ0054 պայմանագրի հիման վրա, Հավելված N4, քարտի համարը՝ 170000000230, «Մուսալեռ» մասնաճյուղ:<br><br>*Սուրբ Հռիփսիմե վանք*<br>- նախատեսվում է էլեկտրաէներգիայի մատակարարում 2014թ. 4.000.000 և 2015թ. 4.000.000 ՀՀ դրամ արժեքով, ընդամենը 8.000.000 ՀՀ դրամ առանց ԱԱՀ, 01 հունվարի 2014թ. – 31 դեկտեմբերի 2015թ., «Հայաստանի էլեկտրական ցանցեր»(ՀՎՀՀ 01520882) ՓԲԸ-ի հետ 10.09.2013թ. կնքված թիվ ԿՊ0054 պայմանագրի հիման վրա, Հավելված N4, քարտի համարը՝ 170000000233, «Մուսալեռ» մասնաճյուղ:<br><br>*Սուրբ Շողակաթ վանք*<br>- նախատեսվում է էլեկտրաէներգիայի մատակարարում 2014թ. 700.000 և 2015թ. 700.000 ՀՀ դրամ արժեքով, ընդամենը 1.400.000 ՀՀ դրամ առանց ԱԱՀ, 01 հունվարի 2014թ. – 31 դեկտեմբերի 2015թ., «Հայաստանի էլեկտրական ցանցեր»(ՀՎՀՀ 01520882) ՓԲԸ-ի հետ 10.09.2013թ. կնքված թիվ ԿՊ0054 պայմանագրի հիման վրա, Հավելված N4, քարտի համարը՝ 170000000231, «Մուսալեռ» մասնաճյուղ:<br><br>*Սուրբ Խոր Վիրապ վանք*<br>- նախատեսվում է էլեկտրաէներգիայի մատակարարում 2014թ. 2.000.000 և 2015թ. 2.000.000 ՀՀ դրամ արժեքով, ընդամենը 4.000.000 ՀՀ դրամ առանց ԱԱՀ, 01 հունվարի 2014թ. – 31 դեկտեմբերի 2015թ., «Հայաստանի էլեկտրական ցանցեր»(ՀՎՀՀ 01520882) ՓԲԸ-ի հետ 10.09.2013թ. կնքված թիվ ԿՊ0054 պայմանագրի հիման վրա, Հավելված N4, քարտի համարը՝ 330000001178, «Արաքս» մասնաճյուղ:<br><br>*Սուրբ Գեղարդավանք*<br>- նախատեսվում է էլեկտրաէներգիայի մատակարարում 2014թ. 2.000.000 և 2015թ. 2.000.000 ՀՀ դրամ արժեքով, ընդամենը 4.000.000 ՀՀ դրամ առանց ԱԱՀ, 01 հունվարի 2014թ. – 31 դեկտեմբերի 2015թ., «Հայաստանի էլեկտրական ցանցեր»(ՀՎՀՀ 01520882) ՓԲԸ-ի հետ 10.09.2013թ. կնքված թիվ ԿՊ0054 պայմանագրի հիման վրա, Հավելված N4, քարտի համարը՝ 630008130045, «Գեղամա» մասնաճյուղ:<br><br>*Սուրբ Գրիգոր Լուսավորիչ եկեղեցի*<br>- նախատեսվում է էլեկտրաէներգիայի մատակարարում 2014թ. 20.000.000 և 2015թ. 20.000.000 ՀՀ դրամ արժեքով, ընդամենը 40.000.000 ՀՀ դրամ առանց ԱԱՀ, 01 հունվարի 2014թ. – 31 դեկտեմբերի 2015թ., «Հայաստանի էլեկտրական ցանցեր»(ՀՎՀՀ 01520882) ՓԲԸ-ի հետ 10.09.2013թ. կնքված թիվ ԿՊ0054 պայմանագրի հիման վրա, Հավելված N4, քարտի համարը՝ 011206262398 և 010704230550, «Հարավ» մասնաճյուղ: |
| 10. | Ձեռք բերվող ապրանքների, ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները, նախատեսվող գինը | Նախատեսվում է սպառել մոտ 60.400.000 դրամի էլեկտրաէներգիա՝ առանց ԱԱՀ-ի, 01 հունվարի 2014թ. – 31 դեկտեմբերի 2015թ.: |
| -11. | Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսերը | Այլ ծախսեր չեն նախատեսվում |
| 12. | Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների և այլ կազմակերպությունների հետ | Չի նախատեսվում: |
| 13. | Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը | Նախատեսվում է ադմինիստրատիվ հսկողություն Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի Տնտեսական և Ֆինանսական բաժինների և ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի կողմից: Յուրաքանչյուր եռամսյակ հանձնաժողովին կներկայացվեն ծրագրի շրջանակներում կատարված աշխատանքների մասին տեղեկություններ, ծրագրի ավարտից հետո կտրվի ամփոփ տեղեկություն: |

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**14 մարտի 2014 թվականի N Մ-190 - Ա**
**քաղ. Երևան**

## ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ «ՍՈՒՐԲ «ՏՐԴԱՏ» ԲԱՑ ԽՈՐԱՆԻ ՏԱՐԱԾՔԻ ԲԱՐԵԿԱՐԳՈՒՄ» ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2014 թվականի փետրվարի 18-ի N 3/3.8-2/2352-14, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության 2014 թվականի փետրվարի 20-ի N 02/1019-14 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2014 թվականի փետրվարի 20-ի N ՎՄ/3-4/1916-14, եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ  է.***

1. Բարեգործական որակել Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի կողմից իրականացվող՝ 20,661,520 դրամ արժողությամբ «Սուրբ «Տրդատ» բաց խորանի տարածքի բարեկարգում» ծրագիրը (կցվում է):

2. Սահմանել, որ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի կողմից (ՀՎՀՀ՝ 04703401) կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքն անմիջականորեն կապված է սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

«Յուկագո» ՓԲԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 00862326) 2013 թվականի օգոստոսի 23-ին կնքված N 05Գ/013 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է Արամուսի բարձր որակի բազալտ քարից պատրաստված 15x15 չափի սալիկների մատակարարում՝ 20,661,520 դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի:

3. Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնին՝

1) սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի իրականացման շրջանակներում մատակարար (կապալառու) կազմակերպությունների հետ կնքվելիք պայմանագրերի պատճենները ներկայացնել Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով՝ «Ավելացված արժեքի հարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի դրույթների համաձայն ավելացված արժեքի հարկից ազատվող ապրանքների ու ծառայությունների շրջանակը որոշելու համար.

2) մինչև յուրաքանչյուր եռամսյակին հաջորդող ամսվա 25-ը՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել տեղեկատվություն տվյալ եռամսյակի ընթացքում նշված ծրագրի շրջանակներում կազմակերպության կողմից, ինչպես նաև կազմակերպությանը մատակարարված ապրանքների ու մատուցված ծառայությունների, իսկ ծրագրի ավարտից հետո մեկամսյա ժամկետում՝ ամփոփ տեղեկություններ ծրագրի կատարման մասին:

4. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարություն, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե և Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետին:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է

ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ

ՎԱՐՉԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԲԱԺՆԻ ՏՆՕՐԵՆ

ՍՈՒՔԵՂ ԵՊԻՍԿՈՊՈՍ ԲԱԲԱՅԱՆԻ ԿՈՂՄԻՑ

«10» փետրվարի 2014 թ.

3/4

Սուրբ «Տրդատ» բաց խորանի տարածքի բարեկարգում

ԾՐԱԳԻՐ

| | | |
|---|---|---|
| 1 | Ծրագրի նպատակը | Ծրագրի նպատակն է Մայր Աթոռ Սուրբ էջմիածնի Սուրբ «Տրդատ» բաց խորանի տարածքը երեսպատել բազալտե սալիկներով: |
| 2 | Ծրագրի բարեգործական որակման նպատակները | Նախատեսվում է ծրագրի շրջանակներում, օրենքով սահմանված կարգով օգտվել ավելացված արժեքի հարկի (ԱԱՀ) վճարումից ազատվելու արտոնությունից: |
| 3. | Բարեգործը (բարեգործները) | Հայ Բարեգործական Ընդհանուր Միություն |
| 4. | Ծրագրի կատարողը | Մայր Աթոռ Սուրբ էջմիածին, ՀՎՀՀ 00862326: |
| 5. | Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը | Մայր Աթոռ Սուբ էջմիածին, բնագավառը՝ եկեղեցաշինություն: |
| 6. | Ծրագրի բյուջեն | 20.661.520 ՀՀ դրամ |
| .7. | Բարեգործություն ստացողը | Հավատավոր հայ ժողովուրդը: |
| 8. | Ծրագրի իրականացման տևողությունը | 23 օգոստոս 2013թ. – 31 դեկտեմբեր 2014թ.: |
| 9. | Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը | Ծրագրի իրականացման ընթացքում նախատեսվում է Արամուսի բարձր որակի բազալտ քարից պատրաստված սալիկներով և եզրաքարերով երեսպատել Մայր Աթոռ Սուրբ էջմիածնի Սուրբ «Տրդատ» բաց խորանի տարածքը՝ 20.661.52 ՀՀ դրամ գումարով: Աշխատանքներն իրականացվում են «Յուկացո» ՓԲԸ-ի (ՀՀ, ք. Երևան, Նորքի 9-րդ զանգված 16Բ շենք, 26 բն., ՀՎՀՀ 00862326) կողմից, պայմանագիր՝ կնքված 23.08.2014թ.: |
| 10. | Ձեռք բերվող ապրանքների, ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները, նախատեսվող գինը | Նախատեսվում է Արամուսի բարձր որակի բազալտ քարով երեսպատել Սուրբ «Տրդատ» բաց խորանի 1656քմ տարածքը 20.661.520 ՀՀ դրամ գումարով՝ առանց ԱԱՀ: |
| 11. | Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսերը | Չի նախատեսվում |
| 12. | Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների և այլ կազմակերպությունների հետ | Նախատեսվում է համագործակցություն էջմիածնի քաղաքապետարանի և Արմավիրի մարզի մարզպետարանի հետ: |
| 13. | Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը | Նախատեսվում է տեխնիկական հսկողություն՝ Մայր Աթոռ Սուրբ էջմիածնի ճարտարապետաշինարարական և ֆինանսական բաժինների և ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի կողմից: Ծրագրի ավարտից հետո կտրվի ամփոփ տեղեկություն: |

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**14 մարտի 2014 թվականի N Մ - 191 - Ա**
**քաղ. Երևան**

## ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ «ԻԶՄԻՐԼՅԱՆ ԲԺՇԿԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆԻ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԱՐԴԻԱԿԱՆԱՑՈՒՄ» ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2014 թվականի փետրվարի 18-ի N 3/3.8-2/2353-14, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության 2014 թվականի փետրվարի 20-ի N 02/1020 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2014 թվականի փետրվարի 20-ի N ՎՄ/3-4/1917-14, եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Բարեգործական որակել Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի կողմից իրականացվող՝ 29,161,200 դրամ արժողությամբ «Իզմիրլյան բժշկական կենտրոնի տեխնիկական արդիականացում» ծրագիրը (կցվում է):

2. Սահմանել, որ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի կողմից (ՀՎՀՀ՝ 04703401) կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքն անմիջականորեն կապված է սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

«Սեկոնետ» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 00099207) 2013 թվականի սեպտեմբերի 25-ին կնքված N 11Գ/013 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է թվային և տեսահսկման համակարգերի մատակարարում՝ 29,161,200 դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի:

3. Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնին՝

1) սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի իրականացման շրջանակներում մատակարար (կապալառու) կազմակերպությունների հետ կնքվելիք պայմանագրերի պատճենները ներկայացնել Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով՝ «Ավելացված արժեքի հարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի դրույթների համաձայն ավելացված արժեքի հարկից ազատվող ապրանքների ու ծառայությունների շրջանակը որոշելու համար.

2) մինչև յուրաքանչյուր եռամսյակին հաջորդող ամսվա 25-ը՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել տեղեկատվություն տվյալ եռամսյակի ընթացքում նշված ծրագրի շրջանակներում կազմակերպության կողմից, ինչպես նաև կազմակերպությանը մատակարարված ապրանքների ու մատուցված ծառայությունների, իսկ ծրագրի ավարտից հետո մեկամսյա ժամկետում՝ ամփոփ տեղեկություններ ծրագրի կատարման մասին:

4. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարություն, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե և Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետին:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է

ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ

ՎԱՐՉԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԲԱԺՆԻ ՏՆՕՐԵՆ

ՄՈՒՇԵՂ ԵՊԻՍԿՈՊՈՍ ԲԱԲԱՅԱՆԻ ԿՈՂՄԻՑ

«10» [illegible] 2014 թ.

3/5

Իզմիրլյան բժշկական կենտրոնի տեխնիկական արդիականացման

ԾՐԱԳԻՐ

| | | |
|---|---|---|
| 1 | Ծրագրի նպատակը | Ծրագրի նպատակն է ժամանակակից տեսահսկման համակարգով ապահովել Իզմիրլյան բժշկական կենտրոնը : |
| 2 | Ծրագրի բարեգործական որակման նպատակները | Նախատեսվում է ծրագրի շրջանակներում, օրենքով սահմանված կարգով օգտվել ավելացված արժեքի հարկի (ԱԱՀ) վճարումից ազատվելու արտոնությունից: |
| 3. | Բարեգործը (բարեգործները) | Հայ Բարեգործական Ընդհանուր Միություն |
| 4. | Ծրագրի կատարողը | Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին, ՀՎՀՀ 00099207 |
| 5. | Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը | Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին, բնագավառը՝ առողջապահական: |
| 6. | Ծրագրի բյուջեն | 29.161.200 ՀՀ դրամ |
| 7. | Բարեգործություն ստացողը | Հիվանդանոցը և հիվանդները: |
| 8. | Ծրագրի իրականացման տևողությունը | 25 սեպտեմբեր 2013թ. – 31մարտ 2014թ.: |
| 9. | Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը | Ծրագրի իրականացման ընթացքում նախատեսվում է Իզմիրլյան բժշկական կենտրոնը ապահովել տեսահսկման համակարգով՝ 29.161.200 ՀՀ դրամ գումարով: Աշխատանքներն իրականացվում է՝ <<Սեկոնետ>> ՍՊԸ-ի (ՀՀ, ք. Երևան, Օրբելի 14, ՀՎՀՀ 00099207) կողմից, պայմանագիր՝ կնքված 25.09.2014թ.: |
| 10. | Ձեռք բերվող ապրանքների, ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները, նախատեսվող գինը | Նախատեսվում է ապահովել Իզմիրլյան բժշկական կենտրոնը տեսահսկման համակարգով , (ապրանքացուցակը տես պայմանագրում առկա թիվ 1 հավելվածում) 29.161.200 ՀՀ դրամ գումարով՝ առանց ԱԱՀ: |
| 11. | Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսերը | Չի նախատեսվում |
| 12. | Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառա-վարման մարմինների և այլ կազմակերպությունների հետ | Նախատեսվում է համագործակցություն Երևանի քաղաքապետարանի և ՀՀ Առողջապահության նախարարության հետ: |
| 13. | Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը | Նախատեսվում է տեխնիկական հսկողություն՝ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի վարչատնտեսական և ֆինանսական բաժինների և ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի կողմից: Ծրագրի ավարտից հետո կտրվի ամփոփ տեղեկություն: |

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ**
**ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

**Ո Ր Ո Շ Ու Մ**

**14 մարտի 2014 թվականի N Մ-192-Ա**
**քաղ. Երևան**

# ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ «ՀԱՂԱՐԾԻՆ ՎԱՆԱԿԱՆ ՀԱՄԱԼԻՐԻ ՄՈՒՏՔԻ ԲԱՐԵԿԱՐԳՈՒՄ» ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2014 թվականի փետրվարի 18-ի N 3/3.8-2/2345-14, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության 2014 թվականի փետրվարի 20-ի N 02/1021-14 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2014 թվականի փետրվարի 20-ի N ՎՄ/3-4/1915-14, եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Բարեգործական որակել Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի կողմից իրականացվող՝ 2,403,090 դրամ արժողությամբ «Հաղարծին վանական համալիրի մուտքի բարեկարգում» ծրագիրը (կցվում է):

2. Սահմանել, որ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի կողմից (ՀՎՀՀ՝ 04703401) կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքն անմիջականորեն կապված է սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

«Շիրակ ինժեներինգ քոնստրաքշն» ՓԲԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 05531764) 2013 թվականի դեկտեմբերի 17-ին կնքված N 12Շ/13 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի Հաղարծին վանական համալիրի բացման հետ կապված շինարարական աշխատանքների իրականացում՝ 2,403,090 դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի:

3. Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնին՝

1) սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի իրականացման շրջանակներում մատակարար (կապալառու) կազմակերպությունների հետ կնքվելիք պայմանագրերի պատճենները ներկայացնել Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով՝ «Ավելացված արժեքի հարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի դրույթների համաձայն ավելացված արժեքի հարկից ազատվող ապրանքների ու ծառայությունների շրջանակը որոշելու համար.

2) մինչև յուրաքանչյուր եռամսյակին հաջորդող ամսվա 25-ը՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել տեղեկատվություն տվյալ եռամսյակի ընթացքում նշված ծրագրի շրջանակներում կազմակերպության կողմից, ինչպես նաև կազմակերպությանը մատակարարված ապրանքների ու մատուցված ծառայությունների, իսկ ծրագրի ավարտից հետո մեկամսյա ժամկետում՝ ամփոփ տեղեկություններ ծրագրի կատարման մասին:

4. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարություն, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե և Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետին:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է [signature]
ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ
ՎԱՐՉԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԲԱԺՆԻ ՏՆՕՐԵՆ
ՄՈՒՇԵՂ ԵՊԻՍԿՈՊՈՍ ԲԱԲԱՅԱՆԻ ԿՈՂՄԻՑ
«10» [illegible] 2014 թ.

Հաղարծին վանական համալիրի մուտքի բարեկարգում

3/6

## ԾՐԱԳԻՐ

| | | |
|---|---|---|
| 1 | Ծրագրի նպատակը | Ծրագրի նպատակն է Հաղարծին վանական համալիրի մուտքի մոտ պատրաստել հարթակ և տեղադրել եռալեզու ցուցանակ: |
| 2 | Ծրագրի բարեգործական որակման նպատակները | Նախատեսվում է ծրագրի շրջանակներում, օրենքով սահմանված կարգով օգտվել ավելացված արժեքի հարկի (ԱԱՀ) վճարումից ազատվելու արտոնությունից: |
| 3. | Բարեգործը (բարեգործները) | Հայ Բարեգործական Ընդհանուր Միություն |
| 4. | Ծրագրի կատարողը | Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին, ՀՎՀՀ 05531764 |
| 5. | Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը | Մայր Աթոռ Սուր Էջմիածին, բնագավառը՝ եկեղեցաշինություն: |
| 6. | Ծրագրի բյուջեն | 2.403.090 ՀՀ դրամ |
| 7. | Բարեգործություն ստացողը | Համատարած հայ ժողովուրդը և այցելուները: |
| 8. | Ծրագրի իրականացման տևողությունը | 17 դեկտեմբեր 2013թ. – 30 մարտ 2014թ.: |
| 9. | Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը | Ծրագրի իրականացման ընթացքում նախատեսվում է Հաղարծին վանական համալիրի մուտքի մոտ տեղադրել եռալեզու ցուցանակ՝ 2.403.090 ՀՀ դրամ գումարով: Ծրագիրը իրականացվում է «Շիրակ ինժեներինգ քոնստրաքշն» ՓԲԸ-ի (ՀՀ, ք. Գյումրի, Մուսայելյան 76Ա, բն. 12, ՀՎՀՀ 05531764) կողմից, պայմանագիր՝ կնքված 17.12.2013թ.: |
| 10. | Ձեռք բերվող ապրանքների, ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները, նախատեսվող գինը | Նախատեսվում է իրականացնել Հաղարծին վանական համալիրի մուտքի մոտ եռալեզու ցուցանակ տեղադրու աշխատանքները՝ իր լուսավորությունով, պանտվանդանով և հարթակով՝ 2.403.090 ՀՀ դրամ գումարով՝ առանց ԱԱՀ: |
| 11. | Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսերը | Չի նախատեսվում |
| 12. | Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառա-վարման մարմինների և այլ կազմակերպությունների հետ | Նախատեսվում է համագործակցություն Դիլիջանի քաղաքապետարանի և Տավուշի մարզի մարզպետարանի հետ: |
| 13. | Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը | Նախատեսվում է տեխնիկական հսկողություն՝ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի ճարտարապետաշինարարական և ֆինանսական բաժինների և ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի կողմից: Ծրագրի ավարտից հետո կտրվի ամփոփ տեղեկություն: |

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ**
**ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

# Ո Ր Ո Շ Ու Մ

**14 մարտի 2014 թվականի N Մ- 193 - Ա**
**քաղ. Երևան**

## ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ «ՍԵՎԱՆԻ ՎԱԶԳԵՆՅԱՆ ԴՊՐԱՆՈՑԻ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԻ ԲԱՐԵԼԱՎՈՒՄ» ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2014 թվականի մարտի 6-ի N 3.8-2/3340-14, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության 2014 թվականի մարտի 4-ի N 02/1326-14 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2014 թվականի մարտի 3-ի N ՎՄ/3-4/2380-14 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Բարեգործական որակել Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի կողմից իրականացվող՝ 78,000,000 դրամ արժողությամբ «Սևանի Վազգենյան դպրանոցի տնտեսական պայմանների բարելավում» ծրագիրը (կցվում է):

2. Սահմանել, որ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի (ՀՎՀՀ 04703401) կողմից կնքված՝ ստորև նշված պայմանագրերով նախատեսված գործարքներն անմիջականորեն կապված են սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունեն զգալի նշանակություն՝

1) «ՀայՌուսգազարդ» ՓԲԸ-ի Սևանի ԳԳՄ-ի հետ (ՀՎՀՀ՝ 00046317) 2006 թվականի մայիսի 16-ին կնքված N Ա 14104063118 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է 2014 թվականի հունվարի 1-ից մինչև 2016 թվականի դեկտեմբերի 31-ն ընկած ժամանակահատվածում բնական գազի ծառայությունների մատուցում՝ 30,000,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի.

2) «Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 01520882) 2013 թվականի սեպտեմբերի 10-ին կնքված N ԿՊ0054 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է 2014 թվականի հունվարի 1-ից մինչև 2016 թվականի դեկտեմբերի 31-ն ընկած ժամանակահատվածում էլեկտրաէներգիայի ծառայությունների մատուցում՝ 30,000,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի.

3) «Սևանի հացի գործարան» ՓԲԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 08603531) 2008 թվականի օգոստոսի 21-ին կնքված N-1 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է 2014 թվականի հունվարի 1-ից մինչև 2016 թվականի դեկտեմբերի 31-ն ընկած ժամանակահատվածում հացի մատակարարում՝ 18,000,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

3. Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնին՝

1) սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի իրականացման շրջանակներում մատակարար (կապալառու) կազմակերպությունների հետ կնքվելիք պայմանագրերի պատճենները ներկայացնել Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով՝ «Ավելացված արժեքի հարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի դրույթների համաձայն ավելացված արժեքի հարկից ազատվող ապրանքների ու ծառայությունների շրջանակը որոշելու համար.

2) ծրագրի ավարտից հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ծրագրի կատարման մասին ամփոփ տեղեկատվություն:

4. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է

ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ

ՎԱՐՉԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԲԱԺՆԻ ՏՆՕՐԵՆ

ՄՈՒՇԵՂ ԵՊԻՍԿՈՊՈՍ ԲԱԲԱՅԱՆԻ ԿՈՂՄԻՑ

«21» ________ 2014 թ.

3/7

Սևանի Վազգենյան դպրանոցի տնտեսական պայմանների բարելավման

ԾՐԱԳԻՐ

| | | |
|---|---|---|
| 1 | Ծրագրի նպատակը | Ծրագրի նպատակն է բարելավել դպրանոցի տնտեսական պայմանները, առավել բարենպաստ դարձնելով սաների կենցաղային և ուսումնակրթական մակարդակը՝ նպաստելով ուսյալ և լուսամիտ հոգևոր սպասավորների կրթությանը |
| 2 | Ծրագրի բարեգործական որակման նպատակները | Նախատեսվում է ծրագրի շրջանակներում, օրենքով սահմանված կարգով օգտվել ավելացված արժեքի հարկի (ԱԱՀ) վճարումից ազատվելու արտոնությունից: |
| 3. | Բարեգործը (բարեգործները) | Հայկական Բարեգործական Ընդհանուր Միություն |
| 4. | Ծրագրի կատարողը | Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին, ՀՎՀՀ 04703401 |
| 5. | Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը | ՀՀ, Գեղարքունիքի մարզ, Սևանի թերակղզի, ուսումնակրթական |
| 6. | Ծրագրի բյուջեն | 78 000 000 ՀՀ դրամ: |
| 7. | Բարեգործություն ստացողը | Սևանի Վազգենյան Դպրանոցի սաները |
| 8. | Ծրագրի իրականացման տևողությունը | 01 հունվարի 2014թ. – 31 դեկտեմբերի 2016թ.: |
| 9. | Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը | Ծրագրի իրականացման ընթացքում նախատեսվում են մոտ 87 սաներ կրթող Սևանի Վազգենյան դպրանոցն ապահովել բնական գազով, էլեկտրաէներգիայով, հաց և հացամթերքով՝ 78 000 000 ՀՀ դրամով՝ առանց ԱԱՀ-ի, 01 հունվարի 2014թ. – 31 հունվարի 2016թ.:<br><br>Նախատեսվում է<br><br>**գազի մատակարարում՝** 30,000,000 ՀՀ դրամ առանց ԱԱՀ, որից 2014թ. – 10,000,000 դրամ, 2015թ. – 10,000,000 դրամ, 2016թ. – 10,000,000 դրամ, պայմանագիր ՆԱ14104063118՝ կնքված 16.05.2006 թ., լրացուցիչ համաձայնագիր՝ կնքված 25.04.2008թ., Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի և «ՀԱՅՌՈՒՍԳԱԶԱՐԴ» ՓԲԸ (ՀՎՀՀ 00046317) Սևանի ԳԳՄ-ի միջև:<br><br>**էլեկտրաէներգիայի մատակարարում՝** 30,000,000 ՀՀ դրամ առանց ԱԱՀ, որից 2014թ. – 10,000,000 դրամ, 2015թ. – 10,000,000 դրամ, 2016թ. – 10,000,000 դրամ, պայմանագիր թիվ ԿՊ0054, կնքված 10.09.2013թ. Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի և «Հայաստանի էլեկտրական ցանցեր» (ՀՎՀՀ 01520882) ՓԲԸ-ի միջև, Հավելված N4, քարտի համարը՝ 510000000078, «Գեղամա» մասնաճյուղ:<br><br>**հացի և հացամթերքի մատակարարում՝** 18,000,000 ՀՀ դրամ առանց ԱԱՀ, որից 2014թ. – 6,000,000 դրամ, 2015թ. – 6,000,000 դրամ, 2016թ. – 6,000,000 դրամ, պայմանագիր N1՝ կնքված 21.08.2008թ., Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի և «Սևանի հացի գործարան» ՓԲԸ-ի (ՀՎՀՀ 08603531) միջև: |
| 10 | Ձեռք բերվող ապրանքների, ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները, նախատեսվող գինը | Նախատեսվում է սպառել մոտ 30,000,000 դրամի գազ, 30,000,000 դրամի էլեկտրաէներգիա, 18,000,000 դրամի հաց և հացամթերք, ընդամենը 78,000,000 ՀՀ դրամով, առանց ԱԱՀ: |
| 11 | Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսերը | Այլ ծախսեր չեն նախատեսվում |
| 12 | Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների և այլ կազմակերպությունների հետ | Նախատեսվում է համագործակցություն Սևանի քաղաքապետարանի հետ |
| 13 | Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը | Նախատեսվում է ադմինիստրատիվ հսկողություն Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի Վարչատնտեսական և Ֆինանսական բաժինների և ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի կողմից: Յուրաքանչյուր եռամսյակ հանձնաժողովին կներկայացվեն ծրագրի շրջանակներում կատարված աշխատանքների մասին տեղեկություններ, ծրագրի ավարտից հետո կտրվի ամփոփ տեղեկություն: |

3/7

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ**
**ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**14 մարտի 2014 թվականի N Մ-194-Ա**
**քաղ. Երևան**

## «ԼՈՒՍԱԲԱՑ» ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ՀԱՍՑԵՈՎ ՍՏԱՑՎԱԾ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2014 թվականի փետրվարի 21-ի N 3/3.8-2/2573-14, Հայաստանի Հանրապետության մշակույթի նախարարության 2014 թվականի փետրվարի 21-ի N 05/3.1/596-14 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2014 թվականի փետրվարի 24-ի N ՎՄ/3-4/2006-14 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ  է.***

1. Բարեգործական որակել «Լուսաբաց» մշակութային հիմնադրամի հասցեով Շվեյցարիայի հանրային ռադիոյի և հեռուստաընկերության SRG SSR ոչ առևտրային կազմակերպության կողմից ստացված բեռի՝ (հեռուստատեսային սարքավորումներ) 4 տեղ, 920 կգ ընդհանուր քաշով, 60 եվրո արժողությամբ, փոխադրման ծախսերը կազմել են 585,900 դրամ, ՄԾՓ ՏՄ) ներմուծման ծրագիրը:

2. «Լուսաբաց» մշակութային հիմնադրամին՝ նշված բեռի համապատասխան ձևակերպումներն ավարտելուց հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկատվություն:

3. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության մշակույթի նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ                    Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

# Ո Ր Ո Շ Ու Մ

**14 մարտի 2014 թվականի N Մ- 195 - Ա**
**քաղ. Երևան**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2014 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 6-Ի N Մ-043-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻՆ ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔԻ ՄԱՍԻՆ

(Հայկական կարմիր խաչի ընկերություն)

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2014 թվականի փետրվարի 28-ի N 3/3.8-2/3011-14 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2014 թվականի փետրվարի 25-ի N ՎՄ/3-4/2122-14 եզրակացությունները,* **ո ր ո շ ու մ  է.**

1. Սահմանել, որ Հայկական կարմիր խաչի ընկերության կողմից կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքն անմիջականորեն կապված է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի՝ 2014 թվականի փետրվարի 6-ի Հայկական կարմիր խաչի ընկերության կողմից իրականացվող «Աջակցություն սիրիահայերին» N Մ-043-Ա որոշմամբ հաստատված դրամաշնորհային ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

«Բեներիկ» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 00082634) 2014 թվականի փետրվարի 17-ին կնքված պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է «Աջակցություն սիրիահայերին» ծրագրի շրջանակներում շահառուներին տրամադրել 263 հատ անվանական նվեր քարտեր՝ 40,131,000 դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության սփյուռքի նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ                                                                 Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ**
**ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

**14 մարտի 2014 թվականի N Մ- 196 - Ա**
**քաղ. Երևան**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2013 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 27-Ի N Մ-1310-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻՆ ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔԻ ՄԱՍԻՆ

(«Մայրի» հասարակական կազմակերպություն)

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2014 թվականի փետրվարի 28-ի N 3.8-2/3012-14 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2014 թվականի փետրվարի 25-ի N ՎՄ/3-4/2123-14 եզրակացությունները,* **ո ր ո շ ու մ  է.**

1. Սահմանել, որ «Մայրի» հասարակական կազմակերպության կողմից կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքն անմիջականորեն կապված է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի՝ 2013 թվականի դեկտեմբերի 27-ի «Մայրի» հասարակական կազմակերպության կողմից իրականացվող «Սոցիալական ինտեգրման կենտրոնի ստեղծում» N Մ-1310-Ա (2014 թվականի մարտի 14-ի N Մ-197-Ա որոշման խմբագրությամբ) որոշմամբ հաստատված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

«Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ-ի հետ «Արևմուտք» մասնաճյուղ (ՀՎՀՀ՝ 01520882) 2014 թվականի հունվարի 17-ին կնքված N 270612 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է 2014 թվականի հունվարի 1-ից մինչև դեկտեմբերի 31-ն ընկած ժամանակահատվածում էլեկտրաէներգիայի ծառայությունների մատուցում՝ 1,200,000 դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ                                        Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ**
**ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**

**14 մարտի 2014 թվականի N Մ- 197 - Ա**
**քաղ. Երևան**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2013 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 27-Ի N Մ- 1310-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՈՒ ՆՈՒՅՆ ԾՐԱԳՐԻՆ ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ**
(«Մայրի» հասարակական կազմակերպություն)

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2014 թվականի փետրվարի 20-ի N 3/3.8-2/2537-14, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության 2014 թվականի փետրվարի 11-ի N 02/745-14 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2014 թվականի փետրվարի 10-ի N ՎՄ/3-4/1313-14 եզրակացությունները,* **ո ր ո շ ու մ է.**

1. Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2013 թվականի դեկտեմբերի 27-ի «Մայրի» հասարակական կազմակերպության կողմից իրականացվող «Սոցիալական ինտեգրման կենտրոնի ստեղծում» N Մ-1310-Ա որոշմամբ հաստատված ծրագրի 10-րդ կետի 8-րդ ենթակետում «1,500,000 դրամ» բառերը փոխարինել «2,000,000 դրամ» և 11-րդ ենթակետում «950,000 դրամ» բառերը փոխարինել «450,000 դրամ» բառերով, ինչպես նաև ծրագրի 10-րդ կետի 12-րդ ենթակետը լրացնել «1,200,000 դրամ բառերով» իսկ 13 և 14-րդ ենթակետերն ամբողջությամբ հանել (խմբագրված ծրագիրը կցվում է):

2. Սահմանել, որ «Մայրի» հասարակական կազմակերպության կողմից (ՀՎՀՀ՝ 02594556) կնքված՝ ստորև նշված պայմանագրերով նախատեսված գործարքներն անմիջականորեն կապված են սույն որոշման առաջին կետում նշված որոշմամբ հաստատված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունեն զգալի նշանակություն՝

1) «Փրինթ Ունյ» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 01829451) 2013 թվականի դեկտեմբերի 28-ին կնքված պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է կենցաղային սարքավորումների և խոհանոցային պարագաների ու պիտույքների մատակարարում՝ 1,443,167 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի.

2) «Արդատեք» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 01558445) 2013 թվականի հունվարի 11-ին կնքված պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է կարի մեքենա և կարի թելերի մատակարարում՝ 155,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի.

3) «Սարգիս Աղաջանյան» ԱՁ-ի հետ (ՀՎՀՀ՝ 27813871) 2014 թվականի հունվարի 21-ին կնքված պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է նկարչական պարագաների մատակարարում՝ 163,630 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի.

4) «Հոբեյս» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 00111086) 2014 թվականի հունվարի 24-ին կնքված պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է խոհանոցային և լոգարանային պարագաների ու պիտույքների մատակարարում՝ 129,025 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի.

5) «Ալեքս Գրիգ» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 01842346) 2014 թվականի հունվարի 22-ին կնքված պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է տնտեսական ապրանքների մատակարարում՝ 118,837 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարություն և Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

Ի լրումն մեր 2014 թվականի մարտի 19-ի
N 15/15.8/3863-14 ելիցի

20 մարտի 2014թ.

No 15/15.8/3941-14

ՈՒՂՂՈՒՄ

Ձեզ ուղարկված Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2014 թվականի մարտի 14-ի N Մ-197-Ա որոշման 2-րդ կետի 1-ին ենթակետում «Փրինթ Ուեյ» ՍՊԸ-ի» բառերի փոխարեն կարդալ «Փրիթի Ուեյ» ՍՊԸ-ի» բառերը և 4-րդ ենթակետում «Հոբեյս» ՍՊԸ-ի» բառերի փոխարեն կարդալ «Հոմբեյս» ՍՊԸ-ի» բառերը:

ՀՀ կառավարության բարեգործական
ծրագրերի համակարգման հանձնաժողով

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է

Սոցիալական ինտեգրման կենտրոն "Մայրի" հասարակական կազմակերպության տնօրեն Զարուհի Մանուկյանի կողմից

«13» փետրվարի 2014թ.

Սոցիալական ինտեգրման կենտրոնի ստեղծում

ԾՐԱԳԻՐ

| | | |
|---|---|---|
| 1. | Ծրագրի նպատակը | Ծրագրի նպատակն է հատուկ կարիքներով երեխաների և երիտասարդների ինտեգրումը հասարակության մեջ: Ծրագիրը ուղղված է՝ 1. Բացահայտելու հատուկ կարիքներով երեխաների անհատական օժտվածությունները եւ հնարավորությունները: 2. Ապահովելու երեխաներին օրական ութ ժամ կենսատարածքով, 3. Ապահովելու երեխաներին հասակակիցների հետ շփման հնարավորություն մշակույթային համատեղ նախագծերին մասնակցելու միջոցով: 4. Ժամանակի ընթացքում փոխելու հասարակության մեջ արմատավորված կարծիքը հատուկ կարիքներով երեխաների վերաբերյալ եւ հրավիրել ուշադրություն նրանց կարիքներին |
| 2. | Ծրագրի բարեգործական որակման նպատակը | Ակնկալում ենք ծրագրի շրջանակներում օրենքով սահմանված կարգով օգտվել Հայաստանի Հանրապետության հարկերի, տուրքերի, պարտադիր վճարների գծով օրենքով սահմանված արտոնություններից (այսուհետ՝ հարկային արտոնություններ |
| 3. | Բարեգործը | 1.Գերմանիայի Դաշնային Հանրապետության առընթեր BMZ հիմնադրամ Հասցե՝ Վայլմնայստեր շտրասսե 16, D-10178 Berlin |
| 4. | Ծրագիրը կատարողը | Սահմանափակ հնարավորություններով երեխաների և պատանիների սոցիալական ինտեգրման կենտրոն "Մայրի" ՀԿ |



| | | |
|---|---|---|
| 5. | Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը | Սկզբնական շրջանում՝ ք. Երևան, հետագայում՝ նաև ՀՀ մարզեր Բնագավառը՝ սոցիալական |
| 6. | Ծրագրի բյուջեն | 16,2 մլն (տասնվեց միլիոն, երկու հարյուր հազար դրամ) դրամ |
| 7. | Բարեգործություն ստացողը | Ցանկացած ախտորոշմամբ վեց տարեկանից բարձր տարիք ունեցող հատուկ կարիքներով անձինք |
| 8. | Ծրագրի իրականացման տևողությունը | 10 տարի (2014թ. հունվարի 1-ից – 2024թ-ի հունվարի մեկ ) |
| 9. | Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը | Երևան, Շենգավիթի շրջան, Եղբայրության 11 հասցեում գտնվող շինությունում 6 արհեստանոցների ներքին հարդարում, կահավորում, սարքավորումներով ապահովում: Ներքին հարդարման աշխատանքներ կավարտվեն 30.01.2014, Կահավորումը և սարքավորումներով ապահովում նախատեսվում է ավարտել 2014թ ընթացքում.: Պահանջվող գումարն է մոտ 15 մլն (տասնհինգ միլիոն) դրամ |
| 10. | Ձեռք բերվող (ներմուծվող) ապրանքների ու ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները և նախատեսվող գինը | 1. Ներքին հարդարման աշխատանքների համար պահանջվող գումարն է 1500,000 մլն դրամ (մեկ միլիոն հինգ հարյուր հազար դրամ)<br><br>2. Խոհանոցի համար կահույք 1,500,000.00 (մեկ միլիոն հինգ հարյուր հազար դրամ) դրամ<br>3. Ձեռագործ աշխատանքների արհեստանոցի կահույք 1,300,000 (մեկ միլիոն երեք հարյուր հազար) դրամ<br><br>4. Նկարչական արհեստանոցի համար կահույք 1300,000 (մեկ միլիոն երեք հարյուր հազար) դրամ<br><br>5. Խեցեգործության արհեստանոցի համար կահույք, 1,200,000 (մեկ միլիոն երկու հարյուր հազար) դրամ<br><br>6. Փայտամշակման արհեստանոցի կահույք, կահույքի հումք 1,500,000 (մեկ միլիոն հինգ հարյուր հազար) դրամ<br>7. Ադմինիստրատցիայի սենյակի համար կահույք և տեխնիկական սարքավորում 1,500,000 (մեկ միլիոն հինգ հարյուր հազար) դրամ<br>8 Խոհանոցի համար էլեկտրական սարքավորումներ, սպասք, տնտեսական ապրանքներ 2,000,000 (երկու միլիոն) դրամ |

| | | |
|---|---|---|
| | | 9. Ձեռագործ աշխատանքների արհեստանոցի էլեկտրական և այլ սարքեր և գործիքներ 1,500,000 (մեկ միլիոն հինգ հարյուր հազար) դրամ<br>10. Նկարչական և խեցեգործական արհեստանոցի համար վրձին ներկեր, նյութեր, գլազուր, կավ և այլն 850,000 (ութ հարյուր հիսուն հազար ) դրամ<br>11. Փայտամշակման արհեստանոցի սարքավորումներ 450,000 (չորս հարյուր հիսուն հազար) դրամ<br>12. Էլեկտրաէներգիայի ծախս 1200000դրամ |
| 11. | Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսերը | |
| 12. | Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, այլ կազմակերպությունների հետ | Սոցիալական Ապահովման Նախարարություն, Առողջապահության նախարարություն, ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով |
| 13. | Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը | «Մայրի» ՀԿ հոգաբարձուների խորհուրդ, BMZ Հիմնադրամ, ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով<br>Վերահսկողությունը կիրականացվի հաշվետվությունների տեսքով |

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

**14 մարտի 2014 թվականի N Մ- 198 -Ա**
**քաղ. Երևան**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱ-ԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2012 ԹՎԱԿԱՆԻ ՕԳՈՍՏՈՍԻ 31-Ի N Մ-703-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԵՎ ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին)

---

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի 2014 թվականի փետրվարի 10-ի թիվ 72 գրությունն ու Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2014 թվականի մարտի 3-ի N 3/3.8-2/3068-14 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2014 թվականի փետրվարի 25-ի N ՎՄ/3-4/2119-14 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2012 թվականի օգոստոսի 31-ի Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի կողմից իրականացվող «Վեհարանի շենքի վերակառուցում» ծրագրի մասին» N Մ-703-Ա որոշման մեջ և որոշմամբ հաստատված ծրագրում կատարել հետևյալ փոփոխությունները՝

1) որոշման 2-րդ կետի 2-րդ և 3-րդ ենթակետերում «մինչև 2013 թվականի դեկտեմբերի 31-ը» բառերը փոխարինել «մինչև 2016 թվականի դեկտեմբերի 31-ը» բառերով.

2) որոշմամբ հաստատված ծրագրի 8-րդ կետում «31 դեկտեմբեր 2013 թ.» բառերը փոխարինել «31 դեկտեմբեր 2016 թ.» բառերով:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**14 մարտի 2014 թվականի N Մ-199-Ա**
**քաղ. Երևան**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2009 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՍԻ 29-Ի N Մ-512-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՈՒ ԿԻՑ ԾՐԱԳՐՈՒՄ ԵՎ 2010 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 8-Ի N Մ-658-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Հայ կաթողիկե եկեղեցու Հայաստանի համայնք)

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2014 թվականի փետրվարի 18-ի N 3/3.8-2/2346-14 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2014 թվականի փետրվարի 19-ի N ՎՄ/3-4/1880-14 եզրակացությունները, ինչպես նաև հաշվի առնելով Հայ կաթողիկե եկեղեցու Հայաստանի համայնքի 2014 թվականի փետրվարի 11-ի N 15/014 գրությունը,* ***ո ր ո շ ու մ  է.***

1. Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2009 թվականի հուլիսի 29-ի «Հայաստանի հայ կաթողիկե եկեղեցի» կրոնական կազմակերպության կողմից իրականացվող ծրագրի մասին» N Մ-512-Ա որոշման մեջ ու կից ծրագրում կատարել հետևյալ փոփոխությունները՝

1) որոշման 1-ին կետում «664,650,000 դրամ» բառերը փոխարինել «982,940,416 դրամ» բառերով.

2) որոշմանը կից ծրագիրը կարդալ նոր խմբագրությամբ (կցվում է)

2. Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2010 թվականի հոկտեմբերի 8-ի «Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2009 թվականի հուլիսի 29-ի N Մ-512-Ա որոշմամբ հաստատված ծրագրին հարակից գործարքի մասին» N Մ-658-Ա որոշման 1-ին կետի երկրորդ պարբերությունում «615,116,647 դրամ» բառերը փոխարինել «889,547,783 դրամ» բառերով:

3. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ      Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

**ՀԱՍՏԱՏՎԱԾ Է**
Հայ կաթողիկե եկեղեցու հայաստանյան համայնքի առաջնորդ

Հայր Ռաֆաել Արքեպս. Մինասյան

«...11...» փետրվար 2014թ

Հայ կաթողիկե եկեղեցու հայաստանյան համայնքի կողմից իրականացվող
ԵԿԵՂԵՑՈՒ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳԻՐ

| | | |
|---|---|---|
| 1 | Ծրագրի նպատակը | Հայ Կաթողիկե Համայնքը Հայաստանում գրանցվել է 1992 թվականից: Շիրակի մարզի Գյումրի քաղաքում հայ կաթողիկեների թիվը կազմում է մոտ 15 հազար հավատացյալ: Կաթողիկե համայնքը ժամանակին ունեցել է գործող եկեղեցի, որը կառուցվել է 1845 թվականին, սակայն 1926 թվականի Գյումրիում տեղի ունեցած երկրաշարժի ժամանակ այն խոնարհվել է և առ այսօր համայնքում չկա եկեղեցի: Հոգևոր արարողությունները կատարվում են առաջնորդարանի նկուղում հարմարեցված տարածքում, որը նախ չափազանց փոքր է համայնքի բոլոր հավատացյալներին ներառնելու համար, և երկրորդ՝ այնտեղ հնարավոր չէ լիարժեք կերպով կատարել բոլոր տեսակի հոգևոր ծիսական արարողակարգերը:<br>Ծրագրի նպատակն է Շիրակի մարզի Գյումրի քաղաքում կառուցել եկեղեցի Հայ Կաթողիկե Համայնքի հոգևոր ծիսական կարիքները ապահովելու համար: |
| 2 | Ծրագրի բարեգործական որակման նպատակը | Բարեգործները նախատեսում են ծրագրի շրջանակներում օրենքով սահմանված կարգով օգտվել ՀՀ հարկային արտոնություններից: |
| 3 | Բարեգործը | Ծրագիրը հիմնականում ֆինանսավորում են ֆրանսիական Օվրե Դորյան, գերմանական Ռենովաբիս, Կիրխե Ին Նոթ հասարակական կազմակերպությունները, Հռոմի քահանայապետական հայ Լևոնյան վարժարանը եւ այլ անհատ բարերարներ: |
| 4 | Ծրագիրը կատարողը | Ծրագիրն անմիջականորեն իրականացվում է Հայ Կաթողիկե Եկեղեցու հայաստանյան համայնքի առաջնորդարանի կողմից (ՀՎՀՀ 05513258): Ք. Գյումրի, Աբարբեկյան 82: |
| 5 | Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը | Ծրագիրն իրականացվելու է Գյումրի քաղաքում՝ Հաղթանակի պողոտա 45 հասցեում: Ծրագիրն առնչվում է կրոնական բնագավառի հետ: |
| 6 | Ծրագրի բյուջեն | Ծրագրի բյուջեն կազմում է<br>***982,940,416 (Ինը հարյուր ութսուներկու միլիոն ինը հարյուր քառասուն հազար չորս հարյուր տասնվեց) ՀՀ դրամ առանց ավելացված արժեքի հարկի*** |
| 7 | Բարեգործություն ստացողը | Ծրագրից օգտվելու են Շիրակի Մարզի Գյումրի քաղաքի Հայ Կաթողիկե Համայնքի մոտ 15000 հավատացյալներ: |
| 8 | Ծրագրի իրականացման տևողությունը | 2009 հուլիս-2014 դեկտեմբեր: |
| 9 | Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը | Ծրագրի իրականացման շրջանակներում իրականացվելու են՝<br>▪ շինարարական աշխատանքներ<br>▪ վերահսկման աշխատանքներ<br>▪ նախագծման աշխատանքներ<br>▪ կահավորում և ձևավորում- մոտ<br>***982,940,416 (Ինը հարյուր ութսուներկու միլիոն ինը հարյուր քառասուն հազար չորս հարյուր տասնվեց) ՀՀ դրամ առանց ավելացված արժեքի հարկի*** |

| | | |
|---|---|---|
| 10 | Ձեռք բերվող (ներմուծվող) ապրանքների ու ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները և նախատեսվող գինը | Ծրագրի իրականացման ընթացքում իրականացվելու են՝<br>▪ Շինարարական աշխատանքներ<br>▪ Վերահսկման աշխատանքներ<br>▪ Նախագծման աշխատանքներ<br>▪ Եկեղեցու կահավորում- մոտ<br>*982,940,416 (Ինը հարյուր ութսուներկու միլիոն ինը հարյուր քառասուն հազար չորս հարյուր տասնվեց) ՀՀ դրամ առանց ավելացված արժեքի հարկի* |
| 11 | Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսերը | Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպչական ծախսեր ներկայացված ծրագրով նախատեսված չեն: |
| 12 | Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման և այլ մարմինների հետ | Ծրագրի իրականացման ընթացքում կազմակերպությունը համագործակցում է Շիրակի մարզպետարանի և Գյումրու քաղաքապետարանի հետ: |
| 13 | Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը | Ծրագրի արդյունավետությունը գնահատվում է մի քանի չափորոշիչներով: Հիմնական վերահսկողությունն իրականացվում է ֆինանսավորող բարերարների կողմից: Այդ նպատակով նրանք պետք է ներգրավվեն ներքին խորհրդատուների, տեղական և միջազգային ստուգիչների: Սահմանված կարգով ՀՀ Կառավարության Բարեգործական Ծրագրերի Համակարգման Հանձնաժողովին է ներկայացվելու համառոտ տեղեկատվություն: |

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**14 մարտի 2014 թվականի N Մ- 200 -Ա**
**քաղ. Երևան**

## «Ա. Ի. ԱԼԻԽԱՆՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԳԻՏԱԿԱՆ ԼԱԲՈՐԱՏՈՐԻԱ (ԵՐԵՎԱՆԻ ՖԻԶԻԿԱՅԻ ԻՆՍՏԻՏՈՒՏ)» ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ՀԱՍՑԵՈՎ ՍՏԱՑՎԱԾ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2014 թվականի փետրվարի 17-ի N 3/3.8-2/2264-14, Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարության 2014 թվականի փետրվարի 19-ի N 01/12.2/834-14, Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության 2014 թվականի փետրվարի 18-ի N 03/07-1/1523-14 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2014 թվականի փետրվարի 18-ի N ՎՄ/3-4/1847-14 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ  է.***

1. Բարեգործական որակել «Գերմանական էլեկտրոնային սինքրոտրոն (DESY)» ոչ առևտրային կազմակերպության կողմից որպես օժանդակություն «Ա. Ի. Ալիխանյանի անվան Ազգային գիտական լաբորատորիա (Երևանի ֆիզիկայի ինստիտուտ)» հիմնադրամի հասցեով ուղարկված գիտահետազոտական սարքավորումների (3 տեղ, 2,430 կգ ընդհանուր քաշով, 610 եվրոյին համարժեք դրամ ընդհանուր արժողությամբ՝ ներառյալ փոխադրման ծախսերը, «ՄԾՓ» ՏՄ) ներմուծման ծրագիրը:

2. «Ա. Ի. Ալիխանյանի անվան Ազգային գիտական լաբորատորիա (Երևանի ֆիզիկայի ինստիտուտ)» հիմնադրամին՝ նշված բեռի համապատասխան ձևակերպումներն ավարտելուց հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկատվություն:

3. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարություն, Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ　　　　　　　　　　　　Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

### Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

**14 մարտի 2014 թվականի N Մ - 201 - Ա**
**քաղ. Երևան**

### ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ «ՄՆՆԴԱՄԹԵՐՔԻ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏԻ ՌԻՍԿԵՐԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ և ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅԱՆ ԳԻՏԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ «ԿԵՆՍԱԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԵՎ ԿԵՆՍԱԱՊԱՀՈՎՈՒԹՅԱՆ ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԶՈՐԱՑՈՒՄ» ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2014 թվականի մարտի 12-ի N 3/3.8-2/3694-14, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության 2014 թվականի մարտի 13-ի N 02/1520-14, Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության նախարարության 2014 թվականի մարտի 14-ի N ՍԿ/ԱՀ-2/1242-14 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2014 թվականի մարտի 13-ի N ՎՄ/3-4/2853-14 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Բարեգործական որակել «Սննդամթերքի անվտանգության ոլորտի ռիսկերի գնահատման և վերլուծության գիտական կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության կողմից (ք.Երևան Նուբարաշեն, Մասիսի խճուղի 107/2, ՀՎՀՀ 03506324) իրականացվող՝ 418,000 եվրոյին համարժեք դրամ արժողությամբ «Կենսաանվտանգության և կենսաապահովության կարողությունների հզորացում» ծրագիրը (կցվում է):

2. «Սննդամթերքի անվտանգության ոլորտի ռիսկերի գնահատման և վերլուծության գիտական կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպությանը՝

1) սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի իրականացման շրջանակներում մատակարար (կապալառու) կազմակերպությունների հետ կնքվելիք պայմանագրերի պատճենները ներկայացնել Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով՝ «Ավելացված արժեքի հարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի դրույթների համաձայն ավելացված արժեքի հարկից ազատվող ապրանքների ու ծառայությունների շրջանակը որոշելու համար.

2) մինչև յուրաքանչյուր եռամսյակին հաջորդող ամսվա 25-ը՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել տեղեկություններ տվյալ եռամսյակի ընթացքում՝ նշված ծրագրի շրջանակներում կազմակերպության կողմից, ինչպես նաև կազմակերպությանը մատակարարված ապրանքների ու մատուցված ծառայությունների, իսկ ծրագրի ավարտից հետո մեկամսյա ժամկետում՝ ամփոփ տեղեկություններ ծրագրի կատարման մասին:

3. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարություն, Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է
Սննդամթերքի անվտանգության ոլորտի
ռիսկերի գնահատման և վերլուծության
գիտական կենտրոն ՊՈԱԿ-ի տնօրեն

Խ.Սարգսյանի կողմից
<<3>> մարտ 2014թ.

## <<ԿԵՆՍԱԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԵՎ ԿԵՆՍԱԱՊԱՀՈՎՈՒԹՅԱՆ ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԶՈՐԱՑՈՒՄ>> ծրագիր

| | | |
|---|---|---|
| 1 | Ծրագրի նպատակը | Հզորացնել ՀՀ Գյուղատնտեսության նախարարության Սննդամթերքի անվտանգության պետական ծառայության Սննդամթերքի անվտանգության ոլորտի ռիսկերի գնահատման և վերլուծության գիտական կենտրոն ՊՈԱԿ-ի ախտածին հարուցիչների հետազոտությամբ և ախտորոշմամբ զբաղվող լաբորատոր կարողությունները՝ հասցնելով կենսաանվտանգության և կենսաապահովության միջազգային չափանիշների ընդունված ստանդարտներին: ՀՀ Գյուղատնտեսության նախարարության Սննդամթերքի անվտանգության պետական ծառայության Սննդամթերքի անվտանգության ոլորտի ռիսկերի գնահատման և վերլուծության գիտական կենտրոնն զբաղվում է Հայաստանում արձանագրված կենդանիների հատուկ վտանգավոր վարակիչ հիվանդությունների ախտորոշման, դրանց կանխարգելման և պայքարի հիմնահարցերով, ինչպես նաև մեր երկրի տարածք ներմուծվող գրանցման ենթակա անասնաբուժական կեսաբանական պատվաստանյութերի և պատրաստուկների փորձաքննությամբ: Նշված ծրագիրը թույլ կտա արդիականացնել գիտական կենտրոնի կարողությունները և իրականացնել գործունեությունը միջազգային չափանիշների համապատասխան պայմաններում: |
| 2 | Ծրագրի բարեգործական որակման նպատակը | Օրենքով սահմանված կարգով օգտվել Հայաստանի Հանրապետության հարկերի, տուրքերի, պարտադիր վճարների գծով օրենքով սահմանված արտոնություններից: |
| 3 | Բարեգործը | Միացյալ ազգերի հանցագործությունների և արդարադատության հարցերով հետազոտական ինստիտուտ (UNICRI, Viale Maestri del Lavoro 10, 10127 , Թուրին, Իտալիա) |
| 4 | Ծրագրի կատարողը | ՀՀ Գյուղատնտեսության նախարարության Սննդամթերքի անվտանգության պետական ծառայության Սննդամթերքի անվտանգության ոլորտի ռիսկերի գնահատման և վերլուծության գիտական կենտրոն ՊՈԱԿ<br>ք. Երևան, Նուբարաշեն, Մասիսի խճուղի 107/2,<br>ՀՎՀՀ - 03506324 |
| 5 | Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը | ՀՀ, ք. Երևան – Կենսաբանական անվտանգություն և կենսաապահովություն |
| 6 | Ծրագրի բյուջեն | Ծրագրի ընդհանուր բյուջեն - 418 000 եվրոյին համարժեք դրամ<br>Ծրագրով նախատեսված գումարը տրամադրվելու է 15 Մարտ 2014թ.- 15 Մայիսի 2015թ. ընթացքում ելնելով աշխատանքային պլանով նախատեսված ժամկետներից:<br>Առաջին փուլի ամսվա համար նախատեսվում է ստանալ – 165500 եվրոյին համարժեք դրամ<br>Երկրորդ փուլի համար նախատեսվում է ստանալ – 252500 եվրոյին համարժեք դրամ |
| 7 | Բարեգործություն ստացողը | Հայաստանի Հանրապետությունը և համայնքները |
| 8 | Ծրագրի իրականացման տևողությունը | 14 ամիս /15.03.2014 – 15.05.2015թթ./ |
| 9 | Միջոցառումների նկարագրությունը և | Ծրագիրը բաղկացած է 3 հիմնական բաղադրիչներից. |

| | | |
|---|---|---|
| | ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը | 1. Վարանորոգման և շինարարական աշխատանքների նախագծային և նախագծա-նախահաշվային աշխատանքներ – 12000 եվրոյին համարժեք դրամ – ավարտված է: <br> 2. Բուն շինարարական և վերանորոգման աշխատանքներ – 255000 եվրոյին համարժեք դրամ – մարտ 2014 – դեկտեմբեր 2014 <br> 3. Լաբորատոր սարքավորումների և գույքի ձեռք բերում և տեղադրում – 135000 եվրոյին համարժեք դրամ – մայիս 2014 – դեկտեմբեր 2014 |
| 10 | Ձեռք բերվող /ներմուծվող/ ապրանքների ու ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները և նախատեսվող գինը | 1. Ծրագրի նախագծային և նախագծա-նախահաշվային աշխատանքներ – 12000 եվրոյին համարժեք դրամ: <br> Այս աշխատանքներըում ներառվում է նաև ՀՀ ՖՆ գնումների կազմակերպման համապատասխան լիցենզիա ստացած մասնագետի վարձելու գումարը, որը կազմում է 3000 եվրոյին համարժեք դրամ: <br> Զուտ նախագծա-նախահաշվային աշխատանքների համար նախատեսվում է 9000 եվրոյին համարժեք դրամ: <br> Ծրագրի այս բաղադրիչը ավարտված է և հետևաբար դրա համար չի նախատեսվում օգտվել Հայաստանի Հանրապետության հարկերի, տուրքերի, պարտադիր վճարների գծով օրենքով սահմանված արտոնություններից: <br> 2. Բուն շինարարական և վերանորոգման աշխատանքներ – 255000 եվրոյին համարժեք դրամ (ակնկալվում է հարկերից, տուրքերից և այլ պարտադիր վճարներից ազատում), որի մեջ մտնում է կենդանիների հատուկ վտանգավոր վիրուսային և բակտերիալ վարակների ախտորոշմամբ և հետազոտմամբ զբաղվող լաբորատոր տարածքների վերանորոգման և արդիականացման աշխատանքները լինելով բնդունված միջազգային կենսաանվտանգության և կենսաապահովության պահանջներից, ինչպես նաև կտուրի համապատասխան հատվածի վերանորոգումը: <br> 3. Սարքավորումների ձեռք բերում և տեղադրում – 135000 եվրոյին համարժեք դրամ (ակնկալվում է հարկերից, տուրքերից և այլ պարտադիր վճարներից ազատու), որի մեջ մտնում է լաբորատոր սարքավորումներ ձեռք բերումը – 96000 եվրոյին համարժեք դրամ և լաբորատոր և գրասենյակային կահույքի և գույքի ձեռք բերում, որը կազմելու է 39000 եվրոյին համարժեք դրամ: |
| 11 | Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպչական ծախսերը | Ծրագրի մշտադիտարկում և գնահատում – 4000 եվրոյին համարժեք դրամ: <br> Ծրագրի ներքին աուդիտ – 6000 եվրոյին համարժեք դրամ: <br> Կոմունալ ծախսեր – 6000 եվրոյին համարժեք դրամ: |
| 12 | Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, այլ կազմակերպությունների հետ | Սույն ծրագրի շրջանակներում չի նախատեսվում: |
| 13 | Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը | Միացյալ ազգերի հանցագործությունների և արդարադատության հարցերով հետազոտական ինստիտուտի կողմից իրականացվում է ծրագրի եռամսյակային վերահսկողություն հաշվետվությունների տեսքով, ծրագրի ընթացիք վերահսկողությունը իրականացվում է ՀՀ Գյուղատնտեսության Նախարարության Սննդամթերքի անվտանգության պետական ծառայության, ինչպես նաև ՀՀ Կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի կողմից: |

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

**14 մարտի 2014 թվականի N Մ - 202 - Ա**
**քաղ. Երևան**

## «ՀԱՅԱՍՏԱՆ» ՀԱՄԱՀԱՅԿԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ «ՎԱՐԴԵՆԻՍ - ՄԱՐՏԱԿԵՐՏ ԱՎՏՈՃԱՆԱՊԱՐՀԻ ՍՈՏՔ - ՔԱՐՎԱՃԱՌ ԽԱՉՄԵՐՈՒԿ, ՔԱՐՎԱՃԱՌ ԽԱՉՄԵՐՈՒԿ - ՉԱՐԵՔԹԱՐ ԵՎ ՉԱՐԵՔԹԱՐ - ԴՐՄԲՈՆ ՀԱՏՎԱԾՆԵՐԻ ԿԱՌՈՒՑՄԱՆ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆ» ՕԺԱՆԴԱԿ ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2014 թվականի փետրվարի 24-ի N 3/3.8-2/2687-14, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության 2014 թվականի փետրվարի 24-ի N 02/1087-14 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2014 թվականի փետրվարի 21-ի N ՎՄ/3-4/4676-14 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Բարեգործական որակել «Հայաստան» համահայկական հիմնադրամի կողմից իրականացվող՝ 18,100,000 դրամ ընդհանուր արժողությամբ «Վարդենիս - Մարտակերտ ավտոճանապարհի Սոտք - Քարվաճառ խաչմերուկ, Քարվաճառ խաչմերուկ – Չարեքթար և Չարեքթար - Դրմբոն հատվածների կառուցման տեխնիկական հսկողություն» օժանդակ ծրագիրը (կցվում է):

2. Սահմանել, որ սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի իրականացման նպատակով «Հայաստան» համահայկական հիմնադրամի կողմից (ՀՎՀՀ՝ 02507456) կնքված՝ ստորև նշված պայմանագրերով նախատեսված գործարքներն անմիջականորեն կապված են ծրագրի իրականացման հետ և դրա համար ունեն զգալի նշանակություն՝

1) «ՀՀ նախագծերի պետական արտագերատեսչական փորձաքննություն» ՓԲԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 01508665) 2013 թվականի դեկտեմբերի 13-ին կնքված N ԼՂՏՀ-Ճ-02/13 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է Քարվաճառի խաչմերուկ – Ճարեքթար 1-ին տեղամասի 12.6 կմ երկարությամբ հատվածի կառուցման առաջին փուլի շինարարական աշխատանքների տեխնիկական հսկողության իրականացում՝ 4,800,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի.

2) «Ճաննախագիծ» ինստիտուտ» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 00813453) 2013 թվականի դեկտեմբերի 13-ին կնքված N ԼՂՏՀ-Ճ-10/13 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է Սոտք-Քարվաճառ խաչմերուկի 2-րդ տեղամասի 8.45 կմ երկարությամբ հատվածի կառուցման առաջին փուլի շինարարական աշխատանքների տեխնիկական հսկողության իրականացում՝ 2,700,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի.

3) «Ճաննախագիծ» ինստիտուտ» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 00813453) 2013 թվականի դեկտեմբերի 13-ին կնքված N ԼՂՏՀ-Ճ-09/13 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է Սոտք-Քարվաճառ խաչմերուկի 1-ին տեղամասի 13.65 կմ երկարությամբ հատվածի կառուցման առաջին փուլի շինարարական աշխատանքների տեխնիկական հսկողության իրականացում՝ 2,800,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի.

4) «ՀՀ նախագծերի պետական արտագերատեսչական փորձաքննություն» ՓԲԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 01508665) 2013 թվականի դեկտեմբերի 13-ին կնքված N ԼՂՏՀ-Ճ-01/13 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է Չորեքթար-Դրմբոն 10 կմ երկարությամբ հատվածի կառուցման առաջին փուլի շինարարական աշխատանքների տեխնիկական հսկողության իրականացում՝ 3,600,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի.

5) «ՀՀ նախագծերի պետական արտագերատեսչական փորձաքննություն» ՓԲԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 01508665) 2013 թվականի դեկտեմբերի 13-ին կնքված N ԼՂՏՀ-Ճ-03/13 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է Քարվաճառ խաչմերուկի -Չորեքթար 2-րդ տեղամասի 9.8 կմ երկարությամբ հատվածի կառուցման առաջին փուլի շինարարական աշխատանքների տեխնիկական հսկողության իրականացում՝ 4,200,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի.

3. «Հայաստան» համահայկական հիմնադրամին՝ սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի ավարտից հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկատվություն:

4. Սույն որոշումն ուղարկել Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարություն, Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է

«Յայաստան» համահայկական
հիմնադրամի գործադիր տնօրեն
Արա Վարդանյան

«17» փետրվարի 2014թ.

«Վարդենիս-Մարտակերտ ավտոճանապարհի Սոթք-Քարվաճառ խաչմերուկ, Քարվաճառ խաչմերուկ- Չարեքթար և Չարեքթար-Դրմբոն հատվածների կառուցման տեխնիկական հսկողություն»

# ԾՐԱԳԻՐ

օժանդակ

| | | |
|---|---|---|
| 1. | Ծրագրի նպատակը | Օժանդակել Վարդենիսից Մարտակերտ տանող ավտոճանապարհի կառուցմանը |
| 2. | Ծրագրի բարեգործական որակման նպատակը | Օրենքով սահմանված կարգով օգտվել հարկային արտոնություններից |
| 3. | Ծրագիրը կատարողը | «Հայաստան» համահայկական հիմնադրամ (ՀՀ, քաղ. Երևան, Կառավարական տուն N 3, ՀՎՀՀ՝ 02507456) |
| 4. | Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը | ՀՀ Սյունիքի մարզ, ԼՂՀ, ճանապարհաշինության բնագավառ |
| 5. | Ծրագրի բյուջեն | Բյուջեն կազմում է 18.100.000,00 դրամ: |



| | | |
|---|---|---|
| 6. | Բարեգործություն ստացողը | Հայաստանի և Լեռնային Ղարաբաղի բնակչությունը |
| 7. | Ծրագրի իրականացման տևողությունը | Ծրագիրը նախատեսվում է իրականացնել 2013 դեկտեմբերի 13 26 -ից մինչև 2014թ. դեկտեմբերի 13-ը: |
| 8. | Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը | Առանձին միջոցառումներ չեն նախատեսվում |
| 9. | Չեռք բերվող (ներմուծվող) ապրանքների ու ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները և նախատեսվող գինը | Վարդենիս-Մարտակերտ ավտոճանապարհի հետևյալ հատվածների կառուցման տեխնիկական հսկողություն.<br><br>Սոտք-Քարվաճառ խաչմերուկ 1-ին տեղամասի 13.65կմ երկարությամբ հատված - «Ճաննախագիծ» ՍՊԸ՝ 2.800.000,00 դրամ առանց ԱԱՀ-ի,<br><br>Սոտք-Քարվաճառ խաչմերուկ 2-րդ տեղամասի 8.450կմ երկարությամբ հատված - «Ճաննախագիծ» ՍՊԸ՝ 2.700.000,00 դրամ առանց ԱԱՀ-ի,<br><br>Քարվաճառի խաչմերուկ-Չարեքթար 1-ին տեղամասի 12.6կմ երկարությամբ հատված - «ՀՀ նախագծերի պետական արտագերատեսչական փորձաքննություն» ՓԲԸ՝ 4.800.000,00 դրամ առանց ԱԱՀ-ի,<br><br>Քարվաճառի խաչմերուկ-Չարեքթար 2-րդ տեղամասի 9.8կմ երկարությամբ հատված - «ՀՀ նախագծերի պետական արտագերատեսչական փորձաքննություն» ՓԲԸ՝ 4.200.000,00 դրամ առանց ԱԱՀ-Ի, |

| | | |
|---|---|---|
| | | Չարեքքար-Դրմբոն 10կմ երկարությամբ հատված - «ՀՀ նախագծերի պետական արտագերատեսչական փորձաքննություն» ՓԲԸ՝ 3.600.000,00 դրամ առանց ԱԱՀ-ի: |
| 10. | Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսերը | Կազմակերպական ծախսեր չեն նախատեսվում |
| 11. | Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, այլ կազմակերպությունների հետ | Նախատեսվում է համագործակցություն ԼՂՀ Կառավարության հետ |
| 12. | Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը | Արդյունավետության նկատմամբ վերահսկողությունն իրականացվում է ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի կողմից (եռամսյակային և ամփոփ հաշվետվություններ): |

Ներկայացրեց գործադիր
տնօրենի խորհրդական՝
Արմինա Դարբինյանը

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ
## ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**

**14 մարտի 2014 թվականի N Մ - 203 - Ա**

**քաղ. Երևան**

### ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄՇԱԿՈՒՅԹԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ» ՊՈԱԿ-Ի ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ «ԹՎԱՅՆԱՑՄԱՆ ՕԳՆՈՒԹՅԱՄԲ ՎԱՂ ՇՐՋԱՆԻ ՏՊԱԳՐՎԱԾ ՔԱՐՏԵԶՆԵՐԻ, ԱՄՍԱԳՐԵՐԻ, ԹԵՐԹԵՐԻ ԵՐԿԱՐԱԺԱՄԿԵՏ ՊԱՀՊԱՆՈՒՄ ԵՎ ԴՐԱՆՑ ՀԱՍԱՆԵԼԻ ԴԱՐՁՆԵԼԸ ՀԱՄԱՑԱՆՑՈՒՄ» ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2014 թվականի փետրվարի 27-ի N 3/3.8-2/2900-14, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության 2014 թվականի փետրվարի 24-ի N 02/1090-14, Հայաստանի Հանրապետության մշակույթի նախարարու-թյան 2014 թվականի փետրվարի 26-ի N 01/3.1/632-14 ու Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2014 թվականի փետրվարի 21-ի N ՎՄ/3-4/2001-14 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Բարեգործական որակել Հայաստանի Հանրապետության մշակույթի նախարարության «Հայաստանի ազգային գրադարան» ՊՈԱԿ-ի կողմից իրականացվող՝ 33,445 ֆունտ ստերլինգին համարժեք դրամ ընդհանուր արժողությամբ «Թվայնացման օգնությամբ վաղ շրջանի տպագրված քարտեզների, ամսագրերի, թերթերի երկարաժամկետ պահպանում և դրանց հասանելի դարձնելը համացանցում» ծրագիրը (կցվում է):

2. Հայաստանի Հանրապետության մշակույթի նախարարության «Հայաստանի ազգային գրադարան» ՊՈԱԿ-ին՝

1) սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի իրականացման շրջանակներում մատակարար (կապալառու) կազմակերպությունների հետ կնքվելիք պայմանագրերի պատճենները ներկայացնել Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով՝ «Ավելացված արժեքի հարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի դրույթների համաձայն ավելացված արժեքի հարկից ազատվող ապրանքների ու ծառայությունների շրջանակը որոշելու համար.

2) մինչև յուրաքանչյուր եռամսյակին հաջորդող ամսվա 25-ը՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգ-ման հանձնաժողով ներկայացնել հաշվետվություն այդ եռամսյակի ընթացքում նշված ծրագրի շրջանակներում կազմակերպության կողմից, ինչպես նաև կազմակերպությանը մատակարարված ապրանքների ու մատուցված ծառայությունների մասին, իսկ ծրագրի ավարտից հետո մեկամսյա ժամկետում՝ ամփոփ տեղեկություններ ծրագրի կատարման մասին:

3. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախա-րարություն, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարություն, Հայաստանի Հանրապետության մշակույթի նախարարություն ու Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է

.Հայաստանի ազգային գրադարանի ՊՈԱԿ կազմակերպության կողմից

«19» փետրվար 2014.թ.

Թվայնացման օգնությամբ վաղ շրջանի տպագրված քարտեզների, ամսագրերի և [illegible] պահպանում և դրանց հասանելի դարձնելը համացանցում

# ԾՐԱԳԻՐ

| | | |
|---|---|---|
| 1. | Ծրագրի նպատակը | Հայերեն հնատիպ /1512-1800 թթ./ և վաղ շրջանի /1801-1900 թթ./ տպագիր արտադրանքը ներկայումս գտնվում է անմխիթար վիճակում: Հարյուրամյա դեգերումների արդյունքում էջերը քրքրվել են և խունացել, որոշ մասերում դարձել անընթեռնելի: Որոշների մոտ թուղթը արդեն կորցնում է իր ամրությունը: Մանրէները, խոնավությունը և սնկային հիվանդությունը նույնպես իրենց վնասակար հետքն են թողել այդ հրատարակությունների վրա: Այս նյութերի հաճախակի սպասարկումը նույնպես խաթարում է դրանց անվտանգությունը: 19-րդ դարի և 20-րդ դարի սկզբի հայ պարբերական մամուլը (ամենահարուստ հավաքածուն գտնվում է Ազգային գրադարանում) գիտական հանրության և ուսանողության կողմից ունի մեծ պահանջարկ և նույնպես գտնվում է անմխիթար վիճակում: Կան գրքեր և պարբերականներ, որ Հայաստանում առկա են մեկ օրինակով և պահպանվում են միայն Ազգային գրադարանում: **Ծրագրի նպատակն է՝** ա) ստեղծել այս նյութերի թվային պատճենները, դրանք տեղադրել գրադարանի կայքում, և մատչելի դարձնել ընթերցողներին: բ) Երկարաժամկետ պահպանության նպատակով թվայնացված պատճենները արտագրել օպտիկական խտասալիկների վրա: Սա թույլ կտա պահպանել գրադարանում եղած բնօրինակները փչացումից: գ) Հնատիպ և հազվագյուտ հավաքածուների պահպանության ուղղությամբ Ազգային գրադարանում կուտակված փորձը հասանելի դարձնել այլ գրադարանների: դ) Հնարավորինս աջակցել ՀՀ Կառավարության կողմից հաստատված «Թվանշանային գրադարանի ստեղծման» աշխատանքերի կատարմանը: |
| 2. | Ծրագրի բարեգործական որակման նպատակը | Ընդունված կարգով հարկային և մաքսային արտոնություններ ստանալ: |



| | | |
|---|---|---|
| 3. | Բարեգործը | Բրիտանական գրադարանի ,Վտանգված արխիվներն ծրագիր: The Endangered Archives Programme, 96 Euston Road London NW1 2DB T +44 (0)20 7412 7296 F +44 (0)20 7412 7858 www.bl.uk/endangeredarchives |
| 4. | Ծրագիրը կատարողը | Հայաստաիի ազգային գրադարան: Երևան: Տերյան 72; ՀՎՀՀ 01506092 |
| 5. | Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը | Հայաստաիի ազգային գրադարան: Հնատիպ, հազվայուտ և արխիվային գրականության բաժին: |
| 6. | Ծրագրի բյուջեն | Ընդհանուր բյուջեն՝ 33,445 ֆունտ ստերլինգ: |
| 7. | Բարեգործություն ստացողը | Հայագետներ, պատմաբաններ, հետազոտողներ, համալսարանների բարձր կուրսերի ուսանողներ: Սփյուռքի գաղթօջախներ: |
| 8. | Ծրագրի իրականացման տևողությունը | 2014 թ. փետրվարի 10 /սկիզբ/ – 2016 փետրվար 9 /ավարտ/ |
| 9. | Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը | ԱՌԱՋԻՆ ՓՈՒԼ<br>Լուսանկարող և թվայնացնող տեխնիկայի ձեռք բերում, փոխադրում, տեղադրում և կարգաբերում՝ 2014 թ. I-II եռամսյակներ: Տեխնիկան կազմված է հետևյալ բաղադրիչներից՝ թվային նկարահանող սարք, հոսանքի անընդհատ սնուցման սարք, թվային պատկերների մշակման համար նախատեսված համակարգիչ: Տեխնիկայի ընդհանուր արժեքն է՝ 25,750 ֆունտ ստերլինգ: Ստացված տեխնիկայի տեղադրման, կարգաբերման, և աշխատակազմի ուսուցման համար, ինչպես նաև այդ աշխատանքների իրականացման համար բելգիական «Կալմո Սիստեմզ» կազմակերպության մեկ մասնագետի այց Երևան նախատեսված է՝ 3,540 ֆունտ ստերլինգ: Չնախատեսված ծախսեր 100 ֆունտ ստերլինգ: **Ընդհանուր արժեքն է՝ 29,390 ֆունտ ստերլինգ:**<br>ԵՐԿՐՈՐԴ ՓՈՒԼ<br>Հայաստանի ազգային գրադարանում հնատիպ և վաղ շրջանի գրքերի, պարբերականների, քարտեզների և հազվագյուտ հրատարակությունների թվայնացման աշխատանքների իրականացում: Երկու տարվա ընթացքում նախատեսվում է թվայնացնել մոտ 21000 նյութ, մոտ մեկ միլիոն էջ: Այս աշխատանքների համար նախատեսված է գրադարանի չորս մասնագետների մասնակցություն: Արժեքն է **3,000 ֆունտ ստերլինգ:**<br>ԵՐՐՈՐԴ ՓՈՒԼ<br>Բրիտանական գրադարանի «Քրիստոնյա Միջին Արևելք» բաժնի նակին վարիչ - Վրեժ Ներսեսյանի խորհրդատվական այց Ազգային գրադարան: Հանդիսանալով հայ հնատիպ գրքի լավագույն մասնագետներից մեկը, պարոն Ներսեսյանի այցը ենթադրում է Ազգային գրադարանի մասնագետների ծանոթացում գրքի պահպանության ուղղությամբ Բրիտանական գրադարանում տարվող |

| | | |
|---|---|---|
| | | աշխատանքներին: Այցը նախատեսված է 2015 թվականի երկրորդ եռամսյակում: Արժեքն է **1,055 ֆունտ ստերլինգ;** |
| 10. | Ձեռք բերվող (ներմուծվող) ապրանքների ու ծառայու-թյունների համառոտ նկարագիրը, ծավալները և նախատեսվող գինը | Տեխնիկա մատակարարող կազմակերպությունը հանդիսանում է բելգիական «Կալմո Սիստեմզ» ընկերությունը: Մասնագիտացված է թվայնացման բարձրարտադրողական սարքերի թողարկման բնագավառում և աշխարհում իր տեսակի մեջ եզակի է: Նկարահանող սարքերի լուսային փունջը զերծ է ուլտրա մանուշակագույն բաղադրիչից, որը պարտադիր պայման է հնատիպ նյութերի թվայնացման և նկարահանման պարզայում և ապահովում է թղթի անվտանգությունը: Ուստի և ընտրությունը կանգ է առել այդ կազմակերպության վրա: Հայաստանում սարքը միակն է: ԱՊՀ երկրներում նման թանկարժեք սարքավորում օգտագործում է Ս-Պետերբուրգի ազգային արխիվը: Ձեռք բերվող համակարգի արժեքն է 29,390 ֆունտ ստերլինգ: |
| 11. | Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսերը | Նախատեսված չեն |
| 12. | Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, այլ կազմակերպությունների հետ: | ՀՀ Մշակույթի նախարարություն |
| 13. | Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը | ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով` հաշվետվությունների տեսքով, ՀՀ Մշակույթի նախարարություն` հաշվետվությունների տեսքով: |

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ**
**ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

**14 մարտի 2014 թվականի N Մ - 204 - Ա**

**քաղ. Երևան**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՆԵՐԴՐՈՒՄՆԵՐԻ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ «ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՀԱԼԻՁՈՐ ԳՅՈՒՂԻ ԴՊՐՈՑԻ ՇԵՆՔԻ ՎԵՐԱԿԱՌՈՒՑՈՒՄ» ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2014 թվականի մարտի 3-ի N 3/3.8-2/3063-14, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության 2014 թվականի փետրվարի 28-ի N 02/1243-14, Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության 2014 թվականի փետրվարի 27-ի N 03//07-1/1846-14, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2014 թվականի փետրվարի 28-ի N ՎՄ/3-4/2257-14 ու Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզպետի 2014 թվականի մարտի 3-ի N 01/1055-14 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Բարեգործական որակել Հայաստանի սոցիալական ներդրումների հիմնադրամի կողմից իրականացվող՝ 51,432,254 դրամ ընդհանուր արժողությամբ «Սյունիքի մարզի Հալիձոր գյուղի դպրոցի շենքի վերակառուցում» ծրագիրը (կցվում է):

2. Սահմանել, որ սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի իրականացման նպատակով Հայաստանի սոցիալական ներդրումների հիմնադրամի կողմից (ՀՎՀՀ՝ 00846441) կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքն անմիջականորեն կապված է ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

«Մաստարա» ԱԿ-ի հետ (ՀՎՀՀ՝ 09203764) 2014 թվականի փետրվարի 18-ին կնքված N SQ045 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է շինարարական աշխատանքների իրականացում՝ 51,432,254 դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի:

3. Հայաստանի սոցիալական ներդրումների հիմնադրամին՝ սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի ավարտից հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկատվություն:

4. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարություն, Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարություն, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե ու Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզպետին:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

Հ ա ս տ ա տ վ ա ծ   է

Հայաստանի սոցիալական ներդրումների հիմնադրամի
Գործադիր տնօրեն Ա.Կիրակոսյանի կողմից

«21» 02 2014թ.

## *"Սյունիքի մարզի Հալիձոր գյուղի դպրոցի շենքի վերակառուցում"*

## Ծ Ր Ա Գ Ի Ր

| | | |
|---|---|---|
| 1. | Ծրագրի նպատակը | ***Ծրագրի իրականացման նպատակը Հալիձոր գյուղի դպրոցի շենքի վերակառուցման նպատակով շինաշխատանքների կատարումն է:*** |
| 2. | Բարեգործը | Ծրագիրն իրականացվում է **"Տաթևի վերածնունդ"** հիմնադրամի համաֆինանսավորմամբ: |
| 3. | Ծրագրի բարեգործական որակման նպատակը | Նախատեսվում է սահմանված կարգով օգտվել հարկային արտոնություններից: |
| 4. | Ծրագիրը կատարողը | Ծրագիրն իրականացնողը ***Հայաստանի սոցիալական ներդրումների հիմնադրամն*** է, որի հասցեն է՝ ք. Երևան-37, Կ.Ուլնեցու 31, իսկ հարկային հաշվառման համարը՝ 00846441. |
| 5. | Ծրագրի իրականացման վայրը, բնագավառը | Ծրագրի իրականացման վայրը Սյունիքի մարզի Հալիձոր գյուղն է, բնագավառը ՝ սոցիալական: |
| 6. | Ծրագրի բյուջեն | **Բարեգործի հաշվի կատարվելիք շինարարական աշխատանքների** ընդհանուր արժեքը սույն գործարքի շրջանակներում կազմում է **51 ,432,254 դրամ՝ առանց ԱԱՀ-ի:** Նշված գումարի շրջանակներում բոլոր աշխատանքները ֆինանսավորվելու են "Տաթևի վերածնունդ" հիմնադրամի կողմից: |
| 7. | Բարեգործություն ստացողները | Բարեգործություն ստացողը Հալիձոր գյուղի համայնքն է , որի հաշվեկշռում է գտնվում մասնաշենքը: |
| 8. | Ծրագրի իրականացման տևողությունը և/կամ սկիզբը, ավարտը | Ծրագրի շինաշխատանքների իրականացման ընդհանուր պայմանագիրը կնքված է 18.02.2014թ. Հալիձորի միջն. դպրոցի վերակառուցում" ծրագրի Իրականացման կոմիտեի և "Մաստարա" արտադրական կոոպերատիվի միջև (ՀՎՀՀ 09203764, ք.Գորիս, Ա.Բակունցի 66):<br>Շինարարական աշխատանքների մեկնարկը տրվել է 20.02.2014թ., իսկ ավարտը նախատեսված է մեկնարկի օրվանից սկսված 150 օրացույցային օր հետո: Ենթադրվում է, որ մինչև 2014թ. օգոստոսը շինաշխատանքները կավարտվեն: |
| 9. | Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը | Ծրագրով ներկայացվում են միայն "Տաթևի վերածնունդ" հիմնադրամի համաֆինանսավորմամբ կատարվող գործարքը, որով նախատեսված է Հալիձորի դպրոցի վերակառուցման ծրագրի շինաշխատանքների իրականացումը: **Հարկային արտոնությունները տարածվում են "Տաթևի վերածնունդ" հիմնադրամի ֆինանսավորման վրա, որը կազմում է 51432254 դրամ՝ առանց ԱԱՀ-ի: Այս գումարը ենթակա է ԱԱՀ-ից ազատման:** |
| 10. | Ձեռք բերվող (ներմուծվող) ապրանքների, ծառայությունների և աշխատանքների համառոտ նկարագիրը, ծավալները, նախատեսվող գինը | Ծրագրով նախատեսվում է դպրոցի երկհարկանի մասնաշենքի և մեկ հարկանի մասնաշենքի վերահատակագծում, սպորտդահլիճի հիմնանորոգում, ամբողջ տանիքի ապամոնտաժում և նոր լանջավոր տանիքի կառուցում՝ ներառյալ փայտե կոնստրուկցիաները և ծածկույթը: Նախատեսվում է հատակների, դռների, լուսամուտների (բացի սպորտ դահլիճի պատուհաններից), ներքին էլնուցման ցանցի փոխարինում: Ըստ շենքի տեխնիկական վիճակի եզրակացության իրականացվում է ծածկի սալերի ուժեղացում, մեկ հարկանի մասնաշենքում՝ շրջանակի տեղադրում: Նախատեսվում է ջրամատակարարման ներքին և կոյուղու ներքին ու արտաքին համակարգերի վերակառուցում, հարդարման աշխատանքների իրականացում, ջեռուցումը նախատեսված է էլեկտրական սալիկներով (յուղային): Խոնավությունը վերացնելու և մակերևութային ջրերի հեռացման համար անհրաժեշտ է սալվածքի վերականգնում, երկհարկանի մասնաշենքի հետևի բակում թեքությունների ստեղծում, տարածքի մասնակի ասֆալտապատում և բազալտե եզրաքարերի տեղադրում, ցանկապատի իրականացում: Ըստ տեխնիկական եզրակացության նախատեսվում է սեյսմոզինվածության բարձրացում: |
| 11. | Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսերը | Կազմակերպչական ծախսեր չեն նախատեսվում: |
| 12. | Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, այլ կազմակերպությունների հետ | Ծրագրի իրականացման ընթացքում նախատեսված է համագործակցել ՀՀ տարածքային կառավարման նախարարության, ՀՀ կառավարության Բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի, Սյունիքի մարզպետարանի և Հալիձորի գյուղապետարանի պաշտոնյաների հետ: |
| 13. | Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը | Ծրագրի ընթացքը վերահսկվում է Հալիձորի գյուղապետարանի, Սյունիքի մարզպետարանի, ՀՀ տարածքային կառավարման նախարարության, սոցներդրումների հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի, ինչպես նաև ՀՀ կառավարության Բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի կողմից (եռամսյակային և տարեկան հաշվետվությունների ներկայացմամբ): |

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

### Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

**14 մարտի 2014 թվականի N Մ- 205 -Ա**
**քաղ. Երևան**

### ԱՄԵՐԻԿԱՅԻ ՀԱՅ ՕԳՆՈՒԹՅԱՆ ՖՈՆԴԻ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՄԱՍՆԱՃՅՈՒՂԻ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ «ԱՐԳԱՎԱՆԴ ԳՅՈՒՂԻ ԵՐԱԺՇՏԱԿԱՆ ԴՊՐՈՑԻ ՇԵՆՔԻ ՎԵՐԱՆՈՐՈԳՈՒՄ» ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2014 թվականի փետրվարի 25-ի N 3/3.8-2/2809-14, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության 2014 թվականի փետրվարի 24-ի N 02/1086-14 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2014 թվականի փետրվարի 24 -ի N ՎՄ/3-4/2007-14 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Բարեգործական որակել Ամերիկայի Հայ օգնության ֆոնդի Հայաստանի մասնաճյուղի կողմից իրականացվող՝ 94,179 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ արժողությամբ «Արգավանդ գյուղի երաժշտական դպրոցի շենքի վերանորոգում» ծրագիրը (կցվում է):

2. Սահմանել, որ Ամերիկայի Հայ օգնության ֆոնդի Հայաստանի մասնաճյուղի կողմից կնքված (քաղ. Երևան, Մովսես Խորենացու 22, ՀՎՀՀ՝ 02517115)՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքն անմիջականորեն կապված է սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն.

«ԿԱՆԱԿԱ» ԲԲԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 06901369) 2014 թվականի փետրվարի 17-ին կնքված նշված գործարքը, որով նախատեսվում է վերանորոգման աշխատանքների իրականացում՝ 94,179 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

3. Ամերիկայի Հայ օգնության ֆոնդի Հայաստանի մասնաաճյուղին՝ նշված ծրագրի ավարտից հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկատվություն:

4. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարություն, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե և Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետին:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է

Ամերիկայի Հայ օգնության ֆոնդի Հայաստանի մասնաճյուղի տնօրեն Բ. Սարգսյանի __________ կողմից

«17» փետրվարի 2014թ

## Ամերիկայի Հայ օգնության ֆոնդի Հայաստանի մասնաճյուղի կողմից իրականացվող Արգավանդ գյուղի երաժշտական դպրոցի շենքի վերանորոգում

## Բ Ա Ր Ե Գ Ո Ր Ծ Ա Կ Ա Ն   Ծ Ր Ա Գ Ի Ր

| | | |
|---|---|---|
| 1. | Ծրագրի նպատակը | Ծրագրի նպատակն է վերանորոգել Արարատի մարզի Արգավանդ գյուղի երաժշտական դպրոցի շենքը՝ նպաստելով դպրոցում ուսանող 60 աշակերտների կրթական պայմանների բարելավմանը: |
| 2. | Ծրագրի բարեգործական որակման նպատակը | Ակնկալում ենք ԱԱՀ-ից ազատում («Բարեգործության մասին» Հայաստանի հանրապետության օրենքի 15-րդ հոդված): |
| 3. | Բարեգործը | ԱՄՆ-ի Հայ Օգնության Ֆոնդ |
| 4. | Ծրագիրը կատարողը | ԱՄՆ-ի ՀՕՖ-ի Հայաստանի մասնաճյուղ, ք. Երևան, Մ. Խորենացու փող. 22, ՀՎՀՀ 02517115: |
| 5. | Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը | ՀՀ, Արարատի մարզ, գ. Արգավանդ, Կենտրոնական փ., 26:<br>Բնագավառը՝ կրթական: |
| 6. | Ծրագրի բյուջեն | Ծրագրի ընդհանուր արժեքը կազմում է 94,179 (իննսունչորս հազար հարյուր յոթանասունինը) ԱՄՆ դոլարին համարժեք ՀՀ դրամ: |
| 7. | Բարեգործություն ստացողը | Արգավանդի երաժշտական դպրոց ՊՈԱԿ |
| 8. | Ծրագրի իրականացման տևողությունը | 17.02.2014– 30.08.2014 |
| 9. | Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը | Ծրագրի շրջանակներում նախատեսվում է վերանորոգել Արարատի մարզի Արգավանդ գյուղի երաժշտական դպրոցի շենքը: Ծրագրի ընդհանուր արժեքը կազմում է 94,179 ԱՄՆ դոլարրին համարժեք ՀՀ դրամ:<br><br>Իրականացվելիք շինարարական աշխատանքների մանրամասն ծավալները և արժեքները տրված են պայմանագրին կից հավելվածում: |
| 10. | Ձեռք բերվող (ներմուծվող) ապրանքների ու ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները և նախատեսվող գինը | Ակնկալում ենք ԱԱՀ-ից ազատում 94,179 (իննսունչորս հազար հարյուր յոթանասունինը) ԱՄՆ դոլարին համարժեք ՀՀ դրամի չափով՝ պայմանագիր կնքված 17.02.2014թ «Կանակա» ԲԲԸ -ի (ՀՀ, ք. Վանաձոր, Նժդեհի 4, ՀՎՀՀ 06901369) և |



| | | |
|---|---|---|
| | | Ամերիկայի Հայ օգնության ֆոնդի Հայաստանի մասնաճյուղի, (ՀՀ, ք Երևան, Խորենացի 22, ՀՎՀՀ 02517115) միջև: |
| 11. | Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսերը | Կազմակերպական ծախսեր չեն նախատեսվում: |
| 12. | Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, այլ կազմակերպությունների հետ | ՀՀ Արարատի մարզպետարան, ՀՀ Կառավարությանն առընթեր բարեգործական ծրագրերի համակարգող հանձնաժողով |
| 13. | Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը | Վերահսկողությունը կատարվելու է ՀՕՖ-ի Նյու Յորքի գրասենյակի և ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգող հանձնաժողովի կողմից եռամսյա և տարեկան հաշվետվությունների միջոցով: |

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

# Ո Ր Ո Շ Ու Մ

**14 մարտի 2014 թվականի N Մ- 206 -Ա**
**քաղ. Երևան**

## ԱՄԵՐԻԿԱՅԻ ՀԱՅ ՕԳՆՈՒԹՅԱՆ ՖՈՆԴԻ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՄԱՍՆԱՃՅՈՒՂԻ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ «ԳԱՎԱՌԻ ԹԻՎ 1 ՀԱՏՈՒԿ ԴՊՐՈՑԻ ՄԱՐԶԱԴԱՀԼԻՃԻ ՇԻՆՎԵՐԱՆՈՐՈԳՈՒՄ» ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2014 թվականի մարտի 3-ի N 3/3.8-2/3071-14, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության 2014 թվականի փետրվարի 27 -ի N 02/1227-14, Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության 2014 թվականի մարտի 3-ի N ՖԲ/ԱնՄ-4/1234-14 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2014 թվականի փետրվարի 28-ի N ՎՄ/3-4/2256-14 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Բարեգործական որակել Ամերիկյայի Հայ օգնության ֆոնդի Հայաստանի մասնաճյուղի կողմից իրականացվող՝ 14,930 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ արժողությամբ «Գավառի թիվ 1 հատուկ դպրոցի մարզադահլիճի շինվերանորոգում» ծրագիրը (կցվում է):

2. Սահմանել, որ Ամերիկյայի Հայ օգնության ֆոնդի Հայաստանի մասնաճյուղի կողմից կնքված (քաղ. Երևան, Մովսես Խորենացու 22, ՀՎՀՀ՝ 02517115)՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքն անմիջականորեն կապված է սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն.

«Հազարաշեն» արտադրական կոոպերատիվի հետ (ՀՎՀՀ՝ 08400329) 2014 թվականի փետրվարի 24-ին կնքված պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է վերանորոգման աշխատանքների իրականացում՝ 14,930 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

3. Ամերիկյայի Հայ օգնության ֆոնդի Հայաստանի մասնաաճյուղին՝ նշված ծրագրի ավարտից հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկատվություն:

4. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարություն, Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե եւ Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետին:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է

Ամերիկայի Հայ օգնության ֆոնդի Հայաստանի մասնաճյուղի տնօրեն Բ. Սարգսյանի ____________ կողմից

«24» փետրվարի 2014թ

## Ամերիկայի Հայ օգնության ֆոնդի Հայաստանի մասնաճյուղի կողմից իրականացվող Գավառի թիվ 1 հատուկ դպրոցի մարզադահլիճի շինվերանորոգման աշխատանքների իրականացում

## ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳԻՐ

| | | |
|---|---|---|
| 1. | Ծրագրի նպատակը | Ծրագրի նպատակն է նպաստել Գավառի թիվ 1 հատուկ դպրոցում ուսուցանող շուրջ 95 աշակերտների հոգեբանական և ֆիզիկական խնդիրների վերականգնմանը՝ դպրոցի մարզադահլիճի վերանորոգման միջոցով: |
| 2. | Ծրագրի բարեգործական որակման նպատակը | Ակնկալում ենք ԱԱՀ-ից ազատում («Բարեգործության մասին» Հայաստանի հանրապետության օրենքի 15-րդ հոդված): |
| 3. | Բարեգործը | Ամերիկայի ՀՕՖ-ի Նյու Յորքի գրասենյակ |
| 4. | Ծրագիրը կատարողը | Ամերիկայի Հայ օգնության ֆոնդի Հայաստանի մասնաճյուղ, ք. Երևան 0010, Մ. Խորենացու փող. 22, ՀՎՀՀ 02517115 |
| 5. | Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը | Վայրը՝ ՀՀ, Գեղարքունիքի մարզ, ք. Գավառ, Միքայելյան 33<br>Բնագավառը՝ կրթական |
| 6. | Ծրագրի բյուջեն | Ծրագրի ընդհանուր արժեքը կազմում է 14 930.00 ԱՄՆ դոլար |
| 7. | Բարեգործություն ստացողը | Գավառի թիվ 1 հատուկ դպրոց ՊՈԱԿ |
| 8. | Ծրագրի իրականացման տևողությունը և/կամ սկիզբը, ավարտը | 23.02.2014 – 30.06.2014 |
| 9. | Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը | Ծրագրի շրջանակներում նախատեսվում է վերանորոգել Գավառի թիվ 1 հատուկ դպրոցի մարզադահլիճը, որն հնարավորություն կտա աշակերտներին ուսումնական պրոցեսին զուգընթաց վերականգնել ֆիզիկական և մտավոր կարողությունները: Վերանորոգումից հետո մարզադահլիճը համալրված կլինի անհրաժեշտ սարքավորումներով՝ ուղղված աշակերտների ֆիզիկական և մտավոր խնդիրների լուծմանը:<br><br>Ծրագրի ընդհանուր արժեքը կազմում է 14 930 ԱՄՆ դոլար և բաղկացած է միայն շինարարական աշխատանքների արժեքից:<br>Իրականացվելիք շինարարական աշխատանքների մանրամասն ծավալները և արժեքները տրված են պայմանագրին կից հավելվածում: |
| 10. | Ձեռք բերվելիք ապրանքների, ծառայությունների և աշխատանքների համառոտ նկարագիրը, ծավալները, նախատեսվող գինը | Ակնկալում ենք ԱԱՀ-ից ազատում 14 930 (տասնչորս հազար ինը հարյուր երեսուն) ԱՄՆ դոլարին համարժեք ՀՀ դրամի չափով՝ շինվերանորոգման աշխատանքների իրականացման պայմանագիր կնքված 24.02.2014թ «Հազարաշեն» ԱԿ (ՀՀ, |

2

| | | |
|---|---|---|
| | | Գեղարքունիքի մարզ, Վաղարշակ Փոշոտյան 1, ՀՎՀՀ 08400329) և Ամերիկայի Հայ օգնության ֆոնդի Հայաստանի մասնաճյուղի, (ՀՀ, ք Երևան, Խորենացի 22, ՀՎՀՀ 02517115) միջև: |
| 11 | Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպչական ծախսեր | Կազմակերպական ծախսեր չեն նախատեսվում: |
| 12 | Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, այլ կազմակերպությունների հետ | ՀՀ Գեղարքունիքի մարզպետարան, ՀՀ կառավարությանն առընթեր բարեգործական ծրագրերի համակարգող հանձնաժողով: |
| 13. | Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը | Վերահսկողությունը կատարվելու է Ամերիկայի ՀՕՖ-ի Նյու Յորքի գրասենյակի կողմից: Եռամսյա և տարեկան հաշվետվությունների միջոցով ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգող հանձնաժողովի կողմից: |

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

**Ո Ր Ո Շ Ու Մ**
**14 մարտի 2014 թվականի N Մ - 207 -Ա**
**քաղ. Երևան**

# «ՎՈՐԼԴ ՎԻԺՆ ԻՆԹԵՐՆԵՅՇՆԼ» ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆՅԱՆ ՄԱՍՆԱՃՅՈՒՂԻ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՄԻ ՇԱՐՔ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ԿԱՀՈՒՅՔԻ ՏՐԱՄԱԴՐՈՒՄ» ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2014 թվականի փետրվարի 20-ի N 3/3.8-2/2531-14, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության 2014 թվականի փետրվարի 24-ի N 02/1089-14, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2014 թվականի փետրվարի 18-ի N ՎՄ/3-4/1814-14 և Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզպետի 2014 թվականի փետրվարի 24-ի N 01/09/2/896-14 եզրակացությունները,* ***որոշում է.***

1. Բարեգործական որակել «Վորլդ վիժն ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղի կողմից (ՀՀ, քաղ. Երևան, Ռոմանոս Մելիքյան 1, ՀՎՀՀ՝ 02528755) իրականացվող՝ 4,886,500 դրամ ընդհանուր արժողությամբ «Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի մի շարք հաստատություններին կահույքի տրամադրում» ծրագիրը (կցվում է):

2. Սահմանել, որ սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի իրականացման նպատակով «Վորլդ վիժն ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղի կողմից կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքն անմիջականորեն կապված է ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

«Ալեն-Էլեն» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 04423145) 2014 թվականի փետրվարի 7-ին կնքված N WVA/SIS ADP/SF-14/001/FY14 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է հավելվածում նկարագրված կահույքի տրամադրում՝ 4,886,500 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

3. «Վորլդ վիժն ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղին՝ ծրագրի ավարտից հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկություններ ծրագրի կատարման մասին:

4. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարություն, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե և Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզպետին:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է՝
"Վորլդ վիժն ինթերնեյշնլ"
միջազգային բարեգործական կազմակերպության
հայաստանյան մասնաճյուղի
Ծրագրի տնօրեն

Ժիրայր Էդիլյան

06 փետրվարի 2014թ.

"Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի մի շարք հաստատություններին կահույքի տրամադրում"
Ծրագիր

| | | |
|---|---|---|
| 1 | Ծրագրի նպատակը | Աջակցել Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի մի շարք համայնքների հաստատություններին կահույք տրամադրելու հարցում: Մասնավորապես՝ սույն ծրագրի շրջանակներում տրամադրվելու է կահույք Աշոտավան համայնքի մանկապարտեզին, Լոր համայնքի համայնքապետարանի ավագանու գրասենյակի, Շաղատ, Հարժիս, Շինուհայր, Հալիձոր և Քարահունջ համայնքների մշակույթի տներին՝ նրանց կահավորման պայմանները բարելավելու նպատակով: |
| 2 | Ծրագրի բարեգործական որակման նպատակը | Օգտվել Հայաստանի Հանրապետության հարկերի, տուրքերի, պարտադիր վճարների գծով օրենքով սահմանված արտոնություններից: |
| 3 | Բարեգործը | "Վորլդ Վիժն Ինթերնեյշնլ" միջազգային բարեգործական կազմակերպության<br>Մեծ Բրիտանիայի գրասենյակ,<br>հասցե՝ World Vision UK, Opal Drive, Fox Milne, Milton Keynes MK15 0ZR United Kingdom,<br>tel. +44 1908 841000 |
| 4 | Ծրագիրը կատարողը | "Վորլդ վիժն ինթերնեշնլ" միջազգային բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղ *(հասցե՝ Երևան, Ռ.Մելիքյան 1; ՀՎՀՀ 02528755)*. |
| 5 | Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը | Իրականացման վայրն է ՀՀ Սյունիքի մարզի Աշոտավան, Լոր, Շաղատ, Հարժիս, Շինուհայր, Հալիձոր և Քարահունջ համայնքները:<br>Բնագավառը՝ սոցիալական |
| 6 | Ծրագրի բյուջեն | Ծրագրի ընդհանուր արժեքը կազմում է 4886500 (չորս միլիոն ութ հարյուր ութսունվեց հազար հինգ հարյուր) դրամ՝ առանց ԱԱՀ-ի:<br>ֆինանսավորման աղբյուրը՝ "Վորլդ Վիժն Ինթերնեյշնլ" միջազգային բարեգործական կազմակերպության Մեծ Բրիտանիայի գրասենյակ,<br><br><u>Ծախսի ուղղությունը</u> <u>չափը</u> <u>ժամկետը</u><br>Կահույքի մատակարարում 4886500 դրամ առաջին եռամսյակ 2014թ |
| 7 | Բարեգործություն ստացողը | Բարեգործություն ստացող են հանդիսանում Աշոտավան, Լոր, Շաղատ, Հարժիս, Շինուհայր, Հալիձոր և Քարահունջ համայնքները, առավելապես տվյալ համայնքների երեխաները և երիտասարդները, համաձայն համայնքների կողմից ներկայացված ծրագիր առաջարկի: |
| 8 | Ծրագրի իրականացման տևողությունը | 07 փետրվարի 2014թ. - 24 մարտի 2014թ. |
| 9 | Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը | Սյունիքի մարզի Աշոտավան համայնքի մանկապարտեզին, Լոր համայնքի համայնքապետարանին, Շաղատ, Հարժիս, Շինուհայր, Հալիձոր և Քարահունջ համայնքների մշակույթի տներին պետք է տրամադրվի համապատասխան կահույք (մանկական մահճակալներ, սեղաններ, աթոռներ, գրապահարաններ, նստարաններ և այլն): Այդ աշխատանքները իրականացնելու համար "Վորլդ վիժն ինթերնեյշնլ" ՄԲԿ հայաստանյան մասնաճյուղը մրցույթային կարգով ընտրել է կահույք արտադրող մատակարար կազմակերպություն և կնքել է նրա հետ մատակարարման պայմանագիր: Պայմանագիրը կցվում է: Կահույքի մատակարարն է "Ալեն-Էլեն" ՍՊԸ-ն: Մատակարարումը նախատեսվում է իրականացնել 2014թ.փետրվարի 7-ից մինչև մարտի 24-ը ժամանակահատվածում: Ծրագրի արժեքն է 4886500 դրամ՝ առանց ԱԱՀ-ի: |
| 10 | Ձեռք բերվող (ներմուծվող) ապրանքների ու ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները և նախատեսվող գինը | Սյունիքի մարզի Աշոտավան համայնքի մանկապարտեզին, Լոր համայնքի համայնքապետարանին, Շաղատ, Հարժիս, Շինուհայր, Հալիձոր և Քարահունջ համայնքների մշակույթի տներին պետք է տրամադրվի համապատասխան կահույք (մանկական մահճակալներ, սեղաններ, աթոռներ, գրապահարաններ, նստարաններ և այլն): Ծրագրի նախահաշվային արժեքն է 4886500 ՀՀ դրամ՝ առանց ԱԱՀ՝ ըստ հետևյալ համայնքների՝<br>Աշոտավանի մանկապարտեզ 540000 դրամ<br>Լորի համայնքապետարանի ավագանու գրասենյակ 251500 դրամ<br>Շաղատ համայնքի մշակույթի տուն 648000 դրամ<br>Հարժիս համայնքի մշակույթի տուն 720000 դրամ<br>Շինուհայր համայնքի մշակույթի տուն 396500 դրամ<br>Հալիձոր համայնքի մշակույթի տուն 490500 դրամ<br>Քարահունջ համայնքի մշակույթի տուն 1840000 դրամ |
| 11 | Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսերը | Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպչական ծախսեր նախատեսված չեն: |
| 12 | Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման և այլ մարմինների հետ | Ներկայացված ծրագրի իրականացման ընթացքում "Վորլդ վիժն ինթերնեյշնլ" միջազգային բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղը համագործակցում է Սյունիքի մարզի Աշոտավան, Լոր, Շաղատ, Հարժիս, Շինուհայր, Հալիձոր և Քարահունջ համայնքների տեղական ինքնակառավարման մարմինների հետ: Ծրագրով նախատեսված է կայույքը հանձնել վերոհիշյալ յոթ համայնքների տեղական ինքնակառավարման մարմիններին՝ 15 տարվա ընթացքում այն չօտարելու պայմանով: |

| | | |
|---|---|---|
| 13 | Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը | Ծրագրի վերահսկողությունը իրականացվում է "Վորլդ Վիժն Ինթերնեյշնլ" միջազգային բարեգործական կազմակերպության Մեծ Բրիտանիայի գրասենյակի, Աշտարակ, Լոր, Շաղատ, Հարժիս, Շինուհայր, Հալիձոր և Քարահունջ համայնքների տեղական ինքնակառավարման մարմինների, ինչպես նաև "Վորլդ վիժն ինթերնեյշնլ" միջազգային բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղի համապատասխան բաժինների կողմից: "Վորլդ վիժն ինթերնեշնլ" միջազգային բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղը վերահսկվում է միջազգային աուդիտի, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության հարկային մարմինների կողմից:<br>Ծրագրի ընթացքի և ավարտի մասին հաշվետվություն կներկայացվի ՀՀ Կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովին: |

"Վորլդ վիժն ինթերնեյշնլ" միջազգային բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղի
Գործառնությունների ղեկավար

Շաղիկ Մարուխյան

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ**
**ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**
**17 մարտի 2014 թվականի N Մ - 208 - Ա**
**(Որոշումն ընդունվել է 2014 թվականի մարտի 14-ի նիստին)**
**քաղ. Երևան**

## «ՊԱՏՄՈՍ - ԱՐԱՐԱՏ» ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ «ՑԵՐԵԿԱՅԻՆ ՎԵՐԱԿԱՆԳՆՈՂԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2014 թվականի փետրվարի 20-ի N 3/3.8-2/2469-14, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության 2014 թվականի փետրվարի 24-ի N 02/1088-14, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության 2014 թվականի փետրվարի 24-ի N ԴԴ/22/1572-14, Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության 2014 թվականի փետրվարի 20-ի N ՖՐ/ԱնՄ-4/971-14 ու Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2014 թվականի փետրվարի 18-ի N ՎՄ/3-4/1823-14 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Բարեգործական որակել «Պատմոս - Արարատ» բարեգործական հիմնադրամի կողմից իրականացվող՝ 214,000 եվրոյին համարժեք դրամ ընդհանուր արժողությամբ «Ցերեկային վերականգնողական կենտրոն» ծրագիրը (կցվում է):

2. «Պատմոս - Արարատ» բարեգործական հիմնադրամին՝

1) սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի իրականացման շրջանակներում մատակարար (կապալառու) կազմակերպությունների հետ կնքվելիք պայմանագրերի պատճենները ներկայացնել Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով «Ավելացված արժեքի հարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի դրույթների համաձայն ավելացված արժեքի հարկից ազատվող ապրանքների ու ծառայությունների շրջանակը որոշելու համար.

2) մինչև յուրաքանչյուր եռամսյակին հաջորդող ամսվա 25-ը՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել հաշվետվություն այդ եռամսյակի ընթացքում նշված ծրագրի շրջանակներում հիմնադրամի կողմից, ինչպես նաև հիմնադրամին մատակարարված ապրանքների ու մատուցված ծառայությունների մասին, իսկ ծրագրի ավարտից հետո մեկամսյա ժամկետում՝ ամփոփ տեղեկություններ ծրագրի կատարման մասին:

3. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարություն, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն, Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն, Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարություն, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե ու Երևանի քաղաքապետին:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

Հաստատված է
«Պատմըս-Արարատ» բարեգործական հիմնադրամի
տնօրեն Ռ.Շահինյանի կողմից
«17» փետրվար 2014թ.

**«Ցերեկային վերականգնողական կենտրոն»**
**ԾՐԱԳԻՐ**

| | | |
|---|---|---|
| 1 | Ծրագրի նպատակը | Ծրագրի նպատակն է ռեաբիլիտացիայի ենթարկել 5-ից 10 տարեկան հաշմանդամ երեխաներին՝ մատուցելով նրանց ֆիզիոթերապիայի և այլ վերականգնողական անվճար ծառայություններ, որպեսզի այդ երեխաները անկախ դառնան՝ իրենց ընտանիքներում և հասարակության շարքերում հնարավորինս ներգրավված լինելու համար: Դա նաև կբարելավվի հաշմանդամ երեխաների կենսորակը: Կենտրոնը շաբաթական կսպասարկի մոտ 65 երեխա:<br><br>Ծրագիրը բաղկացած է հետևյալ գործողություններից՝<br>• Ցերեկային Վերականգնողական Կենտրոնի համար տարածքի վարձակալությունը կլինիՀԿԽԸ «ՄԵՄ» ՍՊԸ-իկողմից(Կարմիր Խաչի տարածքում,120քմ մակերեսով տարածք և լողավազան): Պատմըս-Արարատ ԲՀ-ն կօգտագործի տարածքը Ցերեկային Վերականգնողական Կենտրոնի շահառուներին՝ հաշմանդամ դպրոցական տարիքի երեխաներին, ծրագրում նախատեսված ծառայությունների մատուցման նպատակով:<br>• Ցերեկային Վերականգնողական Կենտրոնում ծրագրի շահառուներին ծրագրով նախատեսված ծառայությունների մատուցման նպատակով համապատասխան վերականգնողական սարքավորումների և պարագաների ձեռքբերում և ներմուծում<br>• Ցերեկային Վերականգնողական Կենտրոնում ծրագրի շահառուներին ծրագրով նախատեսված ծառայությունների մատուցման, շահառուների ցուցակների և նրանց հիվանդության պատմության համակարգչային բազայի պատրաստման նպատակով համակարգչային տեխնիկայի և այլ սարքավորումների ձեռքբերում:<br>• Ծրագրում կաշխատեն հետևյալ հրավիրված (արտոնագրված) մասնագետները՝<br>- Մանկական Վերականգնողաբան -1մասնագետ<br>- Ֆիզիոթերապևտներ – 2 մասնագետ<br>Հատուկ Մանկավարժ -1մասնագետ<br>Լոգոպեդ – 1 մասնագետ<br>Երաժշտությանթերապևտ – 1 մասնագետ<br>Հիդրոթերապևտ - 1 մասնագետ |
| 2 | Ծրագրի բարեգործական որակման նպատակը | Սահմանված կարգով ստանալ մաքսային և հարկային արտոնություններ |
| 3 | Բարեգործը | «Պատմըս» Համաշխարհային առաքելությունների հիմնադրամ,<br>հասցեն՝ Ֆինլանդիա, 00381 Հելսինկի, Պ.Օ.Բոքս 86 |
| 4 | Ծրագիրը կատարողը | «Պատմըս-Արարատ» բարեգործական հիմնադրամ<br>Հասցեն՝ ք. Երևան, Նորքի6-րդ զանգված, Լյուքսեմբուրգի 6 շենք, 48 բն.<br>ՀՎՀՀ 00854603 |
| 5 | Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը | ՀԿԽԸ «ՄԵՄ»ՍՊԸ, ք. Երևան, Աշտարակի խճ.50/1, Կարմիր Խաչի տարածք,առողջապահություն |
| 6 | Ծրագրի բյուջեն | **Ծրագրի ընդհանուր բյուջեն՝ 214.000 եվրո** |
| 7 | Բարեգործություն ստացողը | «Պատմըս-Արարատ»բարեգործական հիմնադրամԾրագրի շրջանակներում բարեգործություն ստացող ծրագրի շահառուներն են հանդիսանում նաև՝ հաշմանդամ դպրոցահասակ երեխաները, որոնց կմատուցվեն վերականգնողական և ֆիզիոթերապևտիկ անվճար ծառայություններ: Ցերեկային վերականգնողական կենտրոնը կսպասարկի մոտ65 երեխա՝ շաբաթական 130 այցելությամբ: Երեխաների ընտրությունը կատարվում է ըստ տարիքային և սոցիալական պատկանելության՝ ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության և ԵրևանիՔաղաքապետարանիկողմից ներկայացված ցուցակների: |
| 8 | Ծրագրի իրականացման տևողությունը | մարտ 2014 թ. – 31 դեկտեմբեր 2016թ. |
| 9 | Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը | Մասնագետների վարձատրություն<br>- 26,200 եվրո 2014թ.<br>- 28,000 եվրո 2015թ.<br>- 28,000եվրո 2016թ<br>Ջրայինթերապիա – 6,600 եվրո/2014թ.-2016թ./<br>Սեմինար–7,500 եվրո/2014թ.-2016թ./<br>Ձեռքիաշխատանքներիհամարնյութեր- 3,000 եվրո/2014թ.-2016թ./<br>Ծրագրի իրականացման համար անհրաժեշտ վերականգնողական սարքավորումների ձեռքբերում, ներմուծում՝ -18,500 եվրո/2014թ.-2016թ./<br>Ավտոմեքենայի շահագործմանծախսեր ծրագրի հաշմանդամ շահառումների փոխադրման աշխատանքները կազմակերպելու նպատակով- 30,350 եվրո/2014թ.-2016թ./<br>Ծրագրային և շահառուների հիվանդության պատմության էլեկտրոնային բազայի համակարգի ստեղծման համար անհրաժեշտ համակարգչային տեխնիկայի և այլ սարքավորումների ձեռքբերում–2,000 /2014թ.-2016թ./:<br>Տարածքիվարձակալություն – 20,850 եվրո/2014թ.-2016թ./<br>Հեռախոս, ինտերնետ– 8,100 եվրո/2014թ.-2016թ./<br>Բժշկականապահովագրություն -3,300եվրո/2014թ.-2016թ./<br>Կազմակերպականծախսեր - 31,600 եվրո/2014թ.-2016թ./<br><br>**Ընդամենը - 214.000 եվրո** |
| 10. | Ձեռք բերվող (ներմուծվող) ապրանքների ու ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները և նախատեսվող գինը | Մասնագետների վարձատրություն -82,200 եվրո<br>Ջրայինթերապիա – 6,600 եվրո<br>Սեմինար–7,500 եվրո<br>Ձեռքիաշխատանքներիհամարնյութեր- 3,000 եվրո<br>Ծրագրի իրականացման համար անհրաժեշտ վերականգնողական սարքավորումների ձեռքբերում, ներմուծում՝ -18,500 եվրո<br>Ավտոմեքենայի շահագործմանծախսեր ծրագրի հաշմանդամ շահառումների փոխադրման աշխատանքները կազմակերպելու նպատակով- 30,350 եվրո<br>Ծրագրային և շահառուների հիվանդության պատմության էլեկտրոնային բազայի համակարգի ստեղծման համար անհրաժեշտ համակարգչային տեխնիկայի և այլ սարքավորումների ձեռքբերում – 2,000 եվրո:<br>Տարածքի, լողավազանի վարձակալություն – 20,850 եվրո<br>Հեռախոս, ինտերնետ – 8,100 եվրո<br>Բժշկական ապահովագրություն- 3,300 եվրո<br>Կազմակերպական ծախսեր - 31,600 եվրո<br><br>**Ընդամենը - 214.000 եվրո** |
| 11. | Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսերը | Գրասենյակային սպառողական ծախսեր –4,300 եվրո<br>Աուդիտ, հաշվապահություն, էքսպերտ -12,500 եվրո<br>Տարածքիվերանորոգմանաշխատանքներ – 3,000եվրո<br>Աշխատավարձ – 11,800 եվրո<br><br>**Ընդամենը - 31,600 եվրո** |
| 12 | Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների այլ կազմակերպությունների հետ | 1. Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն<br>2. ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն<br>3. ՀՀ Կրթության և Գիտության նախարարություն<br>4. UNICEF,Save the children Federation-Inc, World Vision |
| 13 | Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը | Անձնակազմը ներգրավված է լինելու ընթացիկ նախագծի պարբերական մոնիթորինգին և զարգացման նախագծի գործընկերներինպետք է ապահովի գործունեությանը վերաբերող զեկուցագրով: «Պատմըս-Արարատ» բարեգործական հիմնադրամի տնօրեն Ռ.Շահինյանը պարտավորված կլինի ներկայացնել ողջ զարգացման նախագծի տարեկան և հաշվետու զեկուցագրեր ֆինանսավորողներին:<br>Սահմանված կարգով հաշվետվության ներկայացում ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով: |

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

14 մարտի 2014 թվականի N Մ- 209 -Ա
քաղ. Երևան

## ԲՆՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ՀԱՅԱՍՏԱՆՅԱՆ ՄԱՍՆԱՃՅՈՒՂԻ ՀԱՍՑԵՈՎ ՍՏԱՑՎԱԾ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2014 թվականի փետրվարի 21-ի N 3/3.8-2/2572-14, Հայաստանի Հանրապետության բնապահպանության նախարարության 2014 թվականի փետրվարի 28-ի N 1/01/3/10383-14 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2014 թվականի փետրվարի 24-ի N ՎՄ/3-4/2008-14 եզրակացությունները,* ***ո ր ո շ ո ւ մ է.***

1. Բարեգործական որակել Գերմանիայի WWF հիմնադրամի կողմից Բնության համաշխարհային հիմնադրամի հայաստանյան մասնաճյուղի հասցեով ուղարկված մետաղյա ցանկապատնեշների (20 տեղ, 4720 կգ ընդհանուր քաշով, 7564 եվրո արժեքով, փոխադրման ծախսերը կազմել են 3500 եվրո, ՄԾՓ մաքսատուն) ներմուծման ծրագիրը: Մետաղյա ցանկապատնեշներն օգտագործվելու են «Դիլիջան» ազգային պարկում ստեղծվող ազնվացեղ եղջերուներին պահելու և բազմացնելու ազատավանդակների համար:

2. Բնության համաշխարհային հիմնադրամի հայաստանյան մասնաճյուղին՝ բեռի ձևակերպումն ավարտելուց հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկատվություն հանձնելու մասին:

3. Ուժը կորցրած ճանաչել Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2014 թվականի փետրվարի 14-ի N Մ-104-Ա որոշումը:

4. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության բնապահպանության նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**14 մարտի 2014 թվականի N Մ- 210 -Ա**
**քաղ. Երևան**

## «ԿԱՄՐՋԱԿ» ՍՈՑԻԱԼ-ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՀԱՍՑԵՈՎ ՍՏԱՑՎԱԾ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2014 թվականի փետրվարի 20-ի N 3/3.8-2/2527-14, Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության 2014 թվականի փետրվարի 24-ի N ՖԲ/ԱնՄ-4/1016-14, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2014 թվականի փետրվարի 21-ի N ՎՄ/3-4/1961-14 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Բարեգործական որակել «Կամրջակ» սոցիալ-բարեգործական հասարակական կազմակերպության միջոցներով ձեռք բերված և իր հասցեով ստացված չորս մատուցման սայլերի և հինգ հավաքածու անիվների («PRESTAR» մակնիշի, 10,200 դիրհամ արժողությամբ, բեռնափոխադրման ծախսերը կազմում են 100 դիրհամ և 400 ԱՄՆ-ի դոլար, «Արարատյան» տարածաշրջանային մաքսատուն) ներմուծման և անհատույց «Խարբերդի մասնագիտացված մանկատուն» ՊՈԱԿ-ին հանձնելու ծրագիրը:

2. «Կամրջակ» սոցիալ-բարեգործական հասարակական կազմակերպությանը՝ բեռի հանձնումն ավարտելուց հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկատվություն հանձնելու վերաբերյալ:

3. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն ու Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

14 մարտի 2014 թվականի N Մ- 211 -Ա
քաղ. Երևան

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱ-ԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2013 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 5-Ի N Մ-218-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ՄԱՍԻՆ («ԾԻԾԵՌՆԱԿԱԲԵՐԴ» ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ)

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2014 թվականի մարտի 6-ի N 3/3.8-2/3315-14 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2014 թվականի մարտի 3-ի N ՎՄ/3-42313 -14 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ  է.***

1. Սահմանել, որ «Ծիծեռնակաբերդ» հիմնադրամի կողմից ձեռք բերված ջեռուցման և օդափոխության համակարգի սարքավորումների (1,500.67 կգ ընդհանուր քաշով, 17,356 եվրո արժողությամբ, բեռնափոխադրման ծախսերը կազմում են 1,315,600 դրամ, ՄԾՓ տարածաշրջանային մաքսատուն) ներմուծվում են Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2013 թվականի ապրիլի 5-ի «Ծիծեռնակաբերդ» բարեգործական հիմնադրամի կողմից իրականացվող «Հայաստանի Հանրապետության գիտությունների ազգային ակադեմիայի «Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտ» ՊՈԱԿ-ի վերակառուցման և ընդարձակման համաշինարարական աշխատանքներ» ծրագրի մասին (3-րդ փուլ)» N Մ-218-Ա որոշմամբ (2013 թվականի հուլիսի 19-ի N Մ-607-Ա, նոյեմբերի 15-ի N Մ-1060-Ա, դեկտեմբերի 6-ի N Մ-1172-Ա, դեկտեմբերի 20-ի N Մ-1246-Ա և 2014 թվականի փետրվարի 14 N Մ-122-Ա որոշումների խմբագրությամբ) հաստատված ծրագրի շրջանակներում:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ　　　　　　　　　　Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

14 մարտի 2014 թվականի N Մ - 212 -Ա

քաղ. Երևան

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2013 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 25-Ի N Մ-010-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ՄԱՍԻՆ («ՎՈՐԼԴ ՎԻԺՆ ԻՆԹԵՐՆԵՅՇՆԼ» ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆՅԱՆ ՄԱՍՆԱՃՅՈՒՂ)

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2014 թվականի մարտի 6-ի N 3/3.8-2/3333-14, Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության 2014 թվականի մարտի 4-ի N ՖԲ/ԱնՄ-4/1302-14, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2014 թվականի մարտի 3-ի N ՎՄ/3-4/2384-14 եզրակացությունները,* ***որոշում է.***

1. Սահմանել, որ «Վորլդ վիժն ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղի հասցեով ստացված բեռը (690 տեղ, 4351 կգ ընդհանուր քաշով, 55465 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ արժեքով, որից փոխադրման ծախսերը կազմել են 5465 ԱՄՆ-ի դոլար, բաշխման ցանկը կցվում է, «Արարատյան» տարածաշրջանային մաքսատուն) ներմուծվում է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2013 թվականի հունվարի 25-ի N Մ-010-Ա որոշմամբ հաստատված ծրագրի շրջանակներում:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե, Երևանի քաղաքապետին, Հայաստանի Հանրապետության Արագածոտնի, Գեղարքունիքի, Լոռու, Շիրակի, Սյունիքի և Տավուշի մարզպետներին:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

---

3/19.22

«Վորլդ Վիժն Ինթերնեյշնլ» ՄԲԿ Հայաստանյան մասնաճյուղի կողմից
C 5656 առ 21.02.2014 հայտարարագրով ԱՄՆ-ից ստացված բեռի
ԲԱՇԽՄԱՆ ՑՈՒՑԱԿ (մեկ կոնտեյներ)

Կոնտեյների համարն է՝ **MEDU 415714-0**: Բեռի ընդհանուր արժեքը կազմում է 55465.00 ԱՄՆ դոլար, որից տրանսպորտային ծախսերը կազմում են 5465.00 ԱՄՆ դոլար, քաշը՝ 4351 կգ, տեղերի քանակը 690:

| Քանակ | Չափման միավոր | Նկարագրություն | Քաշը (կգ.բր.) | Գինը (ԱՄՆ դոլար) | Բաշխման վայրը, ՅՅ Կառավարության ԲԾՅՅ որոշումը |
|---|---|---|---|---|---|
| 1400<br>32 | Հատ<br>Հատ | Շապիկ<br>Խալաթ | | 4774.00<br>147.52 | Մ-010-Ա Բարեգործական բեռների ներմուծում և անհատույց բաշխում Հայաստանի տարածաշրջաններում (Գյումրու տարածաշրջան) |
| 1400<br>30 | Հատ<br>Հատ | Շապիկ<br>Խալաթ | | 4774.00<br>138.30 | Մ-010-Ա Բարեգործական բեռների ներմուծում և անհատույց բաշխում Հայաստանի տարածաշրջաններում (Տավուշի տարածաշրջան) |
| 1700<br>30 | Հատ<br>Հատ | Շապիկ<br>Խալաթ | | 5795.00<br>138.30 | Մ-010-Ա Բարեգործական բեռների ներմուծում և անհատույց բաշխում Հայաստանի տարածաշրջաններում (Վարդենիսի տարածաշրջան) |
| 1600<br>20 | Հատ<br>Հատ | Շապիկ<br>Խալաթ | | 5456.00<br>92.20 | Մ-010-Ա Բարեգործական բեռների ներմուծում և անհատույց բաշխում Հայաստանի տարածաշրջաններում (Կապանի տարածաշրջան) |
| 1700<br>30 | Հատ<br>Հատ | Շապիկ<br>Խալաթ | | 5795.00<br>138.30 | Մ-010-Ա Բարեգործական բեռների ներմուծում և անհատույց բաշխում Հայաստանի տարածաշրջաններում (Սիսիանի և Գորիսի տարածաշրջան) |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| 1700<br>20 | Հատ<br>Հատ | Շապիկ<br>Խալաթ | | 5795.00<br>92.20 | Մ-010-Ա Բարեգործական բեռների ներմուծում և անհատույց բաշխում Հայաստանի տարածաշրջաններում (Թալինի տարածաշրջան) |
| 1600<br>20 | Հատ<br>Հատ | Շապիկ<br>Խալաթ | | 5456.00<br>92.20 | Մ-010-Ա Բարեգործական բեռների ներմուծում և անհատույց բաշխում Հայաստանի տարածաշրջաններում (Գավառի տարածաշրջան) |
| 1200<br>20 | Հատ<br>Հատ | Շապիկ<br>Խալաթ | | 4092.00<br>92.20 | Մ-010-Ա Բարեգործական բեռների ներմուծում և անհատույց բաշխում Հայաստանի տարածաշրջաններում (Ստեփանավանի տարածաշրջան) |
| 700 | Հատ | Շապիկ | | 2387.00 | Մ-010-Ա Բարեգործական բեռների ներմուծում և անհատույց բաշխում Հայաստանի տարածաշրջաններում (Ամասիայի տարածաշրջան) |
| 750 | Հատ | Շապիկ | | 2557.50 | Մ-010-Ա Բարեգործական բեռների ներմուծում և անհատույց բաշխում Հայաստանի տարածաշրջաններում (Ապարանի տարածաշրջան) |
| 2254 | Հատ | Շապիկ | | 7652.28 | Մ-010-Ա Բարեգործական բեռների ներմուծում և անհատույց բաշխում Հայաստանի տարածաշրջաններում (Երևանի Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջան) |
| | | ԸՆԴԱՄԵՆԸ | 4351.00 | 55465.00 | |

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**
**14 մարտի 2014 թվականի N Մ - 213 - Ա**
**քաղ. Երևան**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2013 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 5-Ի N Մ-218-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻՆ ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ («ԾԻԾԵՌՆԱԿԱԲԵՐԴ» ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ)**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2014 թվականի մարտի 6-ի N 3/3.8-2/331-14 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2014 թվականի մարտի 3-ի N ՎՄ/3-4/2314-14 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Սահմանել, որ «Ծիծեռնակաբերդ» բարեգործական հիմնադրամի կողմից (ՀՎՀՀ՝ 02705657) կնքված՝ ստորև նշված պայմանագրերով նախատեսված գործարքներն անմիջականորեն կապված են Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2013 թվականի ապրիլի 5-ի «Ծիծեռնակաբերդ» բարեգործական հիմնադրամի կողմից իրականացվող «Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտ» ՊՈԱԿ-ի վերակառուցման և ընդարձակման համաշինարարական աշխատանքներ» (3-րդ փուլ)» N Մ-218-Ա որոշմամբ (2013 թվականի հուլիսի 19-ի N Մ-607-Ա, նոյեմբերի 15-ի N Մ-1060-Ա, դեկտեմբերի 6-ի N Մ-1172-Ա, դեկտեմբերի 20-ի N Մ-1246-Ա և 2014 թվականի փետրվարի 14 N Մ-122-Ա որոշումների խմբագրությամբ) հաստատված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունեն զգալի նշանակություն՝

1) «Բիզնես սուպորթ թիմ» ՍՊԸ-ի (ՀՎՀՀ՝ 01830183) հետ 2014 թվականի փետրվարի 3-ին կնքված պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է գրանիտե սալերի ձեռքբերում՝ 2,300,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի.

2) «Վուդկրաֆտ» ՍՊԸ-ի (ՀՎՀՀ՝ 00440713) հետ 2014 թվականի սեպտեմբերի 20-ին կնքված N 05 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է դռների պատրաստման և տեղադրման աշխատանքների իրականացում՝ 1,890,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**
**14 մարտի 2014 թվականի N Մ - 214 - Ա**
**քաղ. Երևան**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2013 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 5-Ի N Մ-218-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻՆ ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔԻ ՄԱՍԻՆ («ԾԻԾԵՌՆԱԿԱԲԵՐԴ» ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ) N 4**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2014 թվականի փետրվարի 17-ի N 3/3.8-2/2249-14 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2014 թվականի փետրվարի 18-ի N ՎՄ/3-4/1822-14 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Սահմանել, որ «Ծիծեռնակաբերդ» բարեգործական հիմնադրամի կողմից (ՀՎՀՀ՝ 02705657) կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքն անմիջականորեն կապված է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգոր-ծական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2013 թվականի ապրիլի 5-ի «Ծիծեռնակաբերդ» բարեգործական հիմնադրամի կողմից իրականացվող «Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտ» ՊՈԱԿ-ի վերակառուցման և ընդարձակման համաշինարարական աշխատանքներ» (3-րդ փուլ)» N Մ-218-Ա որոշմամբ (2013 թվականի հուլիսի 19-ի N Մ-607-Ա, նոյեմբերի 15-ի N Մ-1060-Ա, դեկտեմբերի 6-ի N Մ-1172-Ա, դեկտեմբերի 20-ի N Մ-1246-Ա և 2014 թվականի փետրվարի 14 N Մ-122-Ա որոշումների խմբագրությամբ) հաստատված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

«Ալբերտ Կարախանյան և որդիներ» ՍՊԸ-ի (ՀՎՀՀ՝ 00441423) և «Վեմքար» ՍՊԸ-ի (ՀՎՀՀ՝ 06106307) հետ 2014 թվականի փետրվարի 1-ին կնքված N 01 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է նկարագրված ծառայությունների մատուցում՝ 2,000,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ**
**ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**

**14 մարտի 2014 թվականի N Մ- 215 -Ա**
**քաղ. Երևան**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2012 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 18-Ի N Մ-366-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻՆ ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ («ՏԻՐԱՄԱՅՐ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄ)**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2014 թվականի փետրվարի 25-ի N 3.8-2/2724-14 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2014 թվականի փետրվարի 21-ի N ՎՄ/3-4/1959-14 գրությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Սահմանել, որ «Տիրամայր Հայաստանի դաստիարակության կենտրոն» հիմնադրամի կողմից կնքված՝ ստորև նշված պայմանագրերով նախատեսված գործարքներն անմիջականորեն կապված են Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2012 թվականի մայիսի 18-ի «Տիրամայր Հայաստանի դաստիարակության կենտրոն» հիմնադրամի կողմից իրականացվող ծրագրի մասին» N Մ-366-Ա (2012 թվականի հունիսի 8-ի N Մ-418-Ա որոշման խմբագրությամբ) որոշմամբ հաստատված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունեն զգալի նշանակություն՝

1) «ՄԱԳ-Էլեկտրոն» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 07203241) 2014 թվականի փետրվարի 14-ին կնքված N 1 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է ձեղնահարկի ջեռուցման և հեռուստակոմունիկացիայի աշխատանքների իրականացում՝ 3,000,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի.

2) «ՄԱԳ-Էլեկտրոն» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 07203241) 2014 թվականի փետրվարի 14-ին կնքված N 1 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է ձեղնահարկի կահույքի ձեռքբերում՝ 3,800,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն ու Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

**Ո Ր Ո Շ Ու Մ**

**14 մարտի 2014 թվականի N Մ- 216 -Ա**

**քաղ. Երևան**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2014 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 17-Ի N Մ-126-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻՆ ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ (ՀԱՅԱՍՏԱՆԻ ՄԱՆՈՒԿՆԵՐԻ ՀԻՄՆԱԴՐԱՄ)**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2014 թվականի մարտի 5-ի N 3/3.8-2/3215-14 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2014 թվականի մարտի 3-ի N ՎՄ/3-4/2377-14 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ  է.***

1. Սահմանել, որ Հայաստանի մանուկների հիմնադրամի կողմից կնքված՝ ստորև նշված պայմանագրերով նախատեսված գործարքներն անմիջականորեն կապված են Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2014 թվականի փետրվարի 17-ի «Հայաստանի մանուկների հիմնադրամի կողմից իրականացվող «Գյուղական համայնքների զարգացում» ծրագրի մասին» N Մ-126-Ա որոշմամբ հաստատված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունեն զգալի նշանակություն՝

1) «Նորդ Ավենյու» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 01555764) 2010 թվականի դեկտեմբերի 30-ին կնքված համաձայնագրում նշված գործարքը, որով նախատեսվում է 2014 թվականի հունվարի 1-ից մինչև դեկտեմբերի 31-ը կոմունալ ծառայությունների մատուցում՝ 1,600,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի.

2) «Յուքոմ» ՍՊԸ -ի հետ (ՀՎՀՀ՝ 00024873) 2013 թվականի նոյեմբերի 21-ին կնքված N 022/21/11/2013 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է 2014 թվականի հունվարի 1-ից մինչև դեկտեմբերի 31-ը էլեկտրոնային հաղորդակցության ծառայությունների մատուցում՝ 900,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի.

3) «Գրանդ քենդի» հայ-կանադական ՀՁ» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 02569972) 2014 թվականի հունվարի 8-ին կնքված N 03 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է սանհիգիենիկ պարագաների ձեռքբերում՝ 1,000,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի.

4) «Սմարթլայն» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 01548908) 2014 թվականի հունվարի 8-ին կնքված N 01 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է թղթի և գրենական պիտույքների մատակարարում՝ 2,000,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի.

5) «ՀԷՑ» ՓԲԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 01520882) 2012 թվականի հունվարի 25-ին կնքված N 230834 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է 2014 թվականի հունվարի 1-ից մինչև դեկտեմբերի 31-ը էլեկտրաէներգիայի մատակարարում՝ 700,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի.

6) քաղաքացի Նոնա Ղարաբաղցյանի հետ (անձնագիր սերիա AH 0377601, տրված 15.05.2007թ., 040-ից) 2010 թվականի օգոստոսի 18-ին կնքված պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է 2014 թվականի հունվարի 1-ից մինչև սեպտեմբերի 30-ը անշարժ գույքի վարձակալում՝ 11,295,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի.

7) «Սի Փի Էս Օիլ Քորփորեյշն» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 02614085) 2014 թվականի հունվարի 8-ին կնքված N 06 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է բենզինի և դիզելային վառելիքի մատակարարում՝ 15,000,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի.

8) «Ղ-Տելեկոմ» ՓԲԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 01551651) 2009 թվականի փետրվարի 4-ին կնքված տվյալների փոխանցման ծառայությունների մատուցման և հետվճարային հիմունքներով մատուցվող շարժական կապի ծառայությունների մատուցման N 04/02/09 պայմանագրերում նշված գործարքները, որոնցով նախատեսվում են 2014 թվականի հունվարի 1-ից մինչև դեկտեմբերի 31-ը կապի ծառայությունների մատուցում՝ 2,000,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի.

9) «ԱրմենՏել» ՓԲԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 02500052) 2010 թվականի հոկտեմբերի 13-ին կնքված՝ N 115080665/S4004012 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է 2014 թվականի հունվարի 1-ից մինչև դեկտեմբերի 31-ը կապի ծառայությունների մատուցում՝ 1,000,000 դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի.

10) «ԱրմենՏել» ՓԲԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 02500052) 2010 թվականի սեպտեմբերի 15-ին կնքված՝ N 115080665/S4004016 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է 2014 թվականի հունվարի 1-ից մինչև դեկտեմբերի 31-ը կապի ծառայությունների մատուցում՝ 1,000,000 դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի.

11) «Օրանժ Արմենիա» ՓԲԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 00098599) 2013 թվականի ապրիլի 3-ին կնքված N 2354110 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է 2014 թվականի հունվարի 1-ից մինչև դեկտեմբերի 31-ը կապի ծառայությունների մատուցում՝ 450,000 դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի.

12) «Տիգրան Մեծ» ՓԲԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 02505322) 2013 թվականի ապրիլի 30-ին կնքված պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է տպագրական աշխատանքների իրականացում՝ 1,500,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի.

13) «Բիզնես Քոնսալթ» ՓԲԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 01538458) 2013 թվականի նոյեմբերի 20-ին կնքված պայմանագրում նշված գործարքը (2014 թվականի փետրվարի 11-ի N 01 համաձայնագրի գմբագրությամբ), որով նախատեսվում է 2014 թվականի հունվարի 1-ից մինչև դեկտեմբերի 31-ը հաշվապահական հաշվառման աշխատանքների իրականացում՝ 8,275,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի.

14) «Ֆարմ Թրաստ» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 00043772) 2014 թվականի հունվարի 8-ին կնքված N 05 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է դեղորայքի մատակարարում՝ 2,000,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի.

15) «ՏՈՍՊ» ԲԲԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 01803966) 2013 թվականի հունիսի 10-ին կնքված պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում 2014 թվականի հունվարի 1-ից մինչև դեկտեմբերի 31-ը ապրանքների ձեռքբերում՝ 2,500,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի.

16) «Աստղիկ» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 00835755) 2014 թվականի հունվարի 8-ին կնքված պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է նյութերի տպագրում՝ 3,000,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի.

17) «Էվրի դեյ» ՓԲԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 09104669) 2013 թվականի հունվարի 8-ին կնքված N 02-13 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է 2014 թվականի հունվարի 1-ից մինչև դեկտեմբերի 31-ը «Բյուրեղ» ջրի մատակարարում՝ 1,500,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ**
**ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**
**14 մարտի 2014 թվականի N Մ - 217 - Ա**
**քաղ. Երևան**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2013 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 15-Ի N Մ-106-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԵՎ ՆՈՒՅՆ ԾՐԱԳՐԻՆ ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔԻ ՄԱՍԻՆ («ՀԱՅԱՍՏԱՆ» ՀԱՄԱՀԱՅԿԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ)**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2014 թվականի փետրվարի 24-ի N 3/3.8-2/2689-14 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2014 թվականի փետրվարի 21-ի N ՎՄ/3-4/ 1960-14 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2013 թվականի փետրվարի 15-ի «Հայաստան» համահայկական հիմնադրամի կողմից իրականացվող «Հեռուստամարաթոն-2013» ծրագրի մասին» N Մ-106-Ա որոշմամբ հաստատված ծրագրի 7-րդ կետում «մինչև 2014 թվականի հունվարի 29-ը» բառերը փոխարինել «մինչև 2014 թվականի դեկտեմբերի 30-ը» բառերով:

2. Սահմանել, որ «Հայաստան» համահայկական հիմնադրամի կողմից կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքն անմիջականորեն կապված է սույն որոշման 1-ի կետում նշված որոշմամբ հաստատված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

«Վերսուս Ստուդիա» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 00842355) 2014 թվականի փետրվարի 14-ին կնքված N Ծ-02/14 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է պատրաստել «Ձեռք-ձեռքի» հաղորդաշարի ինը թողարկում՝ 18,000,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

3. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

14 մարտի 2014 թվականի N Մ - 218 - Ա

քաղ. Երևան

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱ-ԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2014 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 14-Ի N Մ-135-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ («ՀԱՅԱՍՏԱՆ» ՀԱՄԱՀԱՅԿԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ)

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հաշվի առնելով «Հայաստան» համահայկական հիմնադրամի գործադիր տնօրենի 2014 թվականի փետրվարի 26-ի N ՀՀՀ.5/27-082 գրությունը,* ***ո ր ո շ ո ւ մ է.***

1. Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2014 թվականի փետրվարի 14-ի «Հայաստան» համահայկական հիմնադրամի կողմից իրականացվող «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Ակնաղբյուր, Խանցք և Նոր Մարաղա համայնքային կենտրոնների կահավորում» ծրագրի մասին» N Մ-135-Ա որոշման 2-րդ կետի 3-րդ ենթակետում «Խանցք գյուղի համայնքային կենտրոնում» բառերը փոխարինել «Նոր Մարաղա գյուղի համայնքա-յին կենտրոնում» բառերով:

3. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարա-րություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
14 մարտի 2014 թվականի N Մ- 219 -Ա
քաղ. Երևան

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2013 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 6-Ի N Մ-1169-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ («ՍՕՍ-ՄԱՆԿԱԿԱՆ ԳՅՈՒՂԵՐ» ՀԱՅԿԱԿԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ)**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2014 թվականի փետրվարի 26-ի N 3/3.8-2/2853-14 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2014 թվականի փետրվարի 24-ի N ՎՄ/3-4/2002-14 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2013 թվականի դեկտեմբերի 6-ի «Հայաստանի Հանրապետության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2013 թվականի մարտի 15-ի N Մ-175-Ա որոշմամբ հաստատված ծրագրին հարակից գործարքների մասին («ՍՕՍ-մանկական գյուղեր» հայկական բարեգործական հիմնադրամի)» N Մ-1169-Ա որոշման 1-ին կետի 2-րդ ենթակետում «2013 թվականի հուլիսի 7-ին կնքված N 011.08.13.0127 պայմանագրում» բառերը փոխարինել «2013 թվականի հուլիսի 7-ին կնքված N 011.08.13.0127, N 012.08.13.0127 և N 015.08.13.0127 պայմանա-գրերում» բառերով:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**

**14 մարտի 2014 թվականի N Մ - 220 - Ա**

**քաղ. Երևան**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2013 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 17-Ի N Մ-359-Ա ՈՐՈՇՄԱՆ ԵՎ ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ («ՏԻՐԱՄԱՅՐ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿՈՒՍԱՍՏԱՆ» ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ)

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2014 թվականի փետրվարի 27-ի N 3/3.8-2/2904-14 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2014 թվականի փետրվարի 24-ի N ՎՄ/3-4/2004-14 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2013 թվականի մայիսի 17-ի «Տիրամայր Հայաստանի կուսաստան» բարեգործական կազմակերպության կողմից իրականացվող «Անի Բեգիկյան» երիտասարդական կենտրոն» ծրագրի մասին» N Մ-359-Ա որոշման և որոշմամբ հաստատված ծրագրում կատարել հետևյալ փոփոխությունները՝

1) որոշման 1-ին և ծրագրի 6-րդ կետերում «285,000,000 դրամ» բառերը փոխարինել «304,000,000 դրամ» բառերով.

2) որոշման 1-ի կետի 2-րդ ենթակետում և ծրագրի 10-րդ կետում «83,296,805 դրամ» բառերը փոխարինել «102,253,967 դրամ» բառերով:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն ու Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

**14 մարտի 2014 թվականի N Մ- 221 -Ա**
**քաղ. Երևան**

## «ԽԱՐԲԵՐԴԻ ՄԱՍՆԱԳԻՏԱՑՎԱԾ ՄԱՆԿԱՏՈՒՆ» ՊՈԱԿ-Ի ՀԱՍՑԵՈՎ ՍՏԱՑՎԱԾ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2014 թվականի մարտի 11-ի N 3/3.8-2/3572-14, Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության 2014 թվականի մարտի 12-ի N ՖԲ/ԱՆՄ-4/1484-14 ու Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2014 թվականի մարտի 6-ի N ՎՄ/3-4/2523-14 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Բարեգործական որակել Հոլանդիայից «Համմիկ» հասարակական կազմակերպության կողմից «Խարբերդի մասնագիտացված մանկատուն» ՊՈԱԿ-ի հասցեով ստացված բեռը (365.15 կգ քաշով, 1602.90 եվրո արժեքով, բեռնափոխադրման ծախսերը կազմում են 2085 եվրո, բեռի և բաշխման ցանկը կցվում է, «Արարատյան» տարածաշրջանային մաքսատուն) ներմուծման ծրագիրը:

2. «Խարբերդի մասնագիտացված մանկատուն» ՊՈԱԿ-ին՝ նշված բեռի ձևակեր-պումն ավարտելուց հետո մեկամսյա ժամկետում սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկատվություն:

3. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

## ԲԱԽՇՄԱՆ ՑԱՆԿ

| Անվանում | Արտադրանի | Քաշ | Գումար /դրամ համարժեք եվրո/ | HS կոդ | <<Խարբերդի մասնագիտացված մանկատուն>> ՊՈԱԿ | Անկախ երիտասարդների համաշխարհային միավորում | <<Կամըջակ>> ՄԲՀԿ |
|---|---|---|---|---|---|---|---|
| Լոգանքի աթոռ | Flexo | 50 կգ | 107540 դրամ /համ.190,00 եվրո/ | 9402900 | + | | |
| Անվասայլակ | Revab | 39կգ | 45280 դրամ /համ. 80,00 եվրո/ | 9402900 | + | | |
| Անվասայլակ | WVG | 39կգ | 45280 դրամ /համ.80,00 եվրո/ | 9402900 | + | | |
| Ցնցուղ ընդունելու պատգարակ | Spencer | 30 կգ | 84900 դրամ /համ. 150,00 եվրո/ | 9402900 | + | | |
| Լոգանքի փոքր աթոռ | flamingo | 17 կգ | 79240 դրամ /համ.150,00 եվրո/ | 9402900 | + | | |
| Աթոռ(7) | | 16 կգ | 28300 դրամ /50,00 եվրո/ | 940171 | + | | |
| Շարժական աթոռ լոգանքի | | 9,9 կգ | 22640 դրամ /համ. 40,00 եվրո/ | 9402900 | + | | |
| Բրեկետ /brackets/ | | 4,2 կգ | 11320դրամ /համ. 20,00 եվրո/ | 83025000 | + | | |
| | | | | | | | |
| Քայլակ | maclaren | | 101880 դրամ /համ.180,00 եվրո/ | 87150010 | + | | |
| Քայլակ | Horack | | 107540 դրամ /համ. 190,00 եվրո/ | 87150010 | + | | |
| ՏՈՒՓ 1 | | | | | | | |
| Ապրանք /incontinentiemateriaal/ | | 7.2 կգ | 11320 դրամ /համ. 20,00 եվրո/ | 48184000 | + | | |
| ՏՈՒՓ 2 | | 6.8 կգ | | | | | |
| Ապրանք /incontinentiemateriaal/ | | | 11320 դրամ /համ.20.00 եվրո/ | 48184000 | + | | |
| Խաղալիք | | | 11320 դրամ /համ. 20,00 եվրո/ | 95030070 | + | | |
| ՏՈՒՓ 3 | | | | | | | |
| Ծրար(2x) | | | 11320 դրամ /համ. 20.00 եվրո/ | 630221 | + | | |
| ՏՈՒՓ4 | | | | | | | |
| Սրբիչ (18) | | 6 կգ | 11320 դրամ /համ. 20,00 եվրո/ | 630260 | + | | |

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| **ՏՈՒՓ 5** | | 4,7 կգ | | | | | |
| Սրբիչ (13) | | | 11320 դրամ /հատ. 20.00 եվրո/ | 630260 | + | | |
| Աման լվանալու շոր (16) | | | 11320 դրամ /հատ. 20,00 եվրո/ | 630260 | + | | |
| **ՏՈՒՓ 6** | | 8,4 կգ | | | | | |
| Ծրար(1) | | | 22640 դրամ /հատ.40.00 եվրո/ | 630260 | + | | |
| Փոքր սրբիչ (6) | | | 11320 դրամ /հատ. 20,00 եվրո/ | 630260 | + | | |
| Սրբիչ (16) | | | 11320 դրամ /հատ. 20.00 եվրո/ | 630260 | + | | |
| Տակաշոր (3) | | | 340 դրամ /հատ. 06,00 եվրո/ | 630260 | + | | |
| Գիշերանոց | | | 114դրամ /հատ 02,00 եվրո/ | 610722 | + | | |
| Բլուզ | | | 114 դրամ /հատ 02,00 եվրո/ | 611030 | + | | |
| Գուլպա | | | 114 դրամ /հատ 02,00 եվրո/ | 611510 | + | | |
| **ՏՈՒՓ 7** | | 7,5 կգ | | | | | |
| Կոշիկ (11) | | | 11320 դրամ /հատ. 20.00 եվրո/ | 42031010 | | + | |
| Ձեռնոց (2) | | | 230 դրամ /հատ 04,00 եվրո/ | 611710 | | + | |
| Շարֆ (2) | | | 114 դրամ /հատ 02,00 եվրո/ | 611710 | | + | |
| Գլխարկ | | | 114 դրամ /հատ 02,00 եվրո/ | 611710 | | + | |
| **ՏՈՒՓ 8** | | 6,4 կգ | | | | | |
| Վերարկու(7) | | | 11320 դրամ /հատ. 20.00 եվրո/ | 610230 | | + | |
| **ՏՈՒՓ 9** | | 8,0 կգ | | | | | |
| Կոշիկ ( 7) | | | 11320 դրամ /հատ. 20.00 եվրո/ | 42031010 | | + | |
| Վերարկու(6) | | | 5660 դրամ /10,00 եվրո/ | 610230 | | + | |
| Ջինս (2) | | | 5660 դրամ /10,00 եվրո/ | 6309 | | + | |
| skijeans | | | 5660 դրամ /10,00 եվրո/ | 6309 | | + | |
| **ՏՈՒՓ 10** | | 5,7 կգ | | | | | |
| Վերարկու(10) | | | 22640 դրամ /հատ. 40,00 եվրո/ | 6309 | | + | |
| **ՏՈՒՓ 11** | | 6.7 | | | | | |
| Վերարկու (9) | | | 11320 դրամ /հատ. 20.00 եվրո/ | 6309 | | + | |
| **ՏՈՒՓ 12** | | 8,1 կգ | | | | | |
| skijeans | | | 11320 դրամ /հատ. 20.00 եվրո/ | 6309 | | + | |
| Վերարկու (9) | | | 11320 դրամ /հատ. 20.00 եվրո/ | 6309 | | + | |
| **ՏՈՒՓ 13** | | | | | | | |
| Աթոռ | | 20 կգ | 481100 դրամ /850 եվրո/ | 940171 | + | | |
| **ՏՈՒՓ 14** | | | | | | | |
| Աթոռ | | 20 կգ | 481666 դրամ /851 եվրո/ | 940171 | + | | |
| **ՏՈՒՓ 15** | | 5 կգ | | | | | |
| Աման լվանալու շոր (45) | | | 11320 դրամ /հատ. 20.00 եվրո/ | 330491 | + | | |
| **ՏՈՒՓ 16** | | 7,7 կգ | | | | | |
| Գուլպա (110) | | | | | + | | |
| **ՏՈՒՓ 17** | | 8,1 կգ | | | | | |
| Խաղալիք | | | 22640 դրամ /հատ. 40,00 եվրո/ | 95030021 | + | | |
| **ՏՈՒՓ 18** | | 8,1 կգ | | | | | |
| Հագուստ | | | 16980 դրամ /հատ. 30,00 եվրո/ | 6309 | + | | |
| Տակաշոր (17) | | | 5660 դրամ /10,00 եվրո/ | 630260 | + | | |
| **ՏՈՒՓ 19** | | 4,5 կգ | | | | | |
| Տաբատ (20) | | | 16980 դրամ /հատ. 30,00 եվրո/ | 611020 | + | | |
| **ՏՈՒՓ 20** | | 10,1 կգ | | | | | |
| Տաբատ | | | 16980 դրամ /հատ. 30,00 եվրո/ | 611020 | | | |
| **ՏՈՒՓ 21** | | 4,5 կգ | | | | | |
| Երկարաճիտք կոշիկ (7) | | | 11320 դրամ /հատ. 20,00 եվրո/ | 640291 | + | | |
| Վերարկու | | | 2265 դրամ /հատ. 4,00 եվրո/ | 6309 | + | | |
| skijeans | | | 5660 դրամ /10,00 եվրո/ | 6309 | + | | |

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| **ՏՈՒՓ 22** | | 8.7 կգ | | | | | |
| Տարբեր խաղալիքներ | | | 16980 դրամ /համ. 30,00 եվրո/ | 95030070 | + | | |
| **ՏՈՒՓ 23** | | 4,5 կգ | | | | | |
| Տաբատ (20) | | | 16980 դրամ /համ. 30,00 եվրո/ | 611020 | + | | |
| **ՏՈՒՓ 24** | | 5,7 կգ | | | | | |
| Տաբատ | | | | 611020 | + | | |
| **ՏՈՒՓ 25** | | | | | | | |
| Մանկական հագուստ | | | 16980 դրամ /համ. 30,00 եվրո/ | 6309 | | + | |
| **ՏՈՒՓ 26** | | 9 կգ | | | | | |
| Խաղալիքներ | | | 11320 դրամ /համ. 20.00 եվրո/ | 95030070 | + | | |
| Սպասք | | | 5660 դրամ /համ. 10,00 եվրո/ | 392410 | + | | |
| **ՏՈՒՓ 27** | | 7,55 կգ | | | | | |
| Երկարաճիտք կոշիկ (7) | | | 11320 դրամ /համ. 20.00 եվրո/ | 640291 | | + | |
| Վերարկու | | | 5660 դրամ /10,00 եվրո/ | 6309 | | + | |
| skijeans | | | 5660 դրամ /10,00 եվրո/ | 6309 | | + | |
| Կրեմ (20) | klinion | | 11320 դրամ /համ. 20.00 եվրո/ | 330491 | | + | |
| Շամպուն (35)Սպա հավաքածու | | | 11320 դրամ /համ. 20.00 եվրո/ | 330590 | | + | |
| Մանկական հեծանիվ | | 10 կգ | 28300 դրամ /համ. 50,00 եվրո/ | 87120030 | | | + |

Asmik Armenië

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

**14 մարտի 2014 թվականի N Մ- 222 -Ա**

**քաղ. Երևան**

## «ՀԱՅ ԴՊՐՈՑ» ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ՀԱՍՑԵՈՎ ՍՏԱՑՎԱԾ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾ-ՄԱՆ ԵՎ ԲԱՇԽՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2014 թվականի մարտի 6-ի N 3/3.8-2/3328-14, Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության 2014 թվականի մարտի 3-ի N ՖԲ/ԱնՄ-4/1288-14, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2014 թվականի մարտի 3-ի N ՎՄ/3-4/2342-14 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Բարեգործական որակել Իրանի Իսլամական Հանրապետությունից անհատ բարերարների կողմից «Հայ դպրոց» հիմնադրամի հասցեով ստացված բեռի (25 տեղ, 5723 ԱՄՆ-ի դոլար արժողությամբ, բեռնափոխադրման ծախսերը կազմում են 2130 ԱՄՆ-ի դոլար, բախշման ցանկը կցվում է, «Արարատյան» տարածաշրջանային մաքսատուն) ներմուծման և բաշխման ծրագիրը:

2. «Հայ դպրոց» հիմնադրամին՝ բեռի բաշխումն ավարտելուց հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկատվություն հանձնելու վերաբերյալ:

3. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե և Հայաստանի Հանրապետության Արագածոտնի, Լոռու, Տավուշի, Վայոց ձորի մարզպետարաններ:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

Արագածոտնի Մարզ

| Գյուղ/դպրոց | Աշ.թիվը | Բաշխվող հագուստ, կոշիկ և այլ պարագաներ |
|---|---|---|
| Օշական | 50 | 10հատ մանկական ձմեռային տղայի կարճ վերարկու<br>10զույգ տղայի կոշիկ<br>5 զույգ աղջկա երկարաճիտ կոշիկ՝արհեստական մորթով<br>30զույգ բամբակյա գուլպաներ<br>10 հատ ձմեռային շարֆերի, գլխարկների, ձեռնոցների հավաքածու<br>3 հատ տղամարդու ներքնազգեստ<br>5հատ տղամարդու բրդյա սվիտր |
| | | 400 դոլար |
| Նոր Արտագերս | 120 | 10հատ մանկական ձմեռային տղայի կարճ վերարկու<br>10զույգ տղայի կոշիկ<br>5 զույգ աղջկա երկարաճիտ կոշիկ՝արհեստական մորթով<br>30զույգ բամբակյա գուլպաներ<br>10հատ ձմեռային շարֆերի, գլխարկների, ձեռնոցների հավաքածու<br>5 հատ տղամարդու ներքնազգեստ<br>1հատ տղամարդու տաբատ<br>1հատ կանացի շրջազգեստ<br>3հատ մանկական երկարաթև բամբակյա շապիկներ<br>1հատ կանացի երկարաճիտ կաշվե կոշիկներ<br>1հատ Կանացի բրդյա սվիտր<br>2 հատ կանացի սինթետիկ բլուզ |
| | | 500դոլար |
| Ղափանքափա | 14 | 10հատ մանկական ձմեռային տղայի կարճ վերարկու<br>2 հատ ձմեռային աղջկա վերարկու<br>10զույգ բամբակյա գուլպաներ |
| | | 300 դոլար |

| | | |
|---|---|---|
| Լուսակն | 13 | 5հատ մանկական ծծեռային տղայի կարճ վերարկու<br>5հատ ծծեռային աղջկա վերարկու<br>10զույգ բամբակյա գուլպաներ |
| | | 300 դոլար |
| Պարտիզակ | 41 | 10հատ մանակական բլուզ աղջկա համար<br>3հատ կանացի բրդյա ժակետ<br>3հատ մանկական ծծեռային կարճ վերարկու աղջկա համար<br>10զույգ տղայի կոշիկ |
| | | 200 դոլար |
| Մուղնի | 80 | 1.2կգ խառը հագուստ<br>1.3կգգործելու թել՝ակրիլ<br>1.65կգ գործելու թել՝ ակրիլ<br>1կգ գործելու թել՝ բուրդ<br>0.4կգ գործելու թել՝ բուրդ<br>0.8կգ գործելու թել՝բուրդ<br>13հատ նոթատետր<br>10հատ նկարչական ալբոմ<br>50հատ գնդիկավոր գրիչ.<br>18 հատ գնդիկավոր գրիչ<br>0.1կգ պլաստմասե քանոն |
| | | 100 դոլար |

Վայոց Ձորի Մարզ

| Գյուղ/դպրոց | Աշ.թիվը | Բաշխվող հագուստ , կոշիկ և այլ պարագաներ |
|---|---|---|
| Սալի | 10 | 5հատ մանակական ծծեռային տղայի կարճ վերարկու<br>5 հատ ծծեռային աղջկա վերարկու<br>10զույգ բամբակյա գուլպա |
| | | 200 դոլար |
| Յորս | 17 | 5 հատ մանակական ծծեռային տղայի կարճ վերարկու<br>5հատ ծծեռային աղջկա վերարկու |
| | | 200 դոլար |
| Աղնջաձոր | 50 | 10հատ մանակական ծծեռային տղայի կարճ վերարկու<br>5 հատ ծծեռային աղջկա վերարկու<br>10հատ ծծեռային կարճ աղջկա վերարկու<br>10զույգ բամբակյա գուլպա |
| | | 200 դոլար |
| Գոմք | 28 | 28զույգ բամբակյա գուլպա<br>20հատ ծծեռային շարֆերի, գլխարկների, ձեռնոցների հավաքածու<br>5հատ աղջկա մանկական բլուզ աղջկա |
| | | 200 դոլար |
| Սարավան | 34 | 10զույգ տղայի կոշիկ<br>5հատ ծծեռային աղջկա վերարկու<br>5 հատ աղջկա մանկական բլուզ<br>5զույգ աղջկա երկարաճիտ կոշիկ՝ արհեստակա մորթով |

| | | |
|---|---|---|
| | | |
| | | 400 դոլար |
| Փոռ | 5 | 5հատ մանկական ձմեռային տղայի կարճ վերարկու<br>10զույգ բամբակյա գուլպա |
| | | 250դոլար |
| Բարձրունի | 22 | 6հատ մանկական ձմեռային տղայի կարճ վերարկու<br>4 հատ ձմեռային աղջկա վերարկու<br>10զույգ բամբակյա գուլպա<br>5հատ ձմեռային շարֆերի, գլխարկների, ձեռնոցների հավաքածու<br>3հատ տղայի ձմեռային կարճ վերարկու |
| | | 300 դոլար |
| Եղեգիս | 55 | 4հատ ձմեռային աղջկա վերարկու<br>5զույգ տղայի կոշիկ<br>50զույգ բամբակյա գուլպա<br>10 հատ ձմեռային շարֆերի, գլխարկների, ձեռնոցների հավաքածու |
| | | 300 դոլար |
| Գողթանիկ | 16 | 16հատ ձմեռային շարֆերի, գլխարկների, ձեռնոցների հավաքածու<br>16զույգ բամաբակյա գուլպա<br>8 հատ աղջկա ձմեռային կարճ վերարկու<br>8հատ տղամարդու ներքնազգեստ |
| | | 200 դոլար |
| Հերմոն | 24 | 2հատ աղջկա կարճ վերարկու, 3հատ անձրևանոց,12զույգ տղայի կոշիկ<br>1զույգ աղջկա երկարաճիտ կոշիկ՝ արհեստական մորթով<br>24զույգ բամբակյա գուլպա |

| | | |
|---|---|---|
| | | 3հատ տղայի ձմեռային կարճ վերարկու |
| | | 250դոլար |

Լոռու Մարզ

| Գյուղ/դպրոց | Աշ. թիվը | Բաշխվող հագուստ , կոշիկ և այլ պարագաներ |
|---|---|---|
| Ձիլիջա | 40 | 5հատ աղջկա ձմեռային կարճ վերարկու<br>15զույգ տղայի կոշիկ<br>25զույգ բամբակյա գուլպա<br>1կոմպլեկտ աղջկա սպորտային հագուստ<br>1հատ տղամարդու տաբատ<br>1հատ կանացի շրջազգեստ<br>5հատ մանկական բրդյա բերետ<br>5հատ տղայի բրդյա սվիտր |
| | | 300 դոլար |
| Ակներ | 53 | 1կոմպլեկտ աղջկա սպորտային հագուստ<br>2կոմպլեկտ տղայի սպորտային հագուստ<br>1հատ տղամարդու տաբատ<br>7հատ մանկական բրդյա բերետ<br>5հատ տղայի բրդյա սվիտր |
| | | 270 դոլար |
| Նեղոց | 36 | 25զույգ բամբակյա գուլպա<br>15հատ ձմեռային շարֆերի, գլխարկների, ձեռնոցների հավաքածու<br>15զույգ տղայի կոշիկ<br>3հատ տղայի բրդյա սվիտր |
| | | 300 դոլար |
| Յաղպատ | 53 | 5զույգ տղայի կոշիկ<br>4հատ տղայի բրդյա սվիտր<br>1հատ կանացի բրդյա սվիտր<br>5հատ աղջկա բլուզ |
| | | 150դոլար |
| Կաճաճկուտ | 47 | 10հատ աղջկա բլուզ<br>2հատ կանացի սինթետիկ բլուզ<br>2.1կգ նորածին երեխայի բամբակյա հագուստ և պարագաներ |
| | | 200 դոլար |
| Արդվի | 16 | 16.7կգ խառը հագուստ<br>0.3կգմանկական շպարի պարագաներ<br>0.6կգ գործելու թել `ակրիլ |
| | | 100 դոլար |
| Ծաղկաշատ | 47 | 26.2կգ խառը հագուստ<br>0.6կգ գործելու թել`ակրիլ<br>0.8կգ մատիտներ |
| | | 103 դոլար |

Ընդամենը` 5723

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**14 մարտի 2014 թվականի N Մ- 223 -Ա**
**քաղ. Երևան**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱ-ԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2013 ԹՎԱԿԱՆԻ մայիսի 17-Ի N Մ-359-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻՆ ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔԻ ՄԱՍԻՆ («ՏԻՐԱՄԱՅՐ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿՈՒՍԱՍՏԱՆ» ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ)**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2014 թվականի մարտի 12-ի N 3/3.8-2/3693-14 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2014 թվականի մարտի 14-ի N ՎՄ/3-4/2854-14 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Սահմանել, որ «Տիրամայր Հայաստանի կուսաստան» բարեգործական կազմակերպության կողմից կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքն անմիջականորեն կապված է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2013 թվականի մայիսի 17-ի «Տիրամայր Հայաստանի կուսաստան» բարեգործական կազմակերպության կողմից իրականացվող «Անի Բեզիկյան» երիտասարդական կենտրոն» ծրագրի մասին» N Մ-359-Ա որոշմամբ հաստատված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

«Մագնոն» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 05501766) 2014 թվականի հունվարի 30-ին կնքված՝ N 01/14 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է մետաղական պարիսպի, դռների և պատուհանի ճաղավանդակների պատրաստում՝ 4,070,870 դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն ու Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
14 մարտի 2014 թվականի N Մ-224 -Ա
քաղ. Երևան**

# «ՀՈՎԱՐԴ ԿԱՐԱԳՅՈԶՅԱՆ» ԲԺՇԿԱԿԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ՝ 2014 ԹՎԱԿԱՆԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ «ԵՐԵԽԱՆԵՐԻ ԱՆՎՃԱՐ ԲԺՇԿԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ» ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ

---

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2014 թվականի փետրվարի 18-ի N 3/3.8-2/2272-14, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության 2014 թվականի փետրվարի 19-ի N 02/996-14, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության 2014 թվականի փետրվարի 13-ի N ԴԴ/22/1250-14, Հայաստանի Հանրապետության կառավարության առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2014 թվականի փետրվարի 13-ի N ՎՄ/3-4/1663-14, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետի 2014 թվականի փետրվարի 17-ի N 01/705-14, Սյունիքի մարզպետի 2014 թվականի փետրվարի 17-ի N 01/769-14 ու Լոռու մարզպետի 2014 թվականի փետրվարի 17-ի N 101/104.3.2/673-14 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Բարեգործական որակել «Հովարդ Կարագյոզյան» բժշկական բարեգործական հասարակական կազմակերպության (ՀՀ, քաղ. Երևան, Նորքի այգիներ, 180, ՀՎՀՀ՝ 01533153) կողմից իրականացվող՝ 469,780,800 դրամ ընդհանուր արժեքով «Երեխաների անվճար բժշկական օգնություն» բարեգործական ծրագիրը (կցվում է):

2. Սահմանել, որ սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի իրականացման նպատակով «Հովարդ Կարագյոզյան» բժշկական բարեգործական հասարակական կազմակերպության կողմից կնքված՝ ստորև նշված գործարքն անմիջականորեն կապված է նշված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝ «ԷՍՁԵԺ Ֆարմա» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 00433863) 2014 թվականի հունվարի 24-ին կնքված՝ N 02/2014 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է ատամնաբուժական պարագաների մատակարարում՝ 5,699,000 դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի:

3. «Հովարդ Կարագյոզյան» բժշկական բարեգործական հասարակական կազմակերպությանը՝



1) սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի իրականացման շրջանակներում մատակարար (կապալառու) կազմակերպությունների հետ կնքվելիք պայմանագրերի պատճենները ներկայացնել Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով՝ «Ավելացված արժեքի հարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի դրույթների համաձայն ավելացված արժեքի հարկից ազատվող ապրանքների ու ծառայությունների շրջանակը որոշելու համար.

2) մինչև յուրաքանչյուր եռամսյակին հաջորդող ամսվա 25-ը՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել տեղեկություններ տվյալ եռամսյակի ընթացքում նշված ծրագրի շրջանակներում կազմակերպության կողմից, ինչպես նաև կազմակերպությանը մատակարարված ապրանքների ու մատուցված ծառայությունների մասին, իսկ ծրագրի ավարտից հետո մեկամսյա ժամկետում՝ ամփոփ տեղեկություններ ծրագրի կատարման մասին:

4. Սույն որոշումն ուղարկել Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարություն, Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարություն, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե, Երևանի քաղաքապետին, Հայաստանի Հանրապետության Շիրակի, Սյունիքի, Լոռու մարզպետներին, Գյումրու, Վանաձորի ու Գորիսի քաղաքապետներին:

**ՆԱԽԱԳԱՀ** **Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ**

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է

«Հովարդ Կարագյոզյան» ԲԲՀԿ

…………Ավետիք Հարությունյանցի կողմից

«11» փետրվարի 2014թ.

«ՀՈՎԱՐԴ ԿԱՐԱԳՅՈԶՅԱՆ» ԲԺՇԿԱԿԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ 2014թ. ԸՆԹԱՑՔՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ «ՊԱՐԲԵՐԱԿԱՆ ՀԻՎԱՆԴՈՒԹՅԱՄԲ ԵՐԵԽԱՆԵՐԻ ԲՈՒԺՈՒՄ (ԱՆՎՃԱՐ ԴԵՂՈՐԱՅՔՈՎ ՄՇՏԱԿԱՆ ԱՊԱՀՈՎՈՒՄ)» ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳԻՐ

| | | |
|---|---|---|
| 1 | Ծրագրի նպատակը | Ծրագրի նպատակն է Պարբերական հիվանդությամբ տառապող երեխաների մշտական դեղորայքով ապահովումը՝ երիկամների վաղահաս ամիլոիդոզը-երիկամային անբավարարությունը և հաշմանդամությունը կանխելու համար: |
| 2 | Ծրագրի բարեգործական որակման նպատակը | Ծրագրի շրջանակներում, օրենքով սահմանված կարգով, օգտվել հարկային արտոնություններից |
| 3 | Բարեգործը | Հովարդ Կարագյոզյան Հիշատակի Ընկերակցություն (ԱՄՆ – Նյու-Յորք) |
| 4 | Ծրագիրը կատարողը | «Հովարդ Կարագյոզյան» բժշկական բարեգործական հասարակական կազմակերպություն՝ իրավաբանական հասցեն - ք. Երևան, Նորքի Այգիներ-180, հարկ վճարողի հաշվառման համարը՝ ՀՎՀՀ-01533153, «Արաբկիր» բժշկական համալիր, ՀՀ առողջապահության նախարարության Պարբերական հիվանդության մանկական հանրապետական կենտրոն: |
| 5 | Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը | Ծրագիրն իրականացվելու է ՀՀ բոլոր մարզերում, Երևան քաղաքում, ԼՂՀ-ում, հիմնական հետազոտությունները, բժշկական հսկողությունը և դեղորայքի բաշխումը կատարվելու է «Արաբկիր» բժշկական համալիրի Պարբերական հիվանդության մանկական հանրապետական կենտրոնի մասնագետների կողմից:<br>Ծրագրի բնագավառը - առողջապահական: |
| 6 | Ծրագրի բյուջեն | Ծրագիրը ֆինանսավորվում է ամերիկյան «Հովարդ Կարագյոզյան» հիշատակի ընկերակցության կողմից, որի ընդհանուր արժեքն է 35,186,130 ՀՀ դրամ:<br>դեղորայք - «կոլխիցին» 1 մգ - 630,000 հաբ (31,500 տուփ, 1տուփը 20 հաբ)՝ 35,186,130 ՀՀ դրամ ընդհանուր արժողությամբ: |



| | | |
|---|---|---|
| 7 | Բարեգործություն ստացողը | Շահառուներն են Երևան քաղաքի, ՀՀ բոլոր մարզերի և ԼՂՀ-ի պարբերական հիվանդությամբ հիվանդ՝ կենտրոնում հաշվառված և 2014թ. ընթացքում նոր հայտնաբերվող, 0-18 տարեկան երեխաները: |
| 8 | Ծրագրի իրականացման տևողությունը | Ծրագիրը շարունակական է: Աշխատանքի նշված ծավալներն ու ծախսերը նախատեսված են 2014թ. հունվարի 1-ից մինչև դեկտեմբերի 31-ը ժամկետի համար: |
| 9 | Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը | 2014թ. ծրագրով նախատեսվում է պարբերական հիվանդության մանկական հանրապետական կենտրոնում հաշվառված 2437 և նոր հայտնաբերված մոտ 200 0-18 տարեկան հիվանդների ընթացիկ հսկողություն և բուժում (անվճար մշտական դեղորայքի բաշխում) ամբողջ տարվա ընթացքում: Դեղորայքի համար անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը կազմում է 35,186,130 ՀՀ դրամ: |
| 10 | Ձեռք բերվող (ներմուծվող) ապրանքների ու ծառայու-թյունների համառոտ նկարագիրը, ծավալները և նախատեսվող գինը | «Հովարդ Կարագյոզյան» ԲԲՀԿ Երևանում գնելու է 630,000 հաբ ֆրանսիական «Կոլխիցին» 1մգ դեղորայքը և հանձնելու է պարբերական հիվանդության մանկական հանրապետական կենտրոնին՝ հիվանդներին անվճար բաշխելու համար:<br>«Մոդուս Ինէքս» ՍՊԸ - ի հետ 29.01.2014թ. կնքված «Կոլխիցին» 1մգ դեղորայքի մատակարարման № 5/2014 պայմանագիր 35,186,130 ՀՀ դրամ ընդհանուր արժողությամբ, առանց ԱԱՀ-ի: 20% ԱԱՀ-ն կազմում է 7,037,226 ՀՀ դրամ: |
| 11 | Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսերը | Կազմակերպական ծախսեր չկան: |
| 12 | Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, այլ կազմակերպությունների հետ | Ծրագիրը համաձայնեցված է ՀՀ և ԼՂՀ առողջապահության նախարարությունների, «Արաբկիր» բժշկական համալիրի և Պարբերական հիվանդության մանկական հանրապետական կենտրոնի տնօրինությունների հետ: |
| 13 | Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը | ՀՀ և ԼՂՀ առողջապահության նախարարություններ, ՀՀ մարզպետարանների առողջապահության վարչություններ , պարբերական հիվանդությամբ հիվանդ երեխաների ծնողներ, «Հովարդ Կարագյոզյան» ԲԲՀԿ և «Արաբկիր» բժշկական համալիրի տնօրինություններ, եռամսյակային և տարեկան հաշվետվություններ ՀՀ Կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովին: |

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

14 մարտի 2014 թվականի N Մ-225-Ա
քաղ. Երևան

## «ՀՈՎԱՐԴ ԿԱՐԱԳՅՈԶՅԱՆ» ԲԺՇԿԱԿԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ՝ 2014 ԹՎԱԿԱՆԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ «ՊԱՐԲԵՐԱԿԱՆ ՀԻՎԱՆԴՈՒԹՅԱՄԲ ԵՐԵԽԱՆԵՐԻ ԲՈՒԺՄԱՆ (ԱՆՎՃԱՐ ԴԵՂՈՐԱՅՔՈՎ ՄՇՏԱԿԱՆ ԱՊԱՀՈՎՈՒՄ)» ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ

---

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2014 թվականի փետրվարի 18-ի N 1/3.8-2/2269-14, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության 2014 թվականի փետրվարի 19-ի N 02/995-14, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության 2014 թվականի փետրվարի 13-ի N ԴԴ/22/1251-14, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2014 թվականի փետրվարի 13-ի N ՎՄ/3-4/1662-14, եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ  է.***

1. Բարեգործական որակել «Հովարդ Կարագյոզյան» բժշկական բարեգործական հասարակական կազմակերպության (ՀՀ, քաղ. Երևան, Նորքի այգիներ, 180, ՀՎՀՀ՝ 01533153) կողմից իրականացվող՝ 35,186,130 դրամ ընդհանուր արժեքով «Պարբերական հիվանդությամբ երեխաների բուժման (անվճար դեղորայքով մշտական ապահովում)» բարեգործական ծրագիրը (կցվում է):

2. Սահմանել, որ սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի իրականացման նպատակով «Հովարդ Կարագյոզյան» բժշկական բարեգործական հասարակական կազմակերպության կողմից կնքված՝ ստորև նշված գործարքն անմիջականորեն կապված է նշված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

«Մոդուս Իմէքս» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 00874298) 2014 թվականի հունվարի 29-ին կնքված՝ N 05/2014 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է «Կոլխիցին» 1մգ դեղորայքի մատակարարում՝ 35,186,130 դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի:

3. «Հովարդ Կարագյոզյան» բժշկական բարեգործական հասարակական կազմակերպությանը՝ ծրագրի ավարտից հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկություններ ծրագրի կատարման մասին:



4. Սույն որոշումն ուղարկել Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարություն, Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարություն, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե, Երևանի քաղաքապետին և Հայաստանի Հանրապետության Արագածոտնի, Արարատի, Արմավիրի, Գեղարքունիքի, Լոռու, Կոտայքի, Շիրակի, Սյունիքի, Վայոց ձորի, Տավուշի մարզպետներին:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է

«Հովարդ Կարագյոզյան» ԲԲՀԿ

..............Ավետիք Հարությունյանցի կողմից

«.11.» փետրվարի.. 2014.թ.

## «ՀՈՎԱՐԴ ԿԱՐԱԳՅՈԶՅԱՆ» ԲԺՇԿԱԿԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ 2014թ. ԸՆԹԱՑՔՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ «ԵՐԵԽԱՆԵՐԻ ԱՆՎՃԱՐ ԲԺՇԿԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ» ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳԻՐ

| | | |
|---|---|---|
| 1 | Ծրագրի նպատակը | Հայաստանի և ԼՂՀ տարբեր մարզերի մինչև 14 տարեկան երեխաների անվճար ատամնաբուժական և ակնաբուժական օգնություն ստանալու հնարավորության ապահովումը: |
| 2 | Ծրագրի բարեգործական որակման նպատակը | Ծրագրի շրջանակներում, օրենքով սահմանված կարգով, օգտվել հարկային արտոնություններից |
| 3 | Բարեգործը | Հովարդ Կարագյոզյան Հիշատակի Ընկերակցություն (ԱՄՆ – Նյու-Յորք) |
| 4 | Ծրագիրը կատարողը | «Հովարդ Կարագյոզյան» բժշկական բարեգործական հասարակական կազմակերպություն<br>«Հովարդ Կարագյոզյան» բժշկական բարեգործական հասարակական կազմակերպության միջոցներով հիմնված 6 մասնաճյուղ մանկական ատամնաբուժական դարմանատները և 6 ակնաբուժական կաբինետները, որտեղ պայմանագրային հիմունքներով աշխատում են կազմակերպության կողմից վարձատրվող, տվյալ քաղաքներում բնակվող 31 ատամնաբույժներ, 6 ակնաբույժներ, 53 միջին բուժաշխատողներ (բուժքույրեր), 10 կրտսեր բուժաշխատողներ, 8 վարչական և 30 օժանդակ աշխատակիցներ:<br>Դարմանատներից 3-ը (Երևանի-2 և Վանաձորի) աշխատում են երկհերթ, իսկ 3 -ը (Գյումրիի,Գորիսի և Ստեփանակերտի)՝ մեկ հերթով:<br>Դարմանատներում գործում են 21 ընդհանուր ատամնաբուժական, 6 ակնաբուժական, 6 ռենտգեն, 6 ախտահանման կաբինետներ և 6 գրանցման բաժիններ՝ բոլորն էլ հագեցած ժամանակակից սարքավորումներով, գործիքներով և բուժանյութերով:<br>«Հովարդ Կարագյոզյան» բժշկական բարեգործական հասարակական կազմակերպության իրավաբանական հասցեն է՝ ք.Երևան, Նորքի Այգիներ-180, հարկ վճարողի հաշվառման համարը՝ ՀՎՀՀ-01533153: |
| 5 | Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը | ՀՀ մայրաքաղաք Երևանում, Շիրակի մարզի Գյումրի, Սյունիքի մարզի Գորիս, Լոռու մարզի Վանաձոր և ԼՂՀ Ստեփանակերտ քաղաքներում առողջապահության բնագավառում |
| 6 | Ծրագրի բյուջեն | Ծրագիրն ամբողջությամբ ֆինանսավորվում է ամերիկյան «Հովարդ Կարագյոզյան» Հիշատակի ընկերակցության կողմից:<br>2014թ. համար նախատեսված են 469,780,800 դրամի ծախսեր՝ ըստ եռամսյակների բաշխված հավասարաչափ՝ 25-ական տոկոս (117,445,200 -ական դրամ), իսկ ըստ ուղղությունների բաշխված է հետևյալ ձևով. |

| | Դրամ |
|---|---|
| ա) բուժ.սարքավորումներ, գործիքներ, պահեստամասեր, կահույք, ծախսվող ատամնաբուժական պարագաներ, դեղորայք, ակնոցներ, օպտիկական ոսպնյակներ. | 93 146 400 |
| բ) բուժանձնակազմի աշխատավարձեր, հարկեր. | 285 492 000 |
| գ) վարչական աշխատակիցների աշխատավարձեր, հարկեր. | 35 328 000 |
| դ) կոմունալ ծախսեր (6 կլինիկաների էլեկտրաէներգիա, ջուր, հեռախոսավարձ, ինտերնետ, աղբահանություն, գազ). | 12 362 400 |
| ե) տրանսպորտային ծախսեր | 3 794 400 |
| զ) շենքերի պահպանության ծախսեր | 5 059 200 |
| է) գրասենյակային ծախսեր | 2 325 600 |
| ը) աշխատակիցների բժշկական ապահովագրության, շենքերի ու ավտոմեքենաների ապահովագրության, ադմինիստրատիվ և աուդիտորական ծախսեր | 21 236 400 |
| թ) գործուղման ծախսեր | 2 244 000 |
| ժ) ճառագայթային անվտանգության, սանիտարական վերահսկողութան ծախսեր | 4 610 400 |
| ժա) գույքահարկ, հողի հարկ, բանկային գործառույթների և չնախատեսված ծախսեր | 4 182 000 |
| Ընդամենը | 469 780 800 |

| | | |
|---|---|---|
| 7 | Բարեգործություն ստացողը | Շահառուներն են ՀՀ մայրաքաղաք Երևանում, Շիրակի մարզի Գյումրի, Սյունիքի մարզի Գորիս, Լոռու մարզի Վանաձոր և ԼՂՀ Ստեփանակերտ քաղաքներում բնակվող մինչև 14 տարեկան բոլոր երեխաները, ովքեր կամավոր դիմում են մեր դարմանատներ ատամնաբուժական և ակնաբուժական օգնություն ստանալու նպատակով: Սպասարկվում են նաև նույն մարզերի սահմաններում տվյալ քաղաքների տարածքից դուրս բնակվող հաշմանդամ, ծնողազուրկ և սոցիալապես անապահով ընտանիքների մինչև 14 տարեկան երեխաները: |
| 8 | Ծրագրի իրականացման տևողությունը | Ծրագիրը շարունակական է: Աշխատանքի նշված ծավալներն ու ծախսերը նախատեսված են 2014թ. հունվարի 1-ից մինչև դեկտեմբերի 31-ը ժամկետի համար: |
| 9 | Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը | Ծրագրի շրջանակներում 2014թ. նախատեսվում է լիարժեքորեն ապահովել ՀՀ -ում գործող ատամնաբուժական կլինիկաներում հաշվառված 85,394 և ԼՂՀ-ում հաշվառված 6,743 երեխաների ընթացիկ ատամնաբուժական օգնության և կանխարգելիչ միջոցառումների անվճար իրականացումը: Տարվա ընթացքում ՀՀ-ում նոր հաշվառվող 11,400-11,800 և ԼՂՀ-ում նոր հաշվառվող 800-900 երեխաների լրիվ ատամնաբուժական սանացիայի և կանխարգելիչ միջոցառումների անվճար իրականացումը:<br>ՀՀ-ում ակնաբուժական 5 կաբինետներում նախատեսվում է հաշվառված 6,207 և ԼՂՀ-ում հաշվառված 756 դիսպանսեր հիվանդների ընթացիկ ակնաբուժական օգնության և կանխարգելիչ միջոցառումների իրականացում, ՀՀ-ում նոր հաշվառվող 1,600-1,700 և ԼՂՀ-ում նոր հաշվառվող 150-160 երեխաների ակնաբուժական մանրակրկիտ հետազոտությունների և բուժման կազմակերպում, ակնոցի անհրաժեշտություն ունեցող ՀՀ-ից 1,380-1,420 և ԼՂՀ-ից 135-150 երեխաների անվճար ակնոցներով ապահովում, օպտիկական ոսպնյակների անհրաժեշտություն ունեցող 10 - 15 երեխաների անվճար ոսպնյակներով ապահովում և մշտական դեղորայքային բուժման անհրաժեշտություն ունեցող ՀՀ-ից 880-1,100 և ԼՂՀ-ից 120-140 երեխաների անվճար դեղորայքով և համապատասխան բուժական պրոցեդուրաներով ապահովում:<br>Ընդհանուր առմամբ 2014թ. նախատեսվում է ՀՀ-ում 108,000-110,000 և ԼՂՀ-ում 8,000-9,000 ատամնաբուժական, և ՀՀ-ում 21,000- 22,000 և ԼՂՀ-ում 2,200-3,000 ակնաբուժական հաճախումների լիարժեք ապահովում:<br>Նշված միջոցառումների իրականացման համար ՀՀ-ում նախատեսված ֆինանսական միջոցների ծավալը կազմում է 432,652,800 ՀՀ դրամ, իսկ ԼՂՀ-ում՝ 37,128,000 ՀՀ դրամ: |



| | | |
|---|---|---|
| 10 | Ձեռք բերվող (ներմուծվող) ապրանքների ու ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները և նախատեսվող գինը | 2014թ. բուժսարքավորումների, գործիքների, դեղորայքի, ակնոցների և ծախսվող ատամնաբուժական պարագաների մատակարարման համար պայմանագրեր ենք կնքելու ԱՄՆ «Շայն» ընկերության, Երևանում «Էլդեքս» ՓԲԸ, «Էսզեթ Ֆարմա» ՍՊԸ, ՀՁ «Լաէկա» ՍՊԸ, «Մայր Օպտիկ» ՍՊԸ հետ:<br>ԱՄՆ-ից պիտի գնվեն 16,116,000 դրամի բժշկական պարագաներ և դեղորայք, որոնք Երևան են տեղափոխվելու Միացյալ Հայկական Ֆոնդի միջոցով, իսկ Երևանում պիտի գնվեն 77,030,400 դրամի բժշկական պարագաներ, սարքեր, կահույք, դեղորայք, ակնոցներ, ոսպնյակներ:<br><br>«ԷսՁեթ Ֆարմա» ընկերության հետ 24.01.2014թ. կնքված ատամնաբուժական դեղամիջոցների մատակարարման N02/2014 պայմանագիր 5,699,000 դրամ ընդհանուր արժողության, առանց ԱԱՀ-ի: 20%- ԱԱՀ-ը կազմում է 1,139,800 դրամ: |
| 11 | Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսերը | 81,425,200 դրամ (որից 35,328,000 դրամը վարչական աշխատակիցների աշխատավարձեր և 46,097,200 դրամը՝ տնտեսական), որը կազմում է ծրագրի համար նախատեսված ընդհանուր ծախսերի (469,780,800) 17,33%: |
| 12 | Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, այլ կազմակերպությունների հետ | Ծրագիրը համաձայնեցված է ՀՀ և ԼՂՀ առողջապահության նախարարությունների, Երևանի քաղաքապետարանի և Շիրակի, Սյունիքի, Լոռու մարզպետարանների առողջապահության վարչությունների հետ: |
| 13 | Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը | ՀՀ օրենսդրության շրջանակներում ՀՀ և ԼՂՀ առողջապահության նախարարություններ, Երևանի քաղաքապետարանի և Շիրակի, Լոռու, Սյունիքի մարզպետարանների առողջապահության վարչություններ, ՀՀ հարկային ծառայություն, ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգող հանձնաժողովին եռամսյակային և տարեկան հաշվետվությունների ներկայացում, ամենամյա աուդիտ, բուժվող երեխաների ծնողներ: |

3/19.11

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

14 մարտի 2014 թվականի N Մ- 226 -Ա
քաղ. Երևան

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ «ԱՇՏԱՐԱԿԻ ԲԺՇԿԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ՊՈԱԿ-Ի ՀԱՍՑԵՈՎ ՍՏԱՑՎԱԾ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2014 թվականի փետրվարի 25-ի N 3/3.8-2/2808-14, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության 2014 թվականի փետրվարի 26-ի N ՍՔ/22/1707-14 ու Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2014 թվականի փետրվարի 25-ի N ՎՄ/3-4/2060-14 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ  է.***

1. Բարեգործական որակել Ռուսաստանի Դաշնությունից Ռուսաստանի Դաշնության սպառողների իրավունքների պաշտպանության ոլորտում հսկողություն իրականացնող դաշնային ծառայության (Роспотребнадзор) կողմից, որպես նվիրաբերություն, Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի «Աշտարակի բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի հասցեով «Ռոսպոտրեբնադզոր»-ի և Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության միջև կնքված վարակիչ հիվանդությունների ոլորտում համագործակցության վերաբերյալ պայմանագրի շրջանակներում ստացված բեռի (լաբորատոր սարքեր և սարքավորումներ՝ 8 տեղ, 481,800 կգ ընդհանուր քաշով, 2,302,740 ռուսական ռուբլուն համարժեք դրամ արժեքով՝ ներառյալ փոխադրման ծախսերը, ցանկը կցվում է, «Արարատյան» ՏՄ) ներմուծման ծրագիրը:

2. Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի «Աշտարակի բժշկական կենտրոն» ՊՈԱԿ-ին՝ նշված բեռի համապատասխան ձևակերպումից հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկատվություն:

3. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

### Ցանկ
### լաբորատոր սարքերի և սարքավորումների

| # | Անվանում | Արտադրման երկիր | Չափման միավոր | Քանակ | Չափս, մմ | Քաշ նետտո, կգ | Քաշ բրուտտո, կգ | Արժեք, ռուս. ռուբլի |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | **Invoice N014** | | | | | | | |
| 1 | Ֆոտոմետր Mark միկրոպլանշետների համար, iMark-ի կատարման, պարագաներով | ԱՄՆ | հատ | 1 | 346 x 377 x 164 | 6.00 | 7.1 | 576330 |
| 2 | Միկրոպլանշետների լվացման սարքավորում "ВОШЕР" PW40 (Microplate Washer PW40) | Ֆրանսիա | հատ | 1 | 530 x 368 x 243 | 10.00 | 15.2 | 514673 |
| 3 | Թերմոշեյկեր PST-60HL-4 | Լատվիայի Հանրապետություն | հատ | 1 | 380 x 390 x 140 | 8.500 | 10.2 | 82821 |
| 4 | 1-կանալանի մեխանիկական կաթոցիկներ BIOHIT փոփոխական ծավալի 2-20 մկլ | Ֆինլանդիա | հատ | 1 | 300 X 80 X 45 | 0.240 | 2.3 | 7632 |
| 5 | 1-կանալանի մեխանիկական կաթոցիկներ BIOHIT փոփոխական ծավալի 20-200 մկլ | Ֆինլանդիա | հատ | 1 | 300 X 80 X 45 | 0.220 | | 7632 |
| 6 | 1-կանալանի մեխանիկական կաթոցիկներ BIOHIT փոփոխական ծավալի 100-1000 մկլ | Ֆինլանդիա | հատ | 1 | 300 X 80 X 45 | 0.222 | | 7632 |
| 7 | 1-կանալանի մեխանիկական կաթոցիկներ BIOHIT փոփոխական ծավալի 500-5000 մկլ | Ֆինլանդիա | հատ | 1 | 300 X 80 X 45 | 0.230 | | 7632 |
| 8 | 8-կանալանի մեխանիկական կաթոցիկներ BIOHIT փոփոխական ծավալի 30-300 մկլ | Ֆինլանդիա | հատ | 1 | 300 X 130 X 45 | 0.290 | | 20839 |
| 9 | Ծռատիվ կաթոցիկների համար "Линейная стойка Biohit" | Ֆինլանդիա | հատ | 1 | 290 X 250 X 60 | 0.500 | | 2691 |
| 10 | Բժշկական սարքավորում արյան, պատվաստանյութերի և դեղերի բաղադրատարրերի պահպանման համար MDF-U3386S տեսակի | Ճապոնիա | հատ | 1 | 860 × 1050 × 2010 | 275.000 | 286 | 704341 |
| 11 | Դեղագործական սառնարան ХФ-400-1 "ПОЗИС" | Տատարստանի Հանրապետություն | հատ | 1 | 1950 x 600 | 89.00 | 94 | 41000 |
| | **Invoice N 038** | | | | | | | |
| 1 | Մաքրված և ներարկման ջրի ստացման սարքավորում УВОИ-"М-Ф" по ТУ 9452-001-46824383-00 | Ռուսաստանի Դաշնություն | հատ | 1 | 900 x 220 x 450 | 40 | 67 | 329517 |

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ**
**ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

**14 մարտի 2014 թվականի N Մ- 227 -Ա**
**քաղ. Երևան**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱ-ԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2013 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 15-Ի N Մ-159-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿ-ՆԵՐՈՒՄ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ՄԱՍԻՆ (Ֆրանսիայի «Բժիշկներ՝ առանց սահմանների» միության հայաստանյան մասնաճյուղ)

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2014 թվականի փետրվարի 14-ի N 3/3.8-2/2168-14, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության 2014 թվականի փետրվարի 11-ի N ԴԴ/22/1127-14 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2014 թվականի փետրվարի 13-ի N ՎՄ/3-4/1615-14 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ  է.***

1. Սահմանել, որ Ֆրանսիայի «Բժիշկներ՝ առանց սահմանների» միության կողմից ուղարկված՝ Ֆրանսիայի «Բժիշկներ՝ առանց սահմանների» միության հայաստանյան մասնաճյուղի հասցեով Բելգիայից ստացված բեռը (դեղորայք՝ TMC207 100 մգ, 2 արկղ, 784 եվրոյին համարժեք դրամ արժեքով, փոխադրման ծախսերը կազմել են 117.4 եվրո, «ՄՓ և ՍԱՓԱՄ» ՄՏ) ներմուծվում է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2013 թվականի մարտի 15-ի «Ֆրանսիայի «Բժիշկներ՝ առանց սահմանների» միության հայաստանյան մասնաճյուղի կողմից իրականացվող «Տուբերկուլյոզի և դեղորայքակայուն տուբերկուլյոզի վերահսկման ինտեգրացված ծրագրի ընդլայնումը Հայաստանի Հանրապետությունում» ծրագրի մասին» N Մ-159-Ա որոշմամբ հաստատված ծրագրի շրջանակներում:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

**ՆԱԽԱԳԱՀ** **Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**

**14 մարտի 2014 թվականի N Մ- 228 -Ա**

**քաղ. Երևան**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2013 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 15-Ի N Մ-159-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ՄԱՍԻՆ** (Ֆրանսիայի «Բժիշկներ՝ առանց սահմանների» միության հայաստանյան մասնաճյուղ) (1)

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2014 թվականի փետրվարի 20-ի N 3/3.8-2/2528-14, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության 2014 թվականի փետրվարի 19-ի N ԴԴ/22/1466-14 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2014 թվականի փետրվարի 21-ի N ՎՄ/3-4/1963-14 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ  է.***

1. Սահմանել, որ Ֆրանսիայի «Բժիշկներ՝ առանց սահմանների» միության կողմից ուղարկված՝ Ֆրանսիայի «Բժիշկներ՝ առանց սահմանների» միության հայաստանյան մասնաճյուղի հասցեով Միացյալ Թագավորությունից ստացված բեռը (մարդկային շիճուկ՝ 1տեղ, 0.1 կգ, ընդհանուր քաշով, 10 ֆունտ ստերլինգին համարժեք դրամ արժեքով, փոխադրման ծախսերը կազմել են 40 ֆունտ ստերլինգ, «ՄՓ և ՍԱՓԱՄ» ՄՏ) ներմուծվում է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2013 թվականի մարտի 15-ի «Ֆրանսիայի «Բժիշկներ՝ առանց սահմանների» միության հայաստանյան մասնաճյուղի կողմից իրականացվող «Տուբերկուլոզի և դեղորայքակայուն տուբերկուլոզի վերահսկման ինտեգրացված ծրագրի ընդլայնումը Հայաստանի Հանրապետությունում» ծրագրի մասին» N Մ-159-Ա որոշմամբ հաստատված ծրագրի շրջանակներում:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

**ՆԱԽԱԳԱՀ** **Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**

**14 մարտի 2014 թվականի N Մ- 229 -Ա**
**քաղ. Երևան**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2013 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 15-Ի N Մ-159-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻՆ ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔԻ ՄԱՍԻՆ («Բժիշկներ՝ առանց սահմանների» միության հայաստանյան մասնաճյուղ)**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2014 թվականի մարտի 3-ի N 3/3.8-2/3066-14 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2014 թվականի փետրվարի 28-ի N ՎՄ/3-4/2253-14 եզրակացությունները,* **ո ր ո շ ու մ է.**

1. Սահմանել, որ «Ֆրանսիայի Բժիշկներ՝ առանց սահմանների» միության հայաստանյան մասնաճյուղի կողմից (ՀՎՀՀ՝ 01538594) կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքն անմիջականորեն կապված է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2013 թվականի մարտի 15-ի «Ֆրանսիայի «Բժիշկներ՝ առանց սահմանների» միության հայաստանյան մասնաճյուղի կողմից իրականացվող «Տուբերկուլյոզի և դեղորայքակայուն տուբերկուլյոզի վերահսկման ինտեգրված ծրագրի ընդլայնումը Հայաստանի Հանրապետությունում» ծրագրի մասին» N Մ-159-Ա որոշմամբ հաստատված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

«Վահագն Մելիք-Մարտիրոսյան» ԱՁ-ի հետ (ՀՎՀՀ՝ 21304935) 2014 թվականի փետրվարի 14-ին կնքված N ՓԱ140203 հաշվում նշված գործարքը, որով նախատեսվում է համակարգչի, համակարգչային ծրագրերի, տպիչի և պրոյեկտորի ձեռքբերում՝ 1,040,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

**ՆԱԽԱԳԱՀ** **Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

**Ո Ր Ո Շ Ու Մ**

**14 մարտի 2014 թվականի N Մ- 230 -Ա**

**քաղ. Երևան**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱ-ԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2013 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 24-Ի N Մ-1308-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻՆ ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ** («Հայկական Կարիտաս» բարեսիրական հասարակական կազմակերպություն)

---

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2014 թվականի փետրվարի 24-ի N 3/3.8-2/2681-14, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2014 թվականի փետրվարի 18-ի N ՎՄ/3-4/1825-14 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Սահմանել, որ «Հայկական Կարիտաս» բարեսիրական հասարակական կազմակերպության կողմից կնքված՝ ստորև նշված պայմանագրերով նախատեսված գործարքներն անմիջականորեն կապված են Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2013 թվականի դեկտեմբերի 24-ի «Հայկական Կարիտաս» բարեսիրական հասարակական կազմակերպության կողմից իրականացվող «Հումանիտար օգնություն սիրիահայ փախստականներին» ծրագրի մասին» N Մ-1308-Ա որոշմամբ հաստատված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունեն զգալի նշանակություն՝

1) «Ալեքս Գրիգ» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 01842346) 2014 թվականի հունվարի 16-ին կնքված 133/HASAR/2013/04/02 և 133/HASAR/2013/04/03 պայմանագրերում նշված գործարքները, որոնցով նախատեսվում է սննդամթերքի ձեռքբերում՝ 33,000,000 դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի և սանիտարահիգիենիկ պարագաների ձեռքբերում՝ 16,500,000 դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի.

2) «Ալֆա-Ֆարմ» ՓԲԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 05507136) 2014 թվականի հունվարի 14-ին կնքված 133/HASAR/2013/04/01 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է դեղորայքի ձեռքբերում՝ 16,500,000 դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի.

3) «Էքսիս Ռիթեյլ» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 02603175) 2014 թվականի հունվարի 30-ին կնքված 133/HASAR/2013/04/04 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է հագուստի ձեռքբերում՝ 16,500,000 դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի:

3. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության սփյուռքի նախարարություն, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

**ՆԱԽԱԳԱՀ** **Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**

**14 մարտի 2014 թվականի N Մ- 231 - Ա**

**քաղ. Երևան**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2012 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 24-Ի N Մ-167-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻՆ ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ** (Միսիոներների բարեգործական կազմակերպության հայկական մասնաճյուղ)

---

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2014 թվականի փետրվարի 17-ի N 3/3.8-2/2254-14 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2014 թվականի փետրվարի 13-ի N ՎՄ/3-4/1653-14, եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ  է.***

1. Սահմանել, որ Միսիոներների բարեգործական կազմակերպության հայկական մասնաճյուղի կողմից կնքված՝ ստորև նշված պայմանագրերով նախատեսված գործարքներն անմիջականորեն կապված են Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2012 թվականի փետրվարի 24-ի Միսիոներների բարեգործական կազմակերպության հայկական մասնաճյուղի կողմից իրականացվող «Հաշմանդամ երեխաների խնամք և բուժում» ծրագրի մասին» N Մ-167-Ա որոշմամբ հաստատված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունեն զգալի նշանակություն՝

1) «ԱրմենՏել» ՓԲԸ-ի «Նոր Նորք» տեղամասի հետ (ՀՎՀՀ՝ 02500052) 2006 թվականի սեպտեմբերի 19-ին կնքված N 010899813 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է 2014 թվականի փետրվարի 1-ից մինչև դեկտեմբերի 31-ը ընկած ժամանակահատվածում հեռախոսակապի ծառայությունների մատուցում՝ 458.300 դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի.

2) «Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ-ի «Հյուսիս» մասնաճյուղի հետ (ՀՎՀՀ՝ 01520882) 2008 թվականի սեպտեմբերի 19-ին կնքված N 370015 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է 2014 թվականի փետրվարի 1-ից մինչև դեկտեմբերի 31-ը ընկած ժամանակահատվածում էլեկտրաէներգիայի մատակարարման ծառայությունների մատուցում՝ 229.170 դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի.

3) «Երևան Ջուր» ՓԲԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 01555351) 2007 թվականի մարտի 1-ին կնքված N 75-260 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է 2014 թվականի



փետրվարի 1-ից մինչև դեկտեմբերի 31-ը ընկած ժամանակահատվածում խմելու ջրի մատակարարում՝ 229.170 դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի.

4) «ՀայՌուսգազարդ» ՓԲԸ-ի Երևանի ԳԳՄ-ի հետ (ՀՎՀՀ՝ 00046317) 2007 թվականի փետրվարի 1-ին կնքված N Կ.017.01.07.4507 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է 2014 թվականի փետրվարի 1-ից մինչև դեկտեմբերի 31-ը ընկած ժամանակահատվածում գազամատակարարման ծառայությունների մատուցում՝ 916.670 դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

**ՆԱԽԱԳԱՀ** **Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

14 մարտի 2014 թվականի N Մ- 232 -Ա
քաղ. Երևան

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ «ՁԻԱՀ-Ի ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ՊՈԱԿ-Ի ՀԱՑԵՈՎ ՍՏԱՑՎԱԾ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ

---

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2014 թվականի փետրվարի 17-ի N 3/3.8-2/2169-14, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության 2014 թվականի փետրվարի 5-ի N ԴԴ/22/887-14 ու Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2014 թվականի փետրվարի 13-ի N ՎՄ/3-4/1633-14 եզրակացությունները,* ***ո ր ո շ ո ւ մ է.***

1. Բարեգործական որակել Ռուսաստանի Դաշնությունից Ռուսաստանի Դաշնության սպառողների իրավունքների պաշտպանության ոլորտում հսկողություն իրականացնող դաշնային ծառայության (Роспотребнадзор) կողմից, որպես նվիրաբերություն, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության «ՁԻԱՀ-ի կանխարգելման հանրապետական կենտրոն» ՊՈԱԿ-ի հասցեով «Ռոսպոտրեբնադզոր»-ի և Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության միջև կնքված վարակիչ հիվանդությունների ոլորտում համագործակցության վերաբերյալ պայմանագրի շրջանակներում ստացված բեռի (լաբորատոր սարքեր և սարքավորումներ՝ 40 տեղ, 2,805.5 կգ ընդհանուր քաշով, 15,312,394 ռուսական ռուբլուն համարժեք դրամ արժեքով՝ ներառյալ փոխադրման ծախսերը, ցանկը կցվում է, «Արարատյան» ՏՄ) ներմուծման ծրագիրը:

2. Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության «ՁԻԱՀ-ի կանխարգելման հանրապետական կենտրոն» ՊՈԱԿ-ին՝ նշված բեռի համապատասխան ձևակերպումից հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկատվություն:

3. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

## Ցանկ
## լաբորատոր սարքերի և սարքավորումների

| # | Անվանում | Արտադրման երկիր | Չափման միավոր | Քանակ | Չափս, մմ | Քաշ նետտո, կգ | Քաշ բրուտտո, կգ | Արժեք, ռուս. ռուբլի |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | **Invoice N 022** | | | | | | | |
| 1 | Լաբորատոր սարքավորում կենսաբանական նմուշների հետազոտման համար էլեկտրոֆորեզի եղանակով, էլեկտրոֆորետիկ բջիջ "Sub-Cell GT" | ԱՄՆ | հատ | 1 | 70 x 70 | 0.3 | 3.9 | **55483** |
| 2 | Լաբորատոր սարքավորում կենսաբանական նմուշների հետազոտման համար էլեկտրոֆորեզի եղանակով, "Gel Doc" հելերի փաստաթղթավորման համակարգ, պարագաներով | ԱՄՆ | հատ | 1 | 600 x 360 x 960 | 32 | 50.9 | **667937.36** |
| 3 | Թերմոցիկլեր նուկլեինաթթուների ամպլիֆիկացիայի համար T100 (T100 Thermal Cycler) | ԱՄՆ | հատ | 1 | 260 x 470 x 230 | 9 | 11.2 | **205782.2** |
| 4 | Լաբորատոր ցենտրիֆուգ սառեցումով LMC-4200R պարագաներով և ռոտոր R-2-ով | Լատվիայի Հանրապետություն | հատ | 1 | 495 x 420 x 235 | 14 | 16 | **257110** |
| 5 | Լաբորատոր միկրոցենտրիֆուգ MiniSpin պարագաներով | ԱՄՆ | հատ | 1 | 225 x 240 x 120 | 4.3 | 5.4 | **75067** |
| 6 | Աբակտերիալ օդային միջավայրի բոքս ԴՆԹ-փորձանմուշների ՊՇՌ հետազոտության համար БАВ-ПЦР-"Ламинар-С" | ՌԴ | հատ | 1 | 1020 x 600 x 800 | 50 | 95 | **81529** |
| 7 | Աբակտերիալ օդային միջավայրի բոքս օդակաթիլային ճանապարհով փոխանցվող պաթոգեն մանրէներից օպերատորին պաշտպանելու համար БАВп-01-"Ламинар-с"-1,2 (221.120) | ՌԴ | հատ | 1 | 1200 x 770 x 2135 | 235 | 297 | **320425** |

| | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| 8 | Նուկլեինաթթուների և սպիտակուցների անջատման ավտոմատ կայան QiaCube, պարագաներով | Գերմանիա | հատ | 1 | 850x850x1000 | 74.5 | 114 | 2136107.44 |
| 9 | Լաբորատոր ցենտրիֆուգ սառեցումով Mikro 220R ռոտորով | Գերմանիա | հատ | 1 | 313 x 330 x 650 | 42 | 47.6 | 489545 |
| 10 | Ցենտրիֆուգ "Фуга/вортекс Комбиспин FVL-2400N" | Լատվիայի Հանրապետություն | հատ | 1 | 190 x 235 x 125 | 2.1 | | 13769 |
| 11 | Թերմոստատ TDB-120 տեսակի | Լատվիայի Հանրապետություն | հատ | 1 | 210 x 228 x 110 | 3 | | 32117 |
